Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

02.6
-31

Սերտեր
641

№ 8/XVI

Սերիա
641

ՆԵՇՄԱՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

Հ. ՂԵՒՈՆԴԻ Վ. Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

Ա. ՊՐԱԿ.

641-2009

(5022-50 գ)

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

Լ 6637

Պետրոսյան
ՍԵՐԵԲՐԱԿԵԼՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ՀՍՍՌ Арм.ССР

ARMÉNIE

PINGHIAN. PONT SUR L'EUPHRATE

ԿԱՄՈՒՐՋ ԲԵՆԳԵԱՆԱՑ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

— ՊԱՏԿԵՐ Ա. Բ. Գ. —

ԿԱՄՈՒՐՋ ԲԻՆԿԵԱՆԱՑ. — ԾԱԿՔԱՐ. — ԱՆՑՔ ԵՓՐԱՏԱՑ.

Հին աշխարհի թէ սրբազան և թէ քաղաքական կամ պետական պատմութեան և անցից մէջ ամենէն գլխաւոր յիշատակուած և յիշատակելի գետն Եփրատ, մեր աշխարհին Բարձր Հայոց կամ Կարնոյ նահանգին և գաւառին արևելեան հիւսիսային ծայրէն բղխելով դէպ յարևմուտս հարաւախառն կ'ինջնայ, և մեր աղգին բնակած ընդարձակ տեղուանքը երկու բաժնելով Մեծ և Փոքր Հայք անուամբ կը կտրէ իրարմէ։ Եւ յիրաւի կը կտրէ. վասն զի Տօրոս լերանց մեծ բազուկ մը՝ Անտիտօրոս ըսուած՝ այս սահմաններուս վրայ կը տարածուի, գետոյն հակառակ ընթացքով (յարևմտեան հարաւոյ յարևելեան հիւսիս)։ Եփրատ գետ մեր աշխարհին բարձրագոյն դաշտագաւառէն թափ ու թափ սահելով, քանի որ կ'ինջնայ՝ թէ ջրերուն շատութեամբը և թէ երկրին ցածնալովն՝ ուժովնալով, այս երկու Հայոց սահմանաց մէջ ամենէն աւելի ոյժ կը բանեցընէ, այդ անտիտաւրեան բնակառոյց պարսպաց հանդիպելով.

ժայռք և ջուրք դիմադէմ կամ մէջ ընդ մէջ կը զարնուին կը կռուրտին, և այն կակուղ ջուրերն պնդապինդ ապառաժ քարերու յաղթող կ'երևան. կը փորեն կը խորեն զանոնք, իրենց ճամբայ կը բանան, ի հարկէ ի սկզբան նեղ և դժուարին, զոր մեծամեծ ժայռք և կոշկոռք կարծես հակառակելով արգելուլ կը ջանան. Եփրատայ ալիքն ժամերով կը կռուին, ու փրփրալով քարէ քար զարնուելով փշրելով ու մրմռալով առաջ կ'անցնին։ Եփրատ աջ կողմէն (ի Փոքր Հայոց) Գարապունար գետակն օժանդակ ընդունելով ճախակողմը Մեծ Հայոց մէջ Պաշդաշ գիւղին դիմաց, խորաձոր յատակի մը վրայէն թաւալելով կը հասնի ի Բինկեան քաղաքաւան Հայոց. անկէ անդին քիչ մը լայն հովիտ մը գտնելով կը սկսի զինքը ցուցընել. վասն զի ինչուան հիմայ ապառաժներն հարիւրաւոր ոտք բարձրութեամբ Եփրատայ երկու կողմէն պարսպի պէս բարձրացած են, ջուրը հաղիւ կ'երևի մեծ խորութենէ իբրև վէմի մը մէջ, սեւ սեւ շարժելով. անոր համար ալ Եփրատ մինչև հոս Սեւ ջուր կ'անուանի։ Այս խորերուն վրայ կը նայի Բինկեան՝ քարաժայռերու վրայ հաստատուած, դժուարակոխ տեղ մը, որուն կը յաղթէ բարձրակախ փայտաշէն կամուրջով մը, զոր կը տեսնենք այս պատկերիս մէջ (պատ. Ա.). և՝ ի Կարնոյ սկսեալ այս երրորդ կամ չորրորդ կամուրջն է երիտասարդ Եփրատին վրայ ձգուած. որոց նման մէկ մ'այլ կայ Ակն քաղքէն քիչ մը վար, բայց ամենէն աւելի տեսօքն է այս Բինկեանայ կամուրջս, իր դժուար և խոժոռ դրից համար, և գետոյն սաստիկ հոսանացը։ Վասն զի Ակնայ մօտ գետն կը սկսի քիչ մը հանդարտիլ. բայց դեռ չաղատիր լերանց և քարանց բռնութենէն, մինչև ի Կապան քաղաք (Գէպան-մատէն), կամ մինչև ի Մելիտինէ (Մալադիա), ի Տլուք (Դիլէք) և Կարկառ. ուր ձանձրանալով իմն քարերու հետ կռուելէ՝ կը թողու իր բռնած ընթացքը. և որ առաջ կարծէր թէ Սիհունի և Ճիհունի նման Միջերկրական ծովը թափիլ կ'ուզէր, անկէ ոչ շատ հեռու՝ յարևելս դառնալով՝ լայն և ընդարձակ դաշտերու և աշխարհներու մէջ կը մտնէ, յԱսորիս, յԱսորեստան և ի Բաբիլոն, ուր և Տիգրիսի հետ գործելով զՄիջագետս, յուռթի և յաղթական ալիքներովն՝ վերջապէս կը միանայ իր դաշնակցին (Տի-

ARMÉNIE

PASSAGE D'EUPHRATE

ԱՆՑՔ ԵՓՐԱՏԱՅ.

2.

Ստեփաննոս Պողոսեան
ՍԵՐԵՐԱԿԵՆՑ

գրիսի) հետ, և ինչուան հին Պարսից և Արաբիոյ սահմանները մօտենալով Պարսկային ծովածոցին մէջ կ'անհետանայ։

Տեղւոյն վայրենախառն կամ ահեղագեղ դիրքն, շինուածոց ընդարձակութիւն և բնակչաց բազմութիւնն՝ ինքնին կու վկայեն որ Բինկեան կամ Բենկեան կամ Բեռկեան և Բինեան (վասն զի այս ամեն կերպով ալ գրուած կայ) նշանաւոր սկիզբ մը կամ հիմնադիր մ'ունեցած պիտի ըլլայ, և Հայոց իսկատիպ և սեփական բնակութեանց մէկն. թէպէտև պատմութեանց մէջ չի գտնուիր այս անունս, և տեղւոյն դժուարութիւնն ալ շատ հիւրընկալ չէ եղած օտարաց և ուղևորաց. յԵրոպացւոց մեզի ծանօթ է Հէլ Գաղղիացին, որ 1847ին գիշեր մ'անցուց հոս, և անցաւ գնաց յԱկն, թողլով մեզի այս երեք պատկերները, Բինկեանայ կամուրջը, Եփրատ գետոյն վրայ տկալաստով անցքը Կապանայ մօտ, (պատ. Բ.) և Ֆակբար ըսուած քարակտուր լեռնանցքը։

Այսպիսի քարաձորոց մէջ դարձի դարձի վազող գետոյ մը վրայ ի հարկէ դժուար նաև անկարելի է նաւարկել. բայց կողմէ կողմ անցնիլն հարկաւոր է միշտ. իսկ Բինկեանայ պէս կամուրջ ձգելն՝ ոչ դիւրին. հարկն հնարած է կարելի միջոց մը անցուդարձի, որ է Տկալաստ, յայլազգեաց Քէլէք ըսուած, որ հազարաւոր տարիներէ վեր Եփրատայ և Տիգրիսի վրայ կը բանի, և գուցէ մեր հին Հայկազն նախահարց հնարքն է, կամ նահապետաց մարդկութեան։ 30 կամ 40ի չափ (և ալ աւելի) ոչխարի մորթ տիկ հանած՝ իրարու կը կապեն, վրան ծառոց ճիւղեր կը ծածկեն, ալ վրան այլ թեթև տախտակներ կը տարածեն և կ'ամրացընեն, կը ձևանայ տկալաստ. մարդիկ և բեռինք, և երբեմն գրաստք ալ վրան կը կենան և անդընդախոր գետոյն կողմէն կողմը կ'անցնին։ Կըրնայ երևակայուիլ՝ որ որչափ ալ ապահով ըլլայ այսպիսի գետանցք մը՝ դեռ բաւական ճարտարութիւն և զգուշութիւն պէտք է անանկ խորտուբորտ խարակաց և ցցուած ժայռից միջէն, և այնքան ջրոց հոսանաց բռնութեան դէմ անցնելու համար, ոչ անոնց զարնուելով և ոչ ասոնցմէ քշուելով նպատակէն դուրս և շատ հեռու։ Նոյնպէս կըրնայ գուշակուիլ թէ որքան զարմանալի և ախորժախառն վախով զուարճալի պիտի ըլլայ անցքն՝ բնութեան և շինու-

թեան դիտող աչաց, այսպիսի ճամբու մը վրայ, կամ վէհի մը մէջ. ուր տեղ տեղ՝ գետոյն դարձուածքներուն պատճառաւ՝ միայն լճաձև կամ ճագառաձև միջոց մը կ'երևի, ամեն կողմէն ահեղ ժայռերով և քարերով պատած, որք վար թափիլ կը սպառնան. և բաղդ մը կը կարծուի՝ նեղ անցք մը գտնելն. բայց տեղ տեղ ալ տափակ տեղուանք կ'երևան, որոց վրայ երբեմն մշակութեան նշանք ալ, ծառք և պարտէզք և ցրուած տուներ և նաև գեղեր. աւելի հիանալի կ'երևան երբեմն լերանց ճեղքածքէ՝ իբրև վերցուած վարագուրի կամ երկփեղկ դրան մը բացուածքէն՝ ընդարձակ դաշտի կերպարանքն, ագարակներ և շէնքեր։ Թողունք գետոյն մշտաձայն խոխոջանքը, զոր կ'աւելցընեն երկու կողմերէն՝ երկու Հայաստաններէն եկած գետակներու և լեռներէն իջած աղբիւրներու վիժանք, որք մօտէն և հեռուէն վազվզելով կու գան իբրև իրենց մօրը գիրկն ինկնալու։ Աւելի զարմանալի կ'երևան վարէն՝ այն լերանց կամ ափափայ քարեղէն պարսպաց ափունքներուն վերևը շարժող կենդանիք և մարդիկ. վասն զի հարկ է որ այնպիսի տեղուանքէ անցնին դէպ ի Կապան երթալու գալու համար. և երբեմն ալ աւելի խոր թափանցելով լերանց կիրճերու և խոռոչներու մէջ։

Այսպիսի անցքերու մէջ նշանաւոր է Բինկեանայ և Ակնայ միջոց՝ Շռղի գեղին մօտերը՝ Ծակքար ըսուած լեռնանցքը, Ցէլիք կամ Ցէլիքլի-դաշ ըստ Թուրքաց (պատ Գ.). որ է կրաքարուտ լերան պատառուած մը՝ իբրև հինգ մեդրաչափ լայնութեամբ, որուն ստորոտը կը թափին լերան վերի սարերէն իջած ջրերն մեծ շառաչմամբ։ Քսան վայրկենի չափ հարկ է լերան ոլոր մոլոր կրճին դարձուածքներուն մէջ պըտտիլ, ելնելով կամ իջնելով, և մեծ զգուշութեամբ ու վախով. վասն զի թէ տեղւոյն բարձրութիւնն, թէ նեղ ու սահուն գետինն, և թէ չորս կողմի անդունդներն և սահանաց ձայնքն՝ գլխու պտոյտ և սրտի սարսափ կըրնան բերել. այնպէս որ անցնողներէն ոմանք՝ իբրև մեծ վտանգէ ազատած՝ ուրախութեան ձայներ և հրացաններ կ'արձրկեն՝ երբ կըրճէն դուրս ելնեն։

ARMÉNIE

GORGE DES MONTAGNES SUR L'EUPHRATE

ԾԱԿՔԱՐ.

3.

ARMÉNIE

ERZÉROUM

ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ.

— ՊԱՏԿԵՐ Դ. Ե. Զ. —

ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔ. — ԶԻՖՏԷ-ՄԻՆԱՐԷ. — ՄՈՂՐՈՎ ԱՊԱՐԱՆՔ.

Մեծ Հայք կամ բուն Հայաստան աշխարհ մեր՝ իր բնիկ տերանց իշխողութեան ատեն 15 փոքր Աշխարհ կամ Նահանգ կը բաժնուէր, իւրաքանչիւր առանձին Նախարարի մը կառավարութեան տակ, և զանազան գաւառներ բաժնուած, որք իրենց յատուկ գաւառապետը կամ իշխանը և դատաւորն ունէին։ Այս 15 աշխարհաց առաջինն էր Բարձր Հայք, Հայաստանի արևմտեան հիւսիսային ծայրը. իր առաջին և գլխաւոր գաւառն ալ էր Կարին, որոյ անուամբ շատ հեղ աշխարհն ալ կը կոչուի. իսկ իր քաղաքն ալ՝ Կարնոյ-քաղաք կը կոչուէր, կամ Թէոդոսուպոլիս. հիմայ դիւրութեան համար սովորենք քաղաքն ալ գաւառին անուամբ Կարին կոչել հայերէն. բայց սովորաբար այլազգի անուամբ կը լսուի Էրզիռում, և Օսմանեան Հայաստանի մայրաքաղաքն է, ինչպէս երբեմն ալ Յունական Հայոց։

Կարնոյ դաշտն՝ թէ իր երկրին վերիվայրութեամբը, թէ ընդարձակութեան մէջ ցրուած շէնքերուն տեսուածքով, բարձր տեղէ մը նայողին՝ ծովու կերպարանք մը կ'ընծայէ, որուն ալեաց վրայ շարուած են մակուկաձև գեղերն. և իբրև անփոյթ խորշի մը մէջ հարաւային արևելեան լերանց անկիւնը քաշուած է մեծազանգուած նաւն, Կարնոյ նաւաքաղաքն, որուն բարձրածայր կայմն կամ կանթեղակիր

աշտարակն է թէֆխի–միւնարէն. որ և շատ ժամերով հեռուէն կ'երևի. վասն զի արդէն քաղքին դիրքն բարձր է, բերդն և միջնաբերդն աստիճանաբար աւելի բարձր են. այս ետքինիս մէկ կողմէն ալ վեր կը բարձրանայ այն աշտարակն՝ իր յատուկ 100ոտք բարձրութեամբն. ձևն բոլորակ, երկու չափ (մեդր) տրամագծաւ. ներսէն քարուկիր, դրսէն կանաչ աղիւսներով պատած, բռած ու փայլուն. գլուխն տախտակամած ափսէաձև, անոր համար թէֆխի կոչուած. շրթունքն կարմիր աղիւսներու շարքով բարձրաքանդակ կամ դուրս ցըցած արձանագրութիւն մը ձևացուցած է արաբացի լեզուաւ, քիւֆի տառերով, Ասպիւլ Գասիմ տոհմէ Մուզաֆֆէր պէկ անուամբ կուսակալի մը, ԺԲ դարու մէջ. գագաթը՝ երեք ու կէս դար է՝ կը ծածանի օսմանեան լուսանիշ դրօշն։ Այս օդակտուր բարձրացեալ կայմաշտարակը տեսնողն՝ 'ի հարկէ Կարնոյ ծովադաշտէն կը դիմէ անոր նաւաբաղաքը, որ արդէն գրեթէ 6000 ոտք բարձր է Պոնտոսի երեսէն, 100 մեդրի չափ պակաս քան զանուանի լեռնանցքն Մոն–Սընի, և 40 քան զԱմբլոնին, և նոյն չափ բարձր քան Սբլիւկէն՝ որ Զուիցերիի և Իտալիոյ միջի անցքն է։ Այսպիսի բարձր դրիցն համար՝ 'ի հարկէ Բետրպուրկի պէս ալ ցուրտ կը զգայ Էրզիռում [1]. մինչ իր աշխարհագրական դրիցն նկատմամբ՝ պէտք էր ոչ միայն քան զԿ.Պոլիս և զՏրապիզոն տաք ըլլալ, այլ և աւելի քան զՀռոմ և զՆաբոլի. վասն զի ասոնցմէ ալ աւելի հարաւագոյն, կամ երկրիս հասարակածին մօտ է. ուրեմն երկար և սաստիկ ձմեռ մ'ունի, բայց չոր և պայծառ օդով. սքանչելի բարեխառնութեամբ գարուն և ամառ մը, որ կանաչով, ծաղիկներով, արմտեօք և բանջարեղինօք կը զարդարեն կը վայելցընեն, և սիպերիական ամայութիւնը վայելուչ դրախտ կը դարձընեն։ — Մօտենանք անվախ. և ահա մէկ բարձր կայմաշտարակին տեղ՝ կը սկսին հարիւրաւորք յերևան գալ, և ծովագոգի մը ծոց խըռնուած նաւերու կերպարանք կ'առնու տեղին. — և թէ մօտիկ ջաղացքներուն բազմութիւնը, անիւներուն այլանդակ դղորդմունքը և դարձուածքը, և 'ի պաշտպանութիւն քաղքին՝ հողաբլրոց վրայ կանգ-

1. 1855–6 ձմեռը Ինչուան — 28° Ռէօմ. հասաւ ցուրան։

ARMÉNIE

DOUBLE-MINARET (ERZÉROUM)

ԶԻՆՑԻ ՄԻՆԱՐԷ

5.

Ստեփաննոս Պողոսեան
ՍԵՐԵՐԱԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ Արա 3
Դաշ. Ա. Մեսրոպ. 10
Ա. ՍՑԻՈՒՆԻԱՑԱՆԻ ՄԵՎԱՆ

նած տասնեակ և աւելի մարտկոցներ ու բաղխոցներ (Թապիա) ալ նկատես, հանդերձ բերդերուն կըրկին պարիսպներովը, քաղքին կրկին խրամներովը, 12 դռնաձև կամուրջներու ճգուածովը (ճէպիռ գափուլար), արդարև մեծադիր, հիացուցիչ, տարօրինակ, նշանակերպ տեսարան մը կ'ելլէ հոն, զոր դիւրին չէ զանց ընել, թողուլ դառնալ։

Արդեօք որչափ հին դարերէ ընտրուած էր այս տեղս՝ Կարնոյ քաղաք, գաւառին, աշխարհին և բոլոր արևմտեան Հայոց գլուխ ըլլալու, չեմ գիտեր. բայց ասկէ 1440 տարի մ'առաջ կայսրն Յունաց ընտրեց այն տեղը իրեն բաժին ընկած Հայաստանի մայր և ամուր քաղաքն ընելու. անշուշտ Անատոլեայ շինած Թէոդոսուպոլիսն հիմակուան բերդաքաղաքն է, բոլոր շէնքին արևմտեան հարաւային կողմը, երկայն քառանկիւնի ձևով, և երկու կարգ պարսպով; որոց միջոցն Հիսար-պիչէն կ'ըսուի։ Այս պարիսպներս որ 72 աշտարակներով կը կանգնին, ինչպէս Բիւզանդացւոց շինած բերդաքաղաքներէն շատն, իրաւ շատ անգամ ծեծուեր, քակուեր, նորոգուեր են, բայց դեռ նախնական շինուածին մասն և ձևն ունին. որուն գլխաւոր նշանն էր՝ դրսուանց նաւացռուկի նման ժայռերով կամ քարերով ցցուած ըլլալն, որպէս զի թշնամեաց դիւրաւ մօտենալի և բռնելի չըլլայ. ինչպէս որ քաղքին հիմերն ալ ներսէն դէպ 'ի դուրս փորաձև մը բարձրացուցին, որ չկարենան նաղմափորք դիւրաւ հիմը գտնել և քանդել. արևելեան և արևմտեան երեսներուն աշտարակներն բոլորաձև շինուեցան, հիւսիսային և հարաւային կողմանցն՝ գոգաձև և ժայռաձև. և ահա թէ ասոնց և թէ պարսպաց ցցուած ցռուկներուն համար՝ այն ատենն ալ Նաւաքաղաքի նմանութեամբ և կոչմամբ ճանչցուած էր Քաղաքն Կարնոյ։ Բերդաքաղաքին արևելեան հարաւային անկիւնն է միջնաբերդն (Իչ-գալէ) բարձր դըրից վրայ, աւելի բարձրագոյն պարիսպներով. որոց հարաւակողմը կանգնած էր բարձրագոյն աշտարակն Թէոդոս անուամբ յանուն կայսերն, որ տեղ է հիմայ վերոյիշեալ Թէփսի մինարէն, և որոյ խարիսխն կը ցուցընէ հին շինութիւնը։ Բերդաքաղաքին չորս դին կը պատէ խոր խրամ. անկէ դուրս կը տարածուին արուարձաններն, որ դրսուանց քաղքին հնգակողմն երե-

ւոյթ կու տան, և երկու երեք ժամ կը տևէ շրջապատիլն. բայց ասոնց չորս դին ալ խրամներ կան, որոնք վերոյիշեալ ճեպիռ գափռ կամուրջներով ներս կը տանին. անկէց ալ ներս անցնելու համար ուրիշ կամուրջներ և չորս դռներ կը գտնես. ուր կը հրաւիրեմ հետևողս ներս մտնելու և պտըտելու ու դիտելու, ինչ որ ինծմէ առաջ շատերն նկատեր ու նկարագրեր են, իբրև մնացեալ նշանաւոր շէնք՝ այս հիմայ նուաղեալ, բայց միշտ մեծ քաղաքին։

Ի հարկէ դիտելի բաներէն պիտի ըլլան Զիֆոռմիևարէն, Թէփսիին մօտ, իր ջուխտակ գեղեցիկ սիւնանման շերտաձև կիսկատար աշտարակներովն, կարմիր, կանաչ, կապոյտ, սև աղիւսներով, քիւֆի գրով և պարսիկ լեզուով հին արձանագրութեամբ մը՝ գրուած յամին Քրիստոսի 962. — աշտարակաց միջոց բարձրակամար և բաղմաքանդակ դուռն իբր 30 ոտք բարձր. — կարդացողաց երկկարդ 40 սենեակներն. և անոնց ծայրն եղած տաճարաձև Իմարէդ սենեակն կամ շիրիմն, որուն ոքանչելի մանր քանդակները քակեր տարեր են Ռուսք՝ քաղաքն առած ատենին, յամին 1829։ — Ռշուռամի մեծ մզկիթն, և մեծ շինուածն՝ 50 չափ երկայնութեամբ և 40 լայնութեամբ, եօթն կարգ սիւներով 28 կամարատեանց վրայ, որոնց վրայ կ'ամբառնար մեծ գմբէթ մը, իսկ հիմայ տախտակով պատած է. ի սկզբան ինչ բանի համար շինուած էր այս տեղս, ես չիմացայ։ — Զինիլի-մինարէ՝ Երզնկայի դրան մօտ. և անոր քով քարաշէն Մուղրօ-սերայ կամ Մուղրով տեղն, բաղմաքանդակ դուռով մը, որուն համար ոմանք ըսին թէ Մուղրօ անուամբ Եգիպտի մը պալատ էր, որ խալամը յանձն առած ըլլալով սպանուեցաւ իրեններէն։ — Թօխիանէ, մեծ քառակուսի շէնք մը, որ անշուշտ հին եկեղեցի մ'էր, ինչպէս նաև մզկիթներէն շատն, որ բերդաքաղքին մէջ 30 հատ կան, իսկ բոլոր քաղքին մէջ ատենօք 200 հատ կը համարուէին։ Եէն եկեղեցիք հիմայ քիչ և նորաշէն են, մէկ մէկ հատ Հայոց, մատուռ մը Յունաց, եկեղեցի մը լատինացի կնկըղաւոր կրօնաւորաց։ Ասոնցմէ վերջը դիտելիք են վաճառանոցքն, կտաւանոցք, կարաւանատունք և իջեւանք 40ի չափ, բաղնիքներ, բաղմաթիւ աղբիւրներ, գմբեթաւոր շիրիմներ, գործարանք զինուց, մորթեղինաց, ճիու կաղմածոց, պղնձ-

ARMÉNIE

MOGHROV, PALAIS (ERZÉROUM)

ՄՈՂՐՈՎ ԱՊԱՐԱՆՔ.

Պետական Պողոսյան
ՍԵՐԻԵՐԱԿԱՆՆԵՐ
Գ ա ր ա խ ա ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ Арм ССР
Իմ. Ա. ԱԼՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ձէ ամաններու, և այլն։ — Պարսպաց վրայ կ'երևին տեղ տեղ մնացորդք յոյն և հայ արձանագրութեանց, քանդակք և խաչվէմք, բայց քիչ։

Պէտք չէ մոռնալ քանի մ'ուխտատեղիներ ալ, որոց գլխաւորն է Սահակայ և Յովսեփայ հանգստարանն Ուլուճամիի մօտ, և անոնց Նահատակի աղբիւրն, զոր Աղա-սախ կ'անուանեն մահմետականք, իրենց մէկ տանը մէջ ըլլալով, Դավրիժու դրան մօտ։ — Ս. Թորոս, Ս. Մինաս և Քառասուն Մանկունք, և այլն։ Հայոց եկեղեցւոյն հին Ս. Աստուածածին մատրան քով ալ կայ Գէորգ Նահատակին գերեզմանն։ Այս մատրան քով էր կ'ըսեն հին եկեղեցին՝ ուր Եղր կաթուղիկոս Կարնոյ ժողովքն ըրաւ յամին 632, Հերակլ կայսեր հրամանաւ։ Մահմետականաց պատուած գերեզմաններէ 30 հատ մը կան բերդին մէջ կոնաձև գմբէթներով. քաղքէն դուրս ալ արևելեան դրան դիմաց՝ Կիւմիւշլիւ Գիւմբէր ըսուածներն, որոց մէջ շատ գեղեցիկ էր մէկ մը 15 ոտք բարձր, ութանկիւնի, փայլուն քարերով, չորս կամարաւոր դռներով, բայց մէջը դատարկ ու անխնամ թողուած։ — (Հոս անցողաբար պէտք է զգուշացընեմ պտըտողը՝ քաղքին մեծամեծ շանց բազմութենէն, որք մանաւանդ գիշերը շատ ահարկու են, կէսօրն ալ ականջ կը խլացընեն հաչմունքով։) — Քաղքին երեսէն և միջէն պակաս զարմանալի չեմ՝ կարծեր, գուցէ և շատ աւելի՝ իր ներքին յատակն, (որովհետև արտաքինն շատ մաքուր չէ, և փողոցներն այլ բաւական լայն չեն). իսկ ներքին յատակ ըսելով կ'իմանամ գետնին տակը, ուր հին քաղքին շինողք՝ անոր ամրութեան և պիտոյից համար ճամբաներ շինած էին, թէ ջուր բերելու, ինչպէս որ կը վկայեն աղբիւրներն ալ ինչուան հիմայ, թէ խոտ բերելու Շամբէն, և թէ զօրաց ելումուտի համար։ — Գուցէ այն շինուածոց մասնակից էին Կիւմիւշլիւ գմբէթից քով եղած Աղլան-վէրան բլրին մէջ փորուածքն և բաւղաձև փողոցներն. որոյ քով կար հին մեծ շինուածք մ'ալ, որուն դռները իրենց հռովմէական արծուեաց քանդակներովը՝ թռուցին Ռուսաց արծուիներն մինչև Ֆինլանտիոյ ծովածոցը։ Այս նոր արծուեաց աւերածէն ետև Կարնոյ քաղաքն շատ նուազեցաւ շինութեամբ և բնակութեամբ. այն պատերազմէն առաջ 20,000 տուն մահմետական կար,

3500 տուն Հայ. ատենօք ինչուան 40,000 տուն բնակիչ կը յիշուի. հիմայ այն տուներուն թուով են բնակիչքն, կամ քիչ աւելի. ըստ ոմանց 70,000ի կ'ելլեն բոլոր բնակիչքն, որոցմէ մեր ազգայնոց թիւն 5000ի չափ ըլլայ։ 20 տուն մ'ալ Բոշայ կայ, որք թէ և մէկալ անծանօթ բոշայից ցեղակից կ'երևան, բայց բարեկիրթ են և քրիստոնեայ, և Հայոց սովորութեանց և լեզուին հետևողք։

Կարնոյ քաղքին և այս իր շէնքերուն պատկերները՝ 1859ի մեծ գետնաժաժէն առաջ առնուած են։

— ՊԱՏԿԵՐ Է. —

ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՈՑ ՅԱԽԱԼՑԻԽԷ

Ախալցիխէ՝ Վրաց լեզուով Նոր-քերդ ըսել է, և յայտնի է անուամբն՝ որ աւելի Վրաց քան Հայոց քաղաք եղած է հին ատեն. և ստուգիւ՝ ոչ ասոնց և ոչ անոնց, այլ Մեսխք ըսուած կովկասեան ժողովրդեան մը, որոց երկիրն՝ ընդ մէջ Եգերաց, Հայոց և Վրաց՝ նոյնպէս կոչուէր, ի Վրաց՝ Սա-Մըցխէ, որ է Երկիր Մեծխաց. այս անունս արևմտեան աղգք Մոսք կամ Մոսոք կը գրեն, որ և Ս. գրոց յիշած Յաբեթի Մոսոք թոռան համաձայն է, և հաւանօրէն այն նահապետին նախ բնակած երկիրն է։ Կովկասեան ազգաց մէջ Վիրք ամենէն յառաջադէմ ըլլալով տիրեցին Մեսխաց ալ. իսկ Հայք գուցէ միայն իրենց ամենէն աշխարհակալ թագաւորաց ատեն. թէ և Բագրատունեաց իշխանութիւնն ալ ինչուան այս կողմերս մօտեցաւ. գոնէ ասոնց ատենէն սկսած է հոն Հայոց գաղթականութիւնն, որ մօտ ատեններս աւելի շատցաւ. այսինքն երբ (1828) Ռուսք առին յՕսմանեանց այս գաւառներս՝ անոնց

VIEILLE ÉGLISE (AKHALZIKHÉ)

ՀԻՆ ԵԿ. ՑԱԽՈԼՑԻԽԷ.

7.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՌՎԱՆ
ԶՈՒՄԻ ԱՌ.
ԵՐԵՎԱՆ, Ա. ՄԱՍԻՍ

Մանկանոց Պողոսեան
ՍԵՐԵՐԱԿԵԱՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿ. ԱՍՍՀ

AZGHOR

ԱԶՂՈՐ.

8.

հետ առած Կարնոյ և Կարսի գաւառներէն տեղափոխելով զՀայս, բազմութիւն մ'ալ այս Մեսխաց կողմերը ցրուեցին. բնականապէս շատք եկան ի գլխաւոր քաղաքն Ախալցիխէ. սակայն ասիկայ պատերազմի ատեն ռմբակոծութեամբ մեծապէս աւրուած ըլլալով, իր միջէն անցնող համանուն գետոյն հարաւային կողմը նոր քաղաք կամ աւան մը պէտք եղաւ շինել Հայոց, ուր և բնակեցան. և հիմայ Ախալցիխէի (որ ռամկօրէն Ախըլսխա կամ Ախըսխա կ'ըսուի) 15 կամ 16000 բնակչաց մեծագոյն մասը Հայազգի է. մնացածն Վրացի, քիչ մ'ալ Թուրք և Հրեայ։

Նոր գաղթականք Հայոց գտան յԱխալցիխէ իրենցմէ առջիններուն քանի մը սերունդքը, և անոնց ալ նախնեաց յիշատակարանները. որոնց գլխաւորքն են երկու հին եկեղեցիք, Ս. Թաղ և Ս. Յովհաննէս, որոց մէկն աւելի աւրուած էր քան զմիւսն. և ահա աւելի շէն եղածին պատկերն է այս. Հայոց միջին դարու եկեղեցեաց սովորական ձևով, և ոչ այնչափ սրածայր կաթուղիկէիւ կամ գմբեթաւ, որ բաւական հնութեան նշան է։ Եկեղեցւոյն չորս կողմն ալ Հայոց գերեզմանք կան, իրենց հին ոճովն, այսինքն խոյակերպ քարերով և խաչարձաններով։

— ՊԱՏԿԵՐ Ը. —

ԱԶՂՈՐ ԿԱՄ ԱՍԿՈՒՐԷԹ.

Մեսխաց աշխարհին և հիմկու Ախալցիխէ գաւառին վիճակներէն մէկն ալ է Թուրքաց Ազղուր կոչածը, որ և Ազղոր, և ըստ Վրաց Ազիռուերի, իր բերդաքաղաքին անուամբ. որուն հիմնարկութիւնն բաւական ալ հին պիտի ըլլայ. որովհետև ոչ միայն ի Վրաց, այլ և ի մեր պատմչաց կը յիշուի ի սկիզբն

Ժ դարու՝ Ակուրեր կամ Սակուրեր կոչմամբ. ուր այն ատեններն եկաւ ապաւինելու մեր Բագրատունի քաջ թագաւորն Աշոտ Երկաթ, 250 կտրիճներով. որոց հետ յարձակեցաւ և հալածեց 4000 մարդ՝ զոր երկու Գնունի եղբարք իր վրայ բերեր էին, և կորակոր դարձուց։ Նոյն դարուն վերջերը՝ Դաւիթ կուրապալատ Տայոց՝ այս բերդս ընծայեց մեր Սմբատ Տիեզերակալ թագաւորին, ի վարձ իրեն տուած օգնութեանը։

Ազդոր Կուր գետոյն աջ կողմը կառուցած է, բարձր և պաշտպանութեան յարմար դիրքով. բերդն ալ բաւական ամուր է, և դեռ մէջը կը գտուին հին շէնքին մնացորդք, վրացերէն արձանագրութիւնք, և ձրամպուշա մը, այսինքն քարակուր ճամբայ գետէն վեր ջուր բերելու համար։

Բերդէն աւելի անուանի է Ազդորի Տիրամօր ուխտատեղին. ըստ աւանդութեան Վրաց Անդրէաս առաքեալ հոս բերած է Ս. Աստուածածնի պատկեր մը, և հրաշագործ բժշկութիւններ ընելով՝ տեղւոյն կռատունը կործաներ և եկեղեցի մը շիներ ու պատկերը հոն դրեր է. կ'ըսեն այլ թէ մինչև Հերակլ կայսրն ալ ուխտի եկեր է հոս, և քակելով եկեղեցին՝ նոր և մեծ եկեղեցի մը շիներ է. անոր համար առջինն ըսուեր է Ծուռ-Էկլեսիա (հին եկեղեցի), և եպիսկոպոս ալ հաստատուեր է հոն։ ԺԴ դարուն վերջերը մեծ ժաժէ մը կործաներ է եկեղեցին, և գմբէթն՝ կ'ըսեն, իջեր հովանիի պէս ծածկեր է սուրբ պատկերը։ Նորէն կանգներ են եկեղեցին, և նոյն պատկերը շատ հեղ գերութենէ կամ գողութենէ դարձուցեր են հոն՝ տեղւոյն իշխողք, ծանր ծանր գնով, ինչուան ԺԶ դարուն վերջերը։ Անկէ ետև այլազգիք տիրելով տեղւոյն՝ եկեղեցին ալ կործաներ է, պատկերն ալ անյայտ եղած է. հիմայ կու մնան միայն եկեղեցւոյն աւերակներն, որոց վրայ կ'երևան ճարտարապետութեան և նկարչութեան գեղեցիկ նշաններ։

Ասկէ դար մ'առաջ (1770) երբ Վրաց Հերակլ թագաւորն այլազգիները զարկաւ յԱզդոր, առաջին անգամ էր որ Ռուսք իրեն նիզակակից՝ այս կողմերս եկան. իսկ երբ Ախալցխէի տիրեցին, Ազդորն ալ անոր վիճակ մ'եղաւ։

ՀԱՅԿԱՅԻ ՊՈՒՀԻՐԱՏ
ՀՍՍՀ ԳԻՏ.ՑԱԼԻԱՊՈՏԵԿԱ
ՀՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴ.
Հ. ԵՐԵՎԱՆՅԱՆ ԱՆՎԱՆ

VARTZIA

ՎԱՐՁՈՒՔԻՔ.

9.

— ՊԱՏԿԵՐ Թ. —

ՎԱՐԶՈՒՆԻՔ.

Այս անունս թէ և մեր պատմութեանց մէջ շատ ծանօթ չէ, սակայն մեր Գուգարաց աշխարհին մէջ է, և անոր Ջաւախք գաւառին, հիմկու Ախալ-քէ-լէք քաղքին սահմանը, անկէ 4 կամ 5 ժամ հեռի։ Գուգարաց աշխարհքն՝ որ Գոլգ յաբեթական նահապետին բնակութեամբ և անուամբ կոչուած է, կուր գետոյն գեղեցիկ հովտաց ձորոց և լերանց ընդարձակ երկիր մ'է՝ ընդ մէջ Հայոց և Վրաց, և մեծագոյն մասն ասոնց վիճակ ընկած է, ինչպէս որ տեղեաց անուանքն և շէնքերն ալ կու վկայեն։ Այս շինից մէջ ամենէն զարմանալեաց մէկն է Վարձուռնիք ինչպէս կոչեն Հայք. վասն զի կ'երևի թէ նախ Իվրաց կամ Իհին Գուգարաց ազգէն շինուած է, բովանդակ քարաբերան մէջ կտրուած և փորուած. որոյ նման ուրիշ քաղաքներ ալ կան այն կողմերը, ինչպէս Ուփլոս-ցիխէ ըսուածն։ Հաւանօրէն այս տեղս առաջ ամրութեան և պաշտպանութեան համար շինուեցաւ, զուցէ Վարդ անուամբ մէկէ մը, վասն զի իսկզբան Վարդ-ցիխե (Վարդաբերդ) կոչուած է, և աւրուելով Վարձիա, ինչպէս ինչուան հիմայ կոչուի. այսպէս կոչած են մեր պատմիչք ալ, նաև Վարձառունիք կոչելով։ Վրաց Գէորգ Թագաւորն Ժ.Բ դարուն կիսէն ետև այս քարափոր քաղաքին կամ քարայրերուն աւելցուց մեծաշէն

վանք մը, եկեղեցի մը և պալատ մը, ամենն ալ նոյնպէս քարակտուր. միայն եկեղեցւոյն ճակատն տաշած քարերով շինած։ Իր դուստրն մեծահռչակ Թագուհին Թամար՝ կատարելագործեց հօրը սկսածը, զբօսանաց ապարանք մը շինելով և եկեղեցին զարդարելով. ուր և Թագեցաւ ինքն և հայրն և ուրիշ շատ իշխանազունք։ Անկէ ետև ալ աւելի հըռչակեցաւ տեղն, որ հիմայ աւերակ է. բայց զարմանալի աւերակ. զրեթէ երկու տակ քաղաք կամ բնակարանք. նոյնպէս ալ երկու եկեղեցի, մէկն մէկալէն 60 ոտք բարձր. անոնց մօտ ուրիշ հին եկեղեցիներ և մատրունք, որք թէ և իրարմէ աւելի պակաս աւրուած են, սակայն ամենն ալ զարմանալի և ճարտար քանդակներ ունին, նոյնպէս նկարէն պատկերներ պատերուն վրայ, որոց մէջ Գէորգայ և Թամարայ ալ՝ սրբոց լուսապսակներով. բերդի և բնակարանաց մնացորդք ալ կան։ Աւելի զարմանալի են Գէորգ Թագաւորէն առաջ շինուածքն; ինչպէս եկեղեցիք. որոց մէջ շատ յունարէն արձանագրութիւններ կան, ինչուան ԺԱ. դարու ըսկիզբները. հաւանօրէն անկէ ալ հին յիշատակներ պիտի լան. գոնէ մեր պատմչաց և աւանդութեանց յիշածն աւելի հին է։ — Մեր մէջ յիշուած հրաշալի խաչերուն մէկն է Վարձռնեաց Խաչն. որոյ համար կ՚աւանդեն զրոյցք՝ թէ դրախտի ծառոյն մէկ ճիւղն է, զոր Ս. Մեսրովպ ուրիշ խաչի մը մէջ մտուցեր դրեր է. ճիւղը տուողն ալ Ս. Աստուածածինն է եղեր. անոր համար Վարձռնեաց Աստուածածին ալ կ՚ըսուի, որով ի հարկէ ուխտատեղի կ՚ըլլայ տեղն ալ։ Վարդան պատմիչ ալ կը վկայէ որ այդ խաչդ օրհնած է ի Ս. Մեսրովպայ, և աջ թևին վրայ հայերէն գիր կայ, զոր Վրացիք ոսկւով ծածկեր են. առաջ Շիրակ գաւառին մէջ ի Գպրեվանք կը պահուէր, և Ճոնեանց խաչ կ՚անուանէր. Ի դարուն Ցիսէն առաջ Ճոն Սարգիս ապահովութեան համար փախուց տարաւ ի Վարձիա, անոր համար ըսուեցաւ Վարձունեաց Խաչ։ Շատ դարերէ վերջը Վրաց մեծահռչակ Գելաթի վանքը փոխադրեցին այս խաչս, և դուցէ ինչուան հիմայ հոն կը պահուի. վասն զի վանքին գանձարանին մէջ շատ հին և թանկ խաչեր ըլլալն՝ յայտնի է։

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ԳՐՔԵՐ
ՀԱՍՈ ԱԲԵՄ ...Ի
Ա. ...
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԵՐԻԱՅԻ ԳՐՔԵՐ
2009
69-49

ARMÉNIE

ORBETH

ԵՍԲԵՈԹԼՏԷ.

ՇԱՄՇՈՅԼՏԻ ԿԱՄ ՕՐԲԵԹ.

Ասկէ առջի թուին մէջ յիշեալ Գուգարաց աշխարհին գլխաւոր գետերէն մէկն է Խրամ, որոյ անուամբ գաւառ մ'ալ կը ձեւանայ Խրամիձոր ըսուած, Վրաց գլխաւոր գաւառին՝ Տփխիսու հարաւակողմը. Խրամայ ձախ կողմէն (որ է հիւսիսային) ընդունած գետակներուն մէկն է Ճիվճիվ. այս երկուքին խառնուածոց անկիւնն բարձրադիր լեռնավայր է, իբրև 2700 ոտք բարձր ծովուն երեսէն. որով ի բնէ ամուր և դժուարամատոյց տեղ մ'է. ուր՝ մեր և Վրաց պատմութեան մէջ յիշուած անուանի բերդերուն մէկն կանգնած է և հիմայ կիսաւեր մնացած։ Ըստ աւանդութեան Վրաց՝ նոյն ինքն իրենց նահապետն Փարթլոս՝ եղբայրն Հայկայ՝ է շինող բերդին, որ կոչեցաւ Օրբեր, և ըստ Վրաց լեզուի թարգմանի Արծուեաց տեղ. յիրաւի ալ շատ արծուիք կը բունին անոր քարաժայռ լերանց ձորերուն մէջ։ Բայց աւելի սովորական անունն է Շամշոյլտ. զոր մեր պատմիչք՝ սկսեալ ի Ցովհ. կաթուղիկոսէ՝ թարգմանեն Երեք-Ներ, Սամի-շվիլտէ, ոմանք ալ Սա-մըշվիլտէ կարդալով կը թարգմանեն Երկիր-աղեղանց։ Ինչ որ ըլլայ ստուգաբանութիւնն՝ տեղն շատ հին է. և ըստ աւանդութեան Վրաց՝ Հայկազանց ատեն իրենց երկիրը գաղթական մ'եկած է ի Զինաց և այն բերդը ժառանգեր է հազար տարիներով, և անոր հին անուամբ Օրբեթուլ կամ Օրբուլ կոչուեր է. այս է պատճառ անուան հռչակաւոր Օրբելեան կամ Ուռպելեան ցեղին, որոյ ազնուական սերունդքն հիմայ ալ Ռուսաց մէջ Վրահայոց հին ազնուական ցեղից մէկն կը ճանչցուին և կը պատուին յարբունիս, և մեծ ու զինուորական պաշտօններ կը վարեն.

թերևս բոլոր Եւրոպիոյ մէջ ասոր նման հին աղ-
նուական ցեղ չկայ։

Ժ. դարուն սկիզբը մեր Բագրատունի Սմբատ Ա.
թագաւորն տիրեր էր այս տեղիս ալ, և յանձներ
էր այն (Վասակ և Աշոտ) Գնունի եղբարց՝ զոր յի-
շեցինք Ը. Թուին մէջ, և որոց վրայ եկաւ և «Աստ
եկաց Երկաթ Աշոտ, արար յաղթութիւն և գնաց»,
ինչպէս որ գրուած մնացած է հոն գերեզմանաքա-
րի մը վրայ, ըստ տեղագրութեան Ջալալեան Սար-
գիս արքեպիսկոպոսի։ Յաջորդ դարուն սկսան պայ-
ծառանալ հոն Օրպելեանք, որոց հետ թշնամենա-
լով Գէորգի թագաւորն Վրաց՝ սաստիկ պաշար-
մամբ և կոտորածով նուաճեց բերդը. բայց թամար
թագուհին նորէն դարձուց անոնց ցեղէն մնացոր-
դացը, որոնցմէ էր ԺԳ. դարուն վերջերը Տարսայիճ
մեծ իշխանն Հայոց Սիւնեաց, և իր որդին Ստեփա-
նոս եպիսկոպոս և անուանի պատմիչն Սիւնեաց։
ԺԵ դարուն սկիզբն Լէնկթիմուրի աշխարհաւեր
ձեռքն հասաւ հոս ալ. անկէ մնացածն աւերեց Գա-
րագոյունլու ցեղին գլխաւորն յամին 1440. անկէ
ետև տեղն աւերակ մնացեր է, թէ և հաղարէն ա-
ւելի տանց տեղիք կ'երևան. նոյնպէս բերդն ալ լե-
զուաձև երկրին բարձրագոյն ծայրը, ուր երկու քա-
րափոր ջրամբար ալ կայ. 8 կամ 10 եկեղեցեաց
աւերակք, որոց մէջ վրացերէնէ զատ հայերէն ար-
ձանագրութիւնք ալ կան ԺԳ. դարու սկիզբէն. ա-
ւելի հին ալ կայ ԺԱ. դարուն կիսէն խաչարձանի մը
վրայ Բատ կամ Սմբատ իշխանի, որոյ գանձերն ալ
ուրիշ տեղ մը թաղուած կը նշանակուի։ Ուրիշ խաչ-
արձան մ'ալ կայ՝ այսպէս. «Սուրբ խաչն Յիսուսի
Քրիստոսի է փրկող Զաքարիասա իշխանաց իշխա-
նի», որ պէտք է ԺԳ. դարուն առաջին տասնեկին
մէջ գրուած ըլլայ։

Հին բերդին և աւերակաց դիմաց ճիվճիվայ միւս
(ձախ և հիւսիսային) կողմը շինեցաւ Նորերս Նոր-
Շամշոյլտ գեղն, ուր բնակին 30 տուն մերազգիք,
եկեղեցեակ մ'ալ ունին։ Ցեղւոյն դիրքն, սահման-
քըն, օդն և ջուրն շատ աղէկ և զուարճալի են. միայն
տաքն և ցուրտն ալ ըստ եղանակին՝ սաստիկ կ'ըլ-
լայ։ — Ահա այս հին և հռչակաւոր բերդին և սահ-
մանաց երևոյթն է Ժ. պատ. Հայկական Նշմարիս։

ARMÉNIE

KATHARINENFELD

ԳԱԹԱՐԻՆԷՆՖԷԼՏ·

Մանկանոց Պողոսեան
ՍԵՐԵԲՐԱԿԱՆՆԵՐ
Ա. Բ. Գ. Դ.

— ՊԱՏԿԵՐ ԺԱ. —

ԳԱԹԱՐԻՆԷՆՖԷԼՏ.

Այս տեղւոյս անունը կարդացողն կամ լսողն՝ կը կարծէ թէ Հայկայ և Քարթլոսի սահմաններէն յանկարծ Գերմանիոյ խորերն ընկանք. և սակայն հազիւ երկու փարսախ երկու ժամ հեռու ենք ի Շամշղլտեայ, ասոր հարաւակողմը, և Խրամայ աջակողմեան օժանդակի մը եզերք, որ հիմայ Մաշաւեր կամ Ճապալա կոչուի, և հին ատեն առանձին փոքրակ կամ ձորագաւառ մը ձևացընէր, իր Քուէշ գլխաւոր աւանին անուամբ՝ Քուիշափոր կոչուած։ Յայտնի է ուրեմն որ Գաղարինեանֆէլտ կամ Էգարէրինֆէլտ՝ Ուռպելեանց ոստանին պէս երեք կամ չորս հազար տարուան հնութիւն չունի, և ոչ ալ դարաւոր կան, վասն զի այս մեր դարուս մէջ շինուած է. բայց յիրաւի զարմանալի պատճառաւ և տեղափոխութեամբ մը։

Երբ մեր փրկչական թուականին հազարամեայ դարն լրացաւ, ընդհանուր քրիստոնէութեան մէջ կարծիք և վախ կար աշխարհիս վերջանալուն. այն ատենուան եղած չարիքն ալ, Թուրքաց արշաւանքն՝ այս բանիս սկիզբ մը սեպուեցաւ. բայց տարի տարուան վրայ անցնելով և ԺԱ. դարն երկրննալով՝ այն վախն ալ փարատեցաւ. յետոյ դարերն ալ յաջորդելով բոլորովին մոռցուցին. սակայն մեր դարուս սկիզբները Առաջին Նաբոլէոնի պատերազմներէն

վերջ նորէն այսպիսի վախ մ՚ընկաւ. բայց այս անդամ Գերմանացի աղանդաւորաց մէջ, մանաւանդ Վիրթէմպէրկցոց. որք հաւատալով թէ աշխարհիս վերջն հասեր է և Քրիստոս պիտի գայ նորէն ի Պաղեստին, ելան իրենց երկրէն՝ ընդ առաջ երթալու երկնաւոր Դատաւորին։ 1818ին էր որ թողուցին տուն տեղ հաղարաւոր երկիւղածք, և ուղեցին ոտքով քալելով՝ ի Գերմանիոյ մինչև Յերուսաղէմ երթալ, զանազան աշխարհներէ անցնելով. ուր և շատերն իրենց կարծիքէն առաջ հասան ի հանդերձեալ աշխարհն, ճամբու նեղութենէն մեռնելով. մինչև մնացեալքն Ռուսաց և Կովկասի սահմանները հասնելով կամայ և ակամայ համոզուեցան առանց աւելի առաջ երթալու՝ այն տեղուանքը կենալ և սպասել։ Շատերն եկան Վրաց կողմերը, և Տփխիսէն սկսեալ ինչուան այս մեր տեսած տեղը՝ հինգ վեց գաղթականութիւն կամ բնակութիւն հաստատեցին, անուանելով Նոր Թիֆլիզ, Ալեքսանդրոստորփ, Էլիզավէթթալ, Մարիէնֆէլտ, Բեդէրստորփ և Գաթէրինէնֆէլտ. ոմանք ալ Գանձակ կամ Կէնճէ քաղքին մօտերը (հին Հայ-Աղուանից երկիրը) Անէնֆէլտ և Հելէնէնտորֆ գաղթականութիւնները հաստատեցին. սկսան տուն տեղ շինել և երկիր բանիլ, իրենց գերմանական պարզ, կոկ և բարեկարգ ոճովը. որ զարմանք մ՚էր այնպիսի խառնազգի ժողովրդոց մէջ, որք էին Հայք, Վիրք, Թաթար, Պարսիկ, Թուրք և Քուրդ։ Հաղիւ թէ շէնքերն և ծառերն բարձրացեր էին՝ Պարսից և Օսմանեանց պատերազմներն բացուեցան, 1826ին. անկիրթ ժողովուրդք և աւարառու ցեղք, մանաւանդ Քուրդք և Պարսիկք՝ Գանձակայ կողմի գաղթականները ցրուեցին և գերեցին. ինչուան հոս ի Գաթէրինէնֆէլտ ալ եկան, ուր այն ատեն 85 տուն կային. 30 հոգի սպաննեցին, 130 ալ գերի տարին. քանի մը տարի գեղն ամայի և վախի մէջ մնաց, ինչուան որ Ռուսք Պարսից և Թուրքաց յաղթելով և տիրելով անոնց զանազան գաւառաց, այս կողմերս ալ հանդարտեցան. գերիներէն ողջ մնացողք դարձան տեղերնին. նորէն ձեռք զարկին շինութեան և մշակութեան, և շուտով ծաղկեցան և աճեցան։ Ամենէն անուանիներէն և մեծ գեղերէն մէկն է այս Վրահայոց հռչակաւոր Շամշոյլտէին դրացին Գաթէրինէնֆէլտ,

գուցէ և 150 տունով, որք վեց չիտակ ճամբաներու վրայ շարուած են. մէջ տեղը մեծ հրապարակ մը կայ, մէջը երկու եկեղեցի։ Գեղին չորս կողմն են իրենց մշակութեան գեղեցիկ ագարակներն, քիչ մ'ալ հեռու որսոց տեղուանք՝ անտառակաց և լերանց միջոց։ Այս գաղթականին ընտրած տեղւոյն մօտ՝ Բէմերլի անուամբ գեղ մը կար, մեծ մասն հին աւերակներով եկեղեցեաց, աղբերաց և գերեզմանաց. անշուշտ մեծ և բազմաբնակ չինուածի մը մնացորդ, զոր կերպով մը կենդանացուցին մեր հիւր Գերմանացիք. և այն իբրեւ վայելուչ երկիրները կը-կին վայելչացուցին կանոնաւոր հողագործութեամբ և տնտեսութեամբ։

— ՊԱՏԿԵՐ ԺԲ. —

ԳԱԻԱԶԻՆ ԼԵԱՌՆ.

Մեր նախայիշեալ (Թ. Ժ. ԺԱ. Թուոց մէջ) Գուգարաց աշխարհին արևելեան սահմաններն՝ Կուր գետոյ եզերքը կը խառնուին Հայոց ուրիշ աշխարհի մը հետ, որ է Ուտի կամ Ուտէացիք. այս երկու աշխարհաց սահմանագիծն կամ բաժինն որոշ և յայտնի չէ մեզի. բայց երկու գետոց՝ Ինճէ սու և Ճողազ ըսուած՝ միջոցներն է. ուր որ ընդարձակ և գեղեցիկ դաշտ մը կը տարածուի, զոր նախնիք մեր կոչեն յանուն Գագ կամ Գագիկ Թագաւորի կամ նահապետի մը։ Դաշտին մէջ ալ կան պզտիկ և չափաւոր լեռներ, որք գետնին երեսէն բուսած կ'երևան զարմանալի ձևով. անոր համար հին ատեն ամրութեան տեղուանք եղած էին թշնամեաց արշաւանքէ. յայտնի է որ վրանին բերդեր ալ չինուած ըլլալով։ Ա-

սոնցմէ մէկն է նոյն դաշտին անուամբ և անոր գըլխակողմը եղած քարաբլուր մը, որոյ մէկ կողմը անուանի ուխտատեղին է Ս. Սարգսի, որուն մէկ ատամը խաչի մէջ անցընելով օրհներ և հոն կանգներ էր Ս. Մեսրովպ, ինչպէս կը յիշեն ստէպ մեր ԺԴ դարու պատմիչք և վարդապետք, Վանական, Վարդան և Կիրակոս. Ս. Սարգսի ծանօթ շարականին վերջի տունն ալ կը նշանակէ այս բանս։ Այս բերդաւոր և ուխտատեղի քարաբլրէն աւելի բարձր և քիչ հեռու նոյն դաշտէն 1500 ոտք վեր բուսած է քարալեռ մը, խարիսխն կէս մղոնէն պակաս շրջապատաւ, մութ զարնող դեղին պորփիւր և պազալտ քարէ. թէպէտ գագաթն մեծ պատառուած մը կայ քարայրի նման, բայց վարէն բոլորովին չեղջաձև սուլուլիկ սրածայր կ'երևի. այնպէս որ ճարտար ուղևոր տեղագիր մը՝ Եգիպտոսի բուրգերէն աւելի բըրգաձոյն կ'անուանէ զԳաւազին. զի աս է անունն՝ ըստ մատենագրաց մերոց, և ըստ այլազգեաց՝ Կէվարզին-դաշը։

Գաւազինի վրայ ալ նախնիք ամրոց մը չիներ էին, որ թէ և անոր գագաթան վրայ չէր կըրնար ըլլալ՝ այլ վարերը՝ արևմտեան կողմը, սակայն և այնպէս «Անմարտնչելի ամրոց» կ'անուանի ի Վարդանայ, որով և շատ հեղ ապաստան պատերազմաց. ԺԴ դարուն մէջ Թաթարք, Վիրք ու Հայ իշխանք իրարմէ խլել կու ջանային այս ամուր բերդը, որ վերջապէս այլազգեաց բռնութեամբ աւրուեցաւ, և դեռ կ'երևան մնացորդքն. ինչպէս գագաթն ալ՝ պատառուածքին մօտ քարակտուր ջրամբար մը։ Մօտակայ տեղաբնակք կ'ասանդեն թէ Հայ թագաւոր մը երբեմն պաշարեր է այս բերդը. բերդացիք նեղուած՝ լեռան գլուխը ելեր և այն քարանձաւին մէջ պահուըտեր են. պաշարողն ալ ետևնուն ընկած՝ չկարենալով դուրս հանել՝ կրակ վառեր և ծխով խեղդամահ ըրեր է զանոնք. և երբեմն, կ'ըսեն, հոն թափառող թռչունք քարանձաւին խորէն դուրս ձգեր են կանանց զգեստուց զարդեր։ Բայց ոչ միայն վայրենի հաւուց այլ և վայրենի մարդկան թաքստարան մը եղած էր տեղս, նաև քիչ ժամանակ առաջ, այսինքն աւազակներու. որք զիրենք հալածող Ռուսաց հետ ալ կռուելով՝ անոնց մէկ զօրավարը սպաննեցին։

ARMÉNIE

GAVAZINE

ԳԱՎԱԶԻՆ ԼԵՌՆԻՆ.

ՆՇՄԱՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

Հ. ՊԵՏՈՆԳԻ Վ. Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

Բ. ՊՐԱԿ.

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

Պետական Պոլիտեխնիկական Գրադարան
ՍԵՐԹԱՐԱԿԵԱՆՑ
ՀԱՅԿ. ՀԱՅՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ Արվ. ՍՍՀ
Ա. Մ. Ա. ՄՅՈՒՐԻՆԻ
ԱՆՎԱՆ ԱՆՎԱՆ ՍԵՎԱՆ

13. ՊԱՐԻՍՊՔ.

ՆՇՄԱՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

— ՆՇՄԱՐ 13 —

ՊԱՐԻՍՊՔ ԱՆՈՅ·

Գրիգորեան Պոզոսեան
ՍԵՐԵՖՐԷԿԵԱՆ

Անի· — Եթէ մոգիչ և եթէ յափշտակիչ ըսենք՝ անուն մ'է այս, որ հառաչանաց խոր արձագանգ մը հնչել կու տայ զինքը և զաղգը ճանչցող Հայու մը, նաև հեռի աշխարհներէ, ինչուան Լեհաստանի դաշտերէ և Տաւրիոյ ծովակոծ եզերքներէ. մանաւանդ երբ անոր գոյղն տեսարան մ'ալ յանկարծ երևի աչացը, ինչպէս այս Ժ.Գ. նշմարիկս ալ· որ իրեն հանդիպող աղգային բանասիրին կը ներկայացընէ այն հայկական հանճարոյ, զօրութեան, հարստութեան և բարեպաշտութեան՝ վերջին մեծանշան ապաստանարանին, Անի քաղաքին, հիւսիսային արևմտեան կողմի պարիսպները։ — Եթէ մէկն Կարնոյ լեռնադաշտէն իջնելով ի Բասեն և Սօղանլու լեռներէն անցնելով՝ մտնէ ի Վանանդ (Ղարս) և անտի ի Շիրակ, կամ թէ Պինկէօլ լերանց կողմէն նորաբուղխ Երասխայ ափերն 'ի վար խաղալով դիմէ 'ի Շօրէկէլ, և եթէ արևելքէն գալով Արարատեան երկու մեծագոյն լերանց՝ Մասիսու և Արագածայ միջոցէն անց-

նելով Երևանայ դաշտէն դէպ յարևմուտք գայ, քա-
նի մը ժամ հեռուէն կը տեսնէ լայնատարած դաշ-
տագետնի մը մէջ բարձրացած և խառնած հսկայաձև
կուտակութիւն մը պարսպաց և աշտարակաց. իբրև
նորաձև և այլանդակ կարաւան մը, անապատի մէջ
կանգ առած դադրած, և... իսպառ դադրած։ Կար-
ծէ որ անոր վրայէն ալ անցած ըլլայ անապատա-
գնաց տոչորիչ խամրիչ մեռուցիչ խորշակն, և այն
ընդարձակ շարժմանց և կենդանութեան կեդրոնը՝
մահացուցած արձանացուցած, լռռած լռքած։ Ո՛ր
կողմէն ալ որ տեսնուի, ո՛ր աչքով ալ որ նայուի՝
միշտ այսպիսի ազդեցութիւն մը կու տայ Անի իր
այժմեան դրից մէջ, նաև օտարազգւոյ, բայց սիրտ
ունող անձի մը։

Ցաւալի զարմանքն այս է, որ Անի քանի մը դար
հաղիւ ապրած է իր փառօք և ճոխութեամբ, մանա-
ւանդ թէ դար մը միայն, և երկու դար ալ՝ երկրոր-
դական կամ կիսկատար շնորհքով. իսկ չորս և
կամ հինգ դարէ ի վեր սրտաշարժ և սգաշարժ մեծ
մահարձանի գաղափար մ՝ընծայած է և կ՝ընծայէ,
և գուցէ ասկէ վերջն ալ դեռ երկայն ատեն. ինչուան
որ... արդեօք՝ ժամանակն, անհոգութիւնն և ա-
տելութիւնն՝ բոլորովին իրենց աւերածու գործը պի-
տի կատարեն, և հիմկու նշխարեալ շէնքերն ալ
Արմաւրայ և Արտաշատայ հողակուտից պէս անհե-
տացընեն, թէ՝ փափագելի՛ բաղդ և արդիւնական
ջանք մը, դեռ բոլորովին չընկած չկորածը՝ հա-
նեն իր մեծ ու շատ փլածքէն, և կանգնեն ինչ որ
դեռ կըրնայ կանգուն կենալ. և անգամ մ՝ալ կեն-
դանի և ընտանի շունչ շընչէ աղնիւն Անի։

Այլ քանի որ դեռ այս վիճակիս մէջ ենք, ներե-
լի ըլլան մեզի այս խօսքս. և դարձեալ զարմանա-
լով մը կարդանք մեր ազգին ամենէն ճարտար ամե-
նէն փափկախօս և ամենէն սրբազան տաղաչափին
երգը կամ ողբը. այն ամենաշնորհ Ներսիսի Կա-
յեցւոյ կաթողիկոսի, որ իբրև մարգարէական աչքի
անցածին վրայ գալիքն ալ տեսնելով, դեռ քաղքին
բաւական շինութեան ատեն և Բագրատունի թա-
գաւորաց ձեռքէն ելլելէն ճիշտ դար մ՝ետև, այսպէս
կը խօսի հետը, իր բուն ողբոց առիթ Եդեսիա քաղ-
քին դէմքով.

... Ըզքեզ՝ յայս հրաւիրեմ
Արևելեան քաղաքդ Անի,
Կըցորդ իմոյս լինել ձայնի,
Եւ ըսփոփիչ տարակուսի։
Քանզի և դու երբեմն էիր
Վայելչական հարսն ի քողի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի։
Շինեալ եղեր տուն արքունի
Ցընտրեալ նահանգըդ Շարայի՝
Թագաւորաց Բագրատունի,
Որ ի ցեղէն Իսրայէլի։...
Գեղեցկանուն զարմանալի,
Որ երբակի տառիւ բերի։...
Յորում էիր ժամանակի
Բերկրեալ ուրախ և ցընծալի.
Որպէս այգի ողկուզալի
Կամ ձիթենի պտղով լի։
Մանկունըք քո զուարթալի
Նըման նորոգ բուրաստանի.
Դստերըք քո պաճուճալի
Ցերդ և քընար միշտ ի խաղի։
Իսկ թագաւոր քո պանծալի՝
Նըստեալ յաթոռ թագն ի գլխի,
Եւ զօրականքն աստի ու անտի՝
Կալով ի սպաս իւր հրամանի։...
Հայրապետք, եպիսկոպոսք
Եւ քահանայք, ու այլք ըստ կարգի,
Իւրաքանչիւր յիւրում դասի,
Պատշաճաւոր յայն տաճարի։
Զոր թէ ասել հարկ լինիցի՝
Է գըժուարին ու անկարելի,
Եւ անօգուտ յայժմուս բերի.
Յորոց է ոչ մի ի միջի։
Քանզի անցին ըստ երազի,
Որպէս ծաղիկք ամարանի.
Ըստ յորդութեան յորդ վըտակի
Գարնանաբեր հեղեղատի.
Կամ զուռուցեալ պղպըջակի՝
Որ ընդ լինելըն պատառի։
Նըմանագոյն եղեալ նոցին
Վասըն մեղայ մեր զազրալի.

Սուրն անողորմն անօրինի՝
Որ մերս արեան է ի սովի՝
Ոչ է յագեալ և ոչ յագի
Մինչև ի գալ կատարածի։
Նոյն նա եհա՛ս ուրեմն ի քեզ...
Հընձեաց զորայն յանդաստանի՝
Կանաչագոյն որ ի հասկի.
Զայգին խըլեաց արմատաքի,
Մերկեաց յոստոյն ըզձիթենի.
Եհեղ զարիւն սրբոց յերկրի
Հոսեաց նըման ջըրոց գետի.
Աւար դիակն անթըւելի,
Անթաղ մեռեալ զէշ գազանի...
Մարմինք անկեալ մէջ փողոցի.
Եւ այլ բազումք որ ոչ թըւի,
Եւ է ասելն անկարելի,
Որք քեզ հասին յայնըմ վայրի
Բոլոր ամեն մասունք չարի։
Վասն այնորիկ, ո՛վ անձկալի,
Որ ես ներհուն այսր ամենի,
Ի քոյն յայնժամ խիստ աղետի՝
Ծանիր և զիմս ողբ կականի.
Եւ որպէս փոքր տարակուսի՝
Լեր տրտմակից ինձ յայս վայրի։...

Բայց մեր նպատակն այս տեղ ողբալ և տրտմիլ չէ, և ոչ ալ երկարօրէն յիշել կամ նկարագրել Անի քաղքին պատմական և աշխարհագրական դէպքն և դիրքը, այլ փոքր ի շատէ ճանչցընել մեր նշմարածը։ Սակայն որովհետև յետագայ քանի մը թիւեր ալ մեզի այլևայլ նշխարք և նշմարք պիտի ցուցընեն Անի քաղքին, հարկաւոր համարիմ ընդհանուր համառօտ տեղեկութիւն մը տալ, աւելին փափագողը ղրկելով մեզնէ առաջ շատ հեղ զայն տեղագրողաց [1]։

1 Այսպիսիք են, Հ. Մինաս, Պատմութիւն Անոյ, կամ Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, ի Վենետիկ. 1830։— Բազմավէպ, Ե, 1847։ — Կարապետ վարդապետ, ի Հայաստան լրագրի, 1848–49։ — Աբել Վ. Մխիթարեանց, Կ. Պոլիս, 1855։ — Սարգիս Ջալալեան արքեպիսկոպոս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1857։— Հ. Ղեւոնդ Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, 1855։— Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւն ի Փոքր և ի Մեծ

Մեր նշմարաց Թ. Թուին յիշած Գուգարաց աշխարհին Ջաւախք գաւառն և շրջակայքն՝ շատ մեծ ու պղտիկ լիճեր ունին. անոնցմէ մէկն ալ Այրարատ աշխարհին սահմանակից՝ Արփա անուամբ՝ գետ մը կ'արձրկէ համանուն, Արփա-չայը, և ըստ նախնեաց մերոց Աիռրևան. որ բարձր երկրէ մ'ի ջնելով և քարայատակ խորաձոր մը կտրտելով դարձ ի դարձի կ'ի ջնէ հիւսիսէն ի հարաւ յԵրասխ գետ. որոյ հետ գործած երկու անկեանցը միջոց Երուանդ թագաւոր Արշակունի իր զարմանալի քաղաքներն շինած էր, Երուանդակերտ և Երուանդաշատ։ Ասխուրեան իր ընթացից կիսէն վար աւելի խորտուբորտ ձորէ մ'անցնելով արևելքէն ի հարաւ և անկէ յարևմուտք կը դառնայ, պատելով քարաբլուր մը. և հոն իր աջ կողմէն (արևմուտքէն) կ'ընդունի գետակ մը, որ հիմայ Ազաձա-չայ կ'ըսուի, և որ միւսոյն նման քարտին և քարայատակ խորաձորի միջէն կ'անցնի, որ կոչուէր Ծաղկոցաձոր, իսկ գետակն կարծուի յոմանց հին ատեն Ռահ կոչուածն ըլլալ։ Այս երկու գետոց ձորերն բնականապէս անկիւն մը կը գործեն դէպ ի հարաւ, կամ արմրկան ձեւով սուր ցամաք մը. միւս կողմէն (հիւսիսէն) ալ կ'ըլլայ եռանկեան բացուածն կամ խարիսխն, որ կը նայի Շիրակայ դաշտին վրայ։ Երկու կողմերն այն երկու գետաձորերով բնական ամրութիւն մ'ունին, գրեթէ անմատչելի. անոր համար շատ հնուց՝ սրանկեան մէկ կողմը՝ որ բարձրկեկ քարաբլուր մ'է, բերդ կամ ամրոց մը շինուած է, և Ակի կոչուած, Շնորհալւոյն դիտածին պէս՝

Գեղեցկանուն զարմանալի,
Որ երրակի տառիւ բերի.

և զոր ինքն բարեպաշտօրէն կը վերածէ՝

Հայս, 1864, Վենետիկ։ — Յոհ. Տէր Աբրահամեան, Տեղագրութիւն Անի քաղաքի հանդերձ տեսարանացոյց պատկերօք. Թէոդոսիա, 1867. այս գործն մեր ձեռքը հասած չէ։ — Օտարազգի տեղագրողաց մէջ ամենէն նշանաւորն է Պ. Պրոսէ, Les Ruines d'Ani, avec Atlas, 1860, St. Pétersbourg. — Նշանաւոր է նաև Դէսիէ (Texiex) գաղղիացւոյ պատկերաւոր մեծ և թանկ գիրքն, Description de l'Arménie, de la Perse, etc., 1840, Paris, որ և կ'ընծայէ մեր նշմարաց մեծ մաս մը։

Յերրորդութեանըն խորհրդի,
Որ միշտ ի քէն երկրպագի.

և շատ հաւանութեամբ՝ Հայկազանց իր շինողաց ատենն ալ նուիրած էր Անահտայ պէս դից կամ դիցուհւոյ մը, և բարձրէն կը դիտէր իր ընդունայնակարծ երկրպագուները. աւանդութիւն մ'ալ կ'ըսէ թէ Գրիգոր Լուսաւորիչ այն չաստուածը վերցընելով տեղը սրբեր է յեկեղեցի Աստուծոյ։ Հաւանօրէն նոյն սկզբամբ կանգնուած է Դարանաղեաց գաւառին Անի բերդն ալ, որ ուրիշ անուամբն ինչուան հիմայ կոչի Կամախ։ Վարդանանց ատեն կը յիշուի այս Շիրակայ ամուրն Անի. զոր դար մ'և աւելի առաջ իր շրջակայ գաւառովն՝ մեծն Տրդատ պարգևեր էր իր խնամի Պահլաւունոյն Կամսարայ՝ որդւոյ Արշաւիրի, որոյ ցեղին ձեռքը մնաց մինչև Ը դարու վերջերը, յորում Կամսարականք վաճառեցին Բագրատունեաց։ Ասոնք սկսան երկրորդ անգամ շէնցընել հին Շարայ նահապետին հացաւէտ դաշտերը, մշակութենէ աւելի՝ քարուկիր շէնքերով, բերդերով, եկեղեցիներով. մանաւանդ երբ ի կէս Թ դարու գրեթէ իրենց սեփականեցաւ Հայոց իշխանապետութիւնը, որ և քիչ ատենէն փոխեցաւ ի Թագաւորութիւն. անով իրենց շէնքերն և նիստերն ալ եղան արքունիք։ Այն ատեն և աւելի առաջ ալ Շիրակայ գլխաւոր բնակատեղին էր Շիրակաւան կամ Երազգաւորը, հիմայ Պաշ-Շօրէկէլ կոչուած, որ Անիէն հինգ ժամի չափ վեր հիւսիսակողմն է, գետոյն նոյն աջակողմեան կամ արևմտեան եզերքը, և գոնէ կէս դար մը Բագրատունեաց առաջին Թագաւորանիստ տեղն եղաւ. յետոյ աւելի ամուր տեղւոյ կարօտութիւն իմանալով ընտրեցին զԱնի, որ արդէն ի բնութենէ ամրացեալ էր մեծագոյն մասամբ, մնար միայն հիւսիսային կողմն՝ եռանկեան բացուածն, որոյ երկայնութիւնն Ախուրեանէն մինչև ի Ծաղկոցաձորն՝ կողմերուն հաւասարեցընելու համար՝ գրեթէ գաղղիական հաղարչափ մ'է (քիլոմեդր). և ահա այս փոքր միջոցս է՝ զոր Աշոտ Գ. Ողորմածն՝ յամի 964 փակեց և ամրացուց պարիսպով և աշտարակներով. որոցմէ իբրև 20 քայլ հեռու նոր և մեծագոյն պարիսպ մը կանգնեց իբր 15 տարի վերջը՝ Աշոտոյ որդին, մեծագործն և սէգն Սմբատ Բ., Տիեզերակալ և Շահանշահ կո-

չուած։ Ասոր շինածն ոչ միայն երկայնութեամբն, այլ գուցէ և բարձրութեամբն գերազանց էր քան իր հօրը շինածն, որ անկէ ետև ըսուեցաւ փոքր և ներքին պարիսպ. սակայն ինչպէս որ բնական էր, թըշնամեաց բռնութիւնն աւելի արտաքնոյն հետ կռուելով հիմայ այդ սմբատաշէն մեծ պարիսպն մեծագոյն մասամբ կործանած և ցածցած է, իսկ ներքինն և փոքրն՝ դեռ կիսականգուն կայ. և ահա այն է մեր ԺԳ նշմարն. բայց երկուքն ալ ոչ սակաւ մասամբ նորոգուած են։ Վասն զի Աշոտոյ հիմնարկութենէն ճիշդ հարիւր տարի ետև՝ յամի 1064 Էլփ-Արսլան Սելջուկն նախ սկսաւ աւրել Բագրատունեաց գահը. յետոյ Պարսիկ ամիրայք ժառանգողք Անոյ սկսան նորոգել. որք և փոփոխակի կ'առնուին ի Վրաց՝ ԺԲ դարուն մէջ. մինչև ԺԳին սկիզբը Վրաց բանակին առաջնորդքն՝ հայազգի մեծ իշխանքն Զաքարէ և Իւանէ՝ գրեթէ ընդհանուր նորոգութիւն մը տուին քաղաքին և պարըսպացը, որոց ձեռակերտն և արձանագրութիւնք դեռ մնան. թէ և անոնց որդւոց ատեն թաթարք մեծ աւերածով տիրեցին Անոյ, յամին 1239. և անկէ ետև դար մը միջոց ալ շատ հեղ վտանգելով և նորոգելով հասաւ իր յետին մեծ արկածին, այսինքն ընդհանուր կործանման, աւերման և անմարդութեան։

Սակայն ո՞ր թուականին և որպիսի՞ դիպուածով եղաւ այս սև գործն. — Լենկթիմուրի աւերածութիւնն էր, թէ իրմէ առաջ ուրիշ բռնաւորի մը՝ զԱնին ամայացընող. — յանկարծական վա՞խ մը, սո՞վ մը, սրածութիւն մը, թէ ինչպէս շատերու կարծիք է՝ մեծ գետնաժաժ մը, որ այն բազմաբնակ բազմատաճար բազմահարուստ քաղաքը՝ դարձուց ի բազմաչխարելի աւերակ, և ի թագուհի աւերակաց աւերակացեալն Հայաստանի։ — Պատմութիւնն հիանալի լռութեամբ մը դեռ ծածկեր է մենէ այս դէպքս. որ և այնչափ հիանալի է, որչափ որ համեմատաբար շատ մօտ ատեն հանդիպած է. վասն զի դեռ Անոյ եկեղեցեաց մէջ ինչուան ԺԴ դարուն կիսէն վարձանագրութիւնք գտուին. ԺԵ դարին կիսէն ետև ալ կը յիշուի եպիսկոպոս մը միձակին Անոյ. բայց այս կըրնայ քաղքին ամայանալէն վերջ ալ՝ Խոշավանքի առաջնորդին համար ըսուած ըլլալ։ Միով բանիւ թուի թէ ԺԴ դարուն ետքերը եղած է Անոյ վերջին

աւերն և լքումն, զոր մինչև հիմայ ոչ պատմիչ մը, ոչ յիշատակարան մը և ոչ ճանապարհագիր մը յայտնած է մեզի։ Եւ այսքան մօտ ատենուան, և այսքան մեծահռչակ քաղաքի վրայ եղած լռութիւնն, այնքան յիշատակագրութիւն ընել սիրող ազգի մը մէջ, որպիսի են մերայինք, զիս աւելի կը զարմացընէ աստուածախառն սոսկմամբ մը՝ քան Բաբելոնի և Նինուէի մթին դարերն և սեւ օրերն։... Սակայն երբ կը տեսնենք որ նոյն իսկ մեր օրերն՝ յետ 2000 և աւելի երկայն տարիներու՝ Նինուէ և Բաբելոն քանեւհինգ և երեսուն դարեան փոշիները թօթափելով ի լոյս կը հանեն իրենց զարմանաձև անդրիները և բեւեռաձև արձանները, անյուսալի չէ որ անոնց թոռանց թոռ ըսուելու Անին ալ՝ քիչ ատենէ իր վերջի ողբերգութիւնը կամ ողբերգելի դէպքը յերեւան հանէ։

Հիմայ վերջին աչք մ՚ալ տալով մեր ԺԳ. Նշմարին, թէ ոչ այդ կիսաւեր կերպարանացը՝ գոնէ զանոնք սրբազանող և գրեթէ պահպանող խաչարձանին՝ գլուխ ծռենք։ Այդ սուրբ նշանին քանդակն կըրնամ ըսել որ Անոյ մեծագոյն և բազմագոյն զարդն է. Ծաղկոցաձորի ծործորն ալ ցամքեր, ծաղկունքն ալ խամրած են այսօր, բայց Անոյ պարըսպաց, աշտարակաց, եկեղեցեաց և ապարանից մնացորդաց վրայ՝ խիտ առ խիտ ծաղկանց կամ թիթռանց նման՝ անաւեր և անամաչ փայլեն մեր հարց բարեպաշտութեան և ճարտարութեան նշաններն. հաղար բիւր նշան։

Իսկ այս աշտարակներս զոր կը նշմարեմք՝ ոչ առաջին հին շինուածքն են և ոչ վերջինք, այլ խառնիմն. շատոնց՝ գուցէ և ամենուն հիմերն հին, վրանին նորոգուած, վերի ծայրերնին մաշած ընկած, աւելի բռնութեամբ մարդկան կրից քան բնութեան. և կան դեռ ինչուան ԺԲ. դարուն կիսէն արձանագրութիւնք, աւելի հին քան զԶաքարեանց ժամանակը. մէկ բարձր աշտարակի մը վրայ ալ գրուած է, «Աշոտոյ իշխանաց իշխանի է». ԺԱ. դարուն սկիզբը երկու Աշոտ կար իշխանաց իշխան, մէկն եղբայր Թագաւորին Սմբատ Յովհաննու, ինքն ալ Թագաւոր. միւսն խնամի Պահլաւունի իշխանաց, որ իր որդին փեսայացոյց քրոջ Գրիգորի Մագիստրոսի. այս ետքինիս կարծելի է արձանն, ի վերջ

ի դարու կանգնած, վասն զի Աշոտ վախճանած է ի 1002 թուին։

Ուրիշ աշտարակի մը վրայ ալ, քաղքին մեծ դըրան քով, քիւֆի գրով գրուած է որ Մանուչէ առաջին Պարսիկ տիրող ամիրայն կանգնել տուեր է, յամին 1072։ Անկէ քիչ տարի առաջ (1046–1056) Յունաց տիրապետութեան ատեն Առօն Մագիստրոս մը կ'ըսէ բերդին համար. « Բարձրացուցի բովանդակ զպարիսպ սորին կարկառակոյտ արձանօք և հաստահեղոյս ամրութեամբ »։

Ըստ ձևոյ շինութեան՝ աշտարակներուն շատն բոլորակ են, քիչերն քառակուսի. շատք կրկնայարկ և եռայարկ են, որք սանդուղներով իրարու կը տանին. շատերն կամարակապ են, և վրանին այլ և այլ ձևերով վայելուչ քանդակներ կան, նաև վարպետ փորուածք։ Քարերն հրաբղխի քարեր են դեղին կամ կարմրագոյն, մոխրագոյն, կանաչախառն և սեւ. խաչերն շատ տեղ սեւ ու սպիտակ քարերու շարուածքով ձևացուցած են, զատ ի միակտուր քանդակեալ խաչերէ. ամենն ալ կոփած, տաշած ողորկած, իբր երկու թիզ մեծութեամբ. և թէ և ի բնէ կամ կոփուած ատեններին կակուղ եղած են քարերն՝ այլ ժամանակն պնդեր և ողորկութիւններին պահեր է. աւելի քան զզմռեալ մարմնոց՝ պահելով ասոնց կենդանական շնորհքները։

Արտաքին պարիսպն՝ ինչպէս վերն յիշեցինք, հիմայ շատ աւրուած և ներքինէն տկար կ'երևայ, աշտարակներն ալ սակաւաթիւ, իսկ ներքինն եռապատիկ աւելի թուով կը ցուցընէ։ Մեր հոս նըշմարածն է Անոյ ներքին պարըսպին հիւսիսային արևմտեան կողմն, որ է ըսել Ծաղկոցաձորի քովն, միանգամայն և քաղքին գլխաւոր անկիւնն, վասն զի հոն կարծուի թագաւորական պալատն։

Այս պարիսպներս չթողած՝ պէտք է աւելցընեմ, որ թէ և քաղքին մէկայլ կողմերն կարօտ չէին պարըսպաց, պատճառաւ վերոյիշեալ ձորերուն, սակայն ոչ միայն հարաւային կողմը միջնաբերդին քով կան մնացորդք պարըսպաց, այլ և արևելեան կողմն ալ տեղ տեղ կ'երևան Ախուրեանի եղերքը. ևս առաւել հիւսիսային արևելեան կողմը՝ ուր պզտի վըտակ մը կը խառնուի Ախուրենի հետ իր առանձնակ ձորակովը, և այս կարծուի արձանագրի մը մէջ յի-

չեալ Գլիձորև. այս ձորագետակին բոլոր ներքին եղերքը պարիսպ մը քաշած է, իր Ախուրենի հետ խառնուրդէն սկսեալ մինչև ի գլուխ մեծ պարըսպացն, յարևելեան հիւսիսային անկիւնն։ — Այս երկու պարիսպներէն զատ՝ քաղքին հիւսիսային կողմն լայն խրամ մ'ալ ունէր ի պաշտպանութիւն, որոյ հազիւ հետքն կ'երևին հիմայ. և որոյ ջրերուն վրայ՝ Անոյ առաջին տիրող և աւրողն Էլփ-Արսլան՝ լաստերով հանեց իր սոսկալի զօրքերը։

Այսուհետև եթէ փափագի ընթերցողս Անոյ քաղաքին մէջը տեսնել հետաքննաբար, ինչպէս որ կարծեմ, ի հարկէ պէտք է ընտրել անոր դուռը։

Սերբերգեան
ՀԱՅ. ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ Արա.ССР



14. ԴՈՒՌՆ ԱՆԻՈՑ.

— ՆԵՄԱՐ 14 —

ԴՈՒՌՆ ԱՆՈՅ·

Ընդ իս ընդ այս է Ճանապարհ տրտմաթախիծըն քաղաքի·
Ընդ իս ընդ այս է Ճանապարհ առ կորուսեալըն ժողովուրդ···
Ողբ միանգամ մըտանէք՝ մի՛ և այլ յուսոյ ակն ունիցիք [1]։

Այս սրգաւոր և ահաւոր վերնագիրն՝ զոր Իտալացւոց քերդողահայրն իր լեզուին և գրչին անթարգմանելի գեղեցիկ պարզութեամբը գրած՝ պատշաճ սեպեր է դժոխային դրան մը վրայ դրոշմելու, հետաքնին Ռուս ուղեւոր մ՚ալ նախ պատշաճեցուցեր է մեր սրգաղգեաց այրի և ամայի քաղաքին դրանը։ Եւ յիրաւի, անոր դուրսը մէջը շուրջ բոլորը տեսնողն՝ ասկէ աւելի կամ պակաս բան պիտի չկարենար զրուցել, եթէ չյիշէր՝ որ երկրիս վրայ ամենէն յետին մնացուածն է յոյս։ Հայ մը պէտք չէ բոլորովին անյոյս մտնէ և ելնէ յԱնի, որքան ալ որ անոր այժմեան հանգամանքն և իր պէսպէս կորուսեալ ամբոխն՝ ճշմարտեն Տանդէի առաջին տողերը՝

Պարբսպաց՝ մասամբ քակուած և կործանած վիճակն չի ներեր ստուգել՝ թէ քանի՞ դուռ ունէին՝

1 Per me si và nella città dolente:
Per me si và tra la perduta gente...
Lasciate ogni speranza, voi ch'entrate!

քաղքին չէն ատենը. հիմայ ինչուան տասն դրանց նշանք կ'երևան, ոմանք դեռ բաւական անքակ մնացած. հարաւային կողմն, որ եռանկիւնաձև քաղաքին սուր կողմն է, հարկաւ քիչ դուռ ալ պիտի ունենար, և միայն մէկ դրան նշան կայ. միւս կողմերն երեք երեք հատ. բայց գլխաւորք մէկ մէկ հատ արևելեան և արևմտեան կողմերը, երեք հատ հիւսիսային ներքնապարըսպին, և երկուք նախապարըսպին կամ դրսի պարըսպին, որոց արևմտագոյնն աւերակօք լցեալ անմատանելի է, իսկ արևելագոյնն կիսաւեր. և ահա այս մեր տեսածն է (ԺԴ), ուսկից կը մտնենք, և կը տեսնենք ներքին պարիսպը. իսկ երկուքին միջոցն՝ որ ժամանակաւ տանց և պալատանց տեղի էր կամ զինուորաց զօրանիստ, բոլորովին անչէն և աւերակ է. որով անարգել կ'երևին ներքնապարիսպն և իր երեք դրունքն։ Ասոնց միջինն հարկաւ մեծագոյն և գլխաւորն է, երկու կողմնականքն ալ դրսի պարըսպին երկու դրանց կը նային, թէ և ոչ բոլորովին դիմացէ դիմաց։ Դրանց շինութեան արձանագիր չկայ, կամ տարակուսական է, այլ աշտարակաց՝ շատ. կան և ուրիշ յիշատակագրութիւնք կամ հրամանք. ինչպէս աւագ դրան վրայ գրուած է առանց թուականի, բայց պարսիկ ամիրայից իշխանութեան ատեն, որ Գրիգոր Աղայ և Յովհաննէս քաղքին վերակացուքն՝ որք պատրոնք կոչուին, և անոր եպիսկոպոսն Յովհաննէս՝ ջանացեր և վերցընել տուեր են քանի մը մաքսի հարկեր, որ առաջ չկան եղեր։ Այս աւագ և միջին դրան երկու կողմը բարձր և լայն աշտարակներ կը կանգնին. մէկուն վրայ քովէ քով երեք գեղեցկաքանդակ մեծ խաչեր կան կարմիր քարէ. մէկալին քով պարըսպին վրայ քառակուսի մեծ քարով առիւծ մը քանդակած է քալելու դիրքով։ Երկու՞ տեսակ նշանք, մէկն իշխանական զօրութեան քաղաքին տիրողին, միւսն ամենիշխան զօրութեան Քրիստոսի, որ աւերակաց և գերեզմանաց մէջ ալ՝ անմահութեան ցոյց է։

Մէկ մ'որ այս դռնէն ներս մտնենք կամ նայինք՝ ահա կ'երևի բովանդակ՝ տրտմաբախիծ քաղաքն, իր կոյտ կոյտ աւերօք և փլածօք. կորուսեալ ամբոխի և մեծ ամբոխի մը թողած մեծանշան նշխարք. որք նաև հինգ դարուց ապականութենէ ետև՝ կը բնան ճշմարտել Անոյ մեծ հռչակը, որ Ժ դարէն ի վեր

տիրեր է ազգերնուս մէջ, և օտարաց մէջ ալ տարածուած երբեմն, և աւելի քան իր 1001 եկեղեցեաց և բիւրաւոր պալատանց կեղակարծ համբաւն՝ ստոյգ էր անոնց և այնպիսեաց և բովանդակ քաղաքին գեղեցկութեամբն և հարստութեամբ, որով ըսուած է. «Անին չէն, աշխարհս աւեր. Աշխարհս չէն, Անին աւեր». այսինքն երբ Անին չէն էր՝ բոլոր աշխարհք աւերակ կ'երևար անոր առջև. երբոր Անի աւերեցաւ՝ անոր նշխարօքն կամ այն ատեն՝ ուրիշ աշխարհքներ չէն երևցան։

Ո՞րչափ էր Անոյ նիւթական շինութեան սահմանն. կամ ո՞րչափ տեղւոյ մէջ բովանդակած էին Անոյ զարմանալիքն։ — Եթէ քաղաքին ձորափակ և պարբսպապատ տարածութեանը նայինք, շատ փոքր է. վասն զի ներքին պարբսպաց և ձորեզրաց շրջափակն հաշուած է 4100 չափ (մեդր), որ և ոչ փարսախ մը կ'ընէ. և այսչափ միջոցին անհնար էր հազարաւոր եկեղեցիներ և պալատներ զետեղել։ Յայտնի է որ «Անոյ հազար ու մէկ եկեղեցին» ըսել և երդնուլն՝ արևելեան առակ մ'է բազմաթիւ նշանակելու. այսօր եթէ նկատենք Անոյ մնացեալ աւերակները՝ հազիւ 20 եկեղեցի և մատուռն որոշ կը նշմարենք, թէ կանգուն թէ կործան, և թէ աւելի մանր բնտռենք՝ գուցէ նոյնչափի նշան ալ գտուի։ Սակայն կրնանք ընդունիլ Անոյ հազար ու մէկն՝ եթէ խորհրդածենք որ, նախ, ժամանակն՝ անգութ օգնականներով՝ ոչ միայն դարէ դար այլև տարիէ տարի կը մաշեցրնէ, կործանէ և հողաթաւալ կը ծածկէ շինութեան նշաններն ալ. քառասուն կամ քիչ աւելի տարի է՝ որ սկսան ճանապարհորդք քիչիկ մը մտադրութեամբ քննել զԱնի. և անոնց առջիններուն և վերջիններուն նկարագրածէն կ'երևի՝ որ նաև այս եաքի 15 տարուան մէջ ալ շատ փոփոխութիւն և կործանմունք եղած են։ Դարուս սկիզբը դեռ 40 եկեղեցի կը համրուի եղեր՝ քիչ շատ կանգուն, որոց մէջ նաև մեծաշէն մայր եկեղեցին իր գմբեթովը, որ հիմայ իրեն մէջ ընկած փշրած է։ — Բ. Թէ և մեր պատմիչք այն առակաւոր հազարումէկէն զատ թիւ մը չեն ըսեր եկեղեցեաց, յանուանէ ալ՝ հիմակուան մնացածներէն զատ հազիւ հինգ վեց մը կը յիշուին, և թէ և մեր միջին անուանի պատմչաց մէկն՝ Կիրակոս՝ միայն «Եկեղեցի

բաղում կայր ի նմա » կ'ըսէ և կ'անցնի, իրեն ժամանակակից Եւրոպացի մը, (որ այժմու շատաշրջիկ և հետաքնին Եւրոպացի ուղևորաց նահապետ մը կըրնայ սեպուիլ), Անիէն անցած ատեն՝ յամին 1255, կը յիշէ որ 100 եկեղեցի կար հոն և 2 մզկիթ, հաւանօրէն զատ ի մատրանց, որով ի հարկէ հարիւրէն շատ աւելի կ'ըլլան եկեղեցիք։ Իսկ անկէ իբր 30 տարի առաջ գրող Արաբացի պատմիչ մը՝ կ'ըսէ, թէ Էլփ-Արսլանի Անին առնելու ատեն՝ 500էն աւելի եկեղեցի կար հոն։ — Գ. Ատոնց վրայ աւելցընելու է Ծաղկոցաձորի լայն քարափներու մէջ փորուած մատուռներն ալ, որոց թիւն դեռ անծանօթ է։ Ախուրեանի քարափանց վրայ ալ քանի մը տեղ կ'երևան փորածոյ տեղիք շինուածոց, թէ և դեռ եկեղեցի կամ մատուռ նշանակուած չէ։ — Դ. Յիշելի են և աշտարակներն, կրկնայարկք և եռայարկք, որոց ոմանց մէջ դեռ խորշք կամ խորանք կ'երևին. և Վարդան Պատմիչ յայտնապէս կ'ըսէ ներքնապարըսպին համար, թէ շինողն՝ Աշոտ Ողորմած՝ « զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց »։ Իսկ թիւ բրգանց կամ աշտարակաց՝ մնացածներէն գուշակուի՝ որ հարիւրաւոր էր։ — Ե. Դարձեալ, երբեմն եկեղեցւոյ ամեն մէկ խորաններն ալ մէկմէկ եկեղեցի կոչուած են։ Զ. — Յետ այսր ամենայնի, Անոյ քանի մը ժամուան շրջակայքն ալ հանդերձ Հռոմոսի — վանօք (Խոշավանք) քաղքին անմիջական վիճակ սեպուած կ'երևին [1]։ Արդ այս ամեն բան մէկ տեղ նկատելով առակն ստուգութիւն կը դառնայ, և անհաւատալի չըլլար Անոյ 1001 եկեղեցին, մեծ ու փոքր, հանդերձ մատրամբք գերեզմանաց և խորանօք. և Ուռհայեցի (Մատթէոս) պատմիչ մը ԺԲ դարուն՝ կըրնայ ըսել Անոյ պայծառ ժամանակին համար, թէ « Յայնմ աւուր Հազար և մէկ « եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի »։ ինչպէս որ բնակչացն համար ալ կ'ըսէ. « Էր Անի բաղմամ-

1 Հոս է գերեզմանատուն Թագաւորացն Հայոց. երբ յամին 1046 Յոյնք պաշարեր էին զԱնի, զոր արդէն ոմանք մատնած էին անոնց, տիրասէր Հայք խուռն դացին լալու այն գերեզմանաց վրայ, ապա թէ Թողուցին դռները բանալու Յունաց։ Ըսել է որ իրենք արևելեան կողմէն Ախուրեանի եզերքով կ'ելլէին Հռոմոսի վանքը երթալու, և այն կողմն ամրութեամբ միացած էր քաղքին հետ իբրև մատնակից։

«բոլ, լցեալ քաղաքն, բիւրք բիւրուց արանց և
«կանանց, ծերոց և տղայոց. որ և հիացումն ար-
«կանէր տեսողացն. զոր կարծեալ զօրացն բաղ-
«մաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց լցէ»։ —
Ո՞ւր թողունք և ստորերկրեայ քաղաքը. վասն զի
Անոյ տեղ տեղ ներքնատուններ ըլլալն՝ անտարա-
կոյս է, և արդէն երկու երեք տեղէն գետնափոր
մուտք ծանօթ են, որոց մէկն նոյն իսկ Ախուրեան
գետոյն տակէն կ'անցնի, ինչպէս Լոնտոնի Դամիզ
գետոյն գետնանցքն. այլ կ'ըսուի և չէ անհաւան՝
թէ քաղքին մեծ մասն կամ բոլորն ալ իր ներքնա-
յարկն ունի, ինչպէս քանի մ'ուրիշ աշխարհաց մեծ
քաղաքք ալ, զոր օրինակ Հռոմ, Բարիզ, և այլն։
Եթէ այսպէս է, միթէ անդէպ է կարծել թէ ըլլան
և ստորերկրեայ մատրունք կամ եկեղեցիք, ինչպէս
որ շատ ուրիշ հին եկեղեցիք ալ ունին իրենց ծա-
ծուկ ներքնայարկը, որ յունական բառով գրիպդա
կ'ըսուի։ — Կը թողունք նաև տանց առանձնական
խորանաձև կամ մատրանաձև տեղիքը, ուր որ
խաչն կանգնէր, կանթեղ մը կախուէր և խունկ
ծխուէր։

Արդ թողլով այս խնդիրը, Անոյ ստորերկրեայ
յարկն ալ, վերերկրեայ յատակն և հողակոյտներն
ալ, որոնք կը ծածկեն անոր մեծագոյն մասը և գրե-
թէ բոլոր կերպարանքը, փողոցները և զռկակները [1],
գործարանները, կուղպակները [2], իջևանատունք,
փնդուկք [3], ջաղացք, բաղանիք, և տունք մեծ ու
փոքր, և այլն, և այլն, — աչք մը տանք հիմայ մնա-
ցեալ աւերակաց մէջ որոշուելի չէնքերուն, որ 20
կամ 30 մը կ'ըլլան։

Եթէ քաղքին այս աւագ դրռնէն՝ ուսկից որ կը մըտ-
նենք՝ գիծ մը ձգենք հիւսիսէն ի հարաւ՝ մինչև ի խառ-
նուրդ Ալաճա (Ծաղկոցաձորի) գետոյն ընդ Ախու-
րեանի, որ գրեթէ ուղղահայեաց գիծ կ'ըլլայ, քաղա-
քը երկու հաւասար մասն կը բաժնէ, յարևմտեան՝
մեր աջ կողմը, յարևելեան ձախ կողմը. կամ Ծաղկո-
ցաձորի և Ախուրեանի կողմանք։ Այս գիծս երեք

1 Այսպէս կ'անուանին ճամբաներէն ոմանք. (ուղիք։)
2 Այսպէս կոչուին կրպակք կամ խանութք։
3 Այսպէս կոչուին օտար վաճառականաց օթեվանք և մթերանոցք, արաբացի բառով, յորմէ և Իտալացիք fondaco կոչեր են։

մաս բաժնելով անմիջապէս առջի մասին ծայրը՝ ուղղակի դիմացնիս կ՚ամբառնայ քաղքին բարձրագոյն շէն կէտն, սիւնանման մնիրա մը, մինակուկ կանգնած, իբր 100 ոտք մը բարձրութեամբ. պարսկերէն կարճ յիշատակարան և թուական մ՚ալ ունի (1198 տարուոյ)։ — Անկէ ոչ շատ հեռու և գրեթէ նոյն գծին վրայ (քիչ մը յարևմուտք) և քաղքին կեդրոնը՝ կ՚ամբառնայ ուրիշ մնիրա մ՚ալ, առջինէն քիչ պակաս բարձր, հանդերձ իր մղկիթովը. զոր յետոյ առանձինն պիտի նշմարենք (ԻԳ)։

Մեր երկրաժին գիծը բռնելով և գետերուն կամ ձորերուն ընթացքով հիւսիսէն ի հարաւ իջնելով, աջ կամ արևմտեան կողմերնիս, որ է Ծաղկոցաձորին՝ առաջին պատահած գլխաւոր աւերակն է Աղաքիլոց եկեղեցին, որ շատերէն աւելի աւրուած է, բայց գրեթէ ամենէն ալ աւելի սքանչելի և մաներ արուեստով քանդակած. զոր ընթերցողս կըրնայ գուշակել՝ երբ ուրիշ եկեղեցեաց ձևն ու զարդերը տեսնէ, և անոնցմէ շատ գերագոյն հաւատայ։ Երկրորդ, և կերպով մը ամենէն գլխաւոր շէնքն է թագաւորական կարծուած պալատն քաղքին հիւսիսային արևմտեան անկիւնը՝ Ծաղկոցաձորի վրայ և անոր անուամբ կոչուած դրան քով. զայս ալ յետոյ պիտի նշմարենք (ԹԻԲ)։ — Անոնցմէ վար դէպ ի հարաւ քանի մը հողակոյտ և շատաւեր գըմբէթներ թողլով, և անոնց հետ փոքրիկ եկեղեցի մ՚ալ քարաժեռի մէջ փորուած՝ արքունեաց հարաւակողմը, իջնանք նոյն ուղղութեամբ՝ արևմուտ. հարաւ, և պարբսպաց մօտ կը տեսնենք վարը բոլորքի վերը սրագմբէթ գեղեցիկ եկեղեցի մը, Ս. Գրիգոր Աղուղամբենց (ԺԸ)։ — Անկէ վար կ՚իջնենք չիտակ ի հարաւ մինչև քաղքին հարաւային արևմտեան մասը, զոր կը ձևացընէ Աղաճա գետն, արևմուտքէն ի հարաւ և յարևելս դառնալով. և այն լայն անկեան կամ թևին միջոցն է բլուր մը, յորում կանգնած է Միջնաբերդն, իշ-գալէ կոչուած ռամկօրէն, որուն բարձր յատակն պարբսպաց աշտարակաց կը հաւասարի. պատերազմական տեղ մ՚ըլլալով ի հարկէ թշնամութեան ալ նպատակ եղած և շատ աւրուած է. նոյնպէս իր եկեղեցիներն ալ, որոցմէ չորս հատ մը կ՚որոշուին հոն, մէկ մ՚ալ անկէ դուրս և հեռու՝ քաղքին ամենէն արևմտեան–հարաւային

ծայրը և երկու ձորոց մօտագոյն անկիւնը. եկեղեցւոյն ձևն ալ ութակողմն կ'երևի։

Գանք հիմայ մեր գծին երկրորդ և արևելեան կողմը։ Մինչնաբերդին դիմաց և անկէ ալ վար, քաղքին արևելեան հարաւային մասը, գետն արմըկնաձև պատելով նեղ լեզուակ մը կամ թերակղզի մը կը ձևացընէ. այս թերակղզիս երկու ձորոց միջոց երկայնաձև քարաբլրոյ պէս բարձրացած է. վրայի շէնքերուն մէջ գլխաւորն է Գրիգ-գիլիսե ըսուած եկեղեցին, ուր և վանք մը կար, հաւանօրէն և կուսաստան, Զաքարիա սպասալարէն շինուած, ի սկիզբն ԺԳ դարու, և իր մօրը և քերց հոգւոյն աղօթելու տեղ սահմանուած։ Արդարև անդրաղագոյն տեղի այնպիսի բազմաղբաղ քաղքի մը, որուն յետին ծայրն է, յարմար աղօթից և առանձնութեան։ Այս տեղս կարծուի հին հայկազնեան Անոյ ամրութիւնն և կուստունն, զոր Ս. Գրիգոր փոխեր է յեկեղեցի, և յետոյ տեղն ալ իր անուան նուիրուեր է։ Անկէ դէպ ի գետն ի վեր ի հիւսիս ելնելով անոր քարափանց վրայ կը գտնենք շատ շէնքերու անորոշ աւերակներ, որոց կարգն են նաև կամրջոյ մը մնացուածք, որ երկայարկ էր կ'ըսեն ի դիւրութիւն անցորդաց, մէկն մտնողի և միւսն ելնողի համար ի քաղաքն. այս կամուրջը Ռուսք քակած են, ինչպէս կը լսենք, որպէս զի իրենց երկիրը բերած Հայ գաղթականք այն ղին չանցնէին. անկէ քիչ մը հեռու ալ իրենց հողին վրայ Խազախաց պահակատուն մը հաստատեր են։ Կամուրջին դիմացն ալ Անոյ արևելեան պարըսպաց դուռ մը կայ։ — Քիչ մ'ալ դար վեր ելնելով գետեղերքէն՝ զարմանալի շէնք և փորուածքներ կ'երևան քարաժայռից վրայ, երկայն սանդըղաւոր և կամարակապ ճամբայ մը, գուցէ ջուր բերելու համար գետէն, որուն եղերքը կը հասնի, և նաև անոր դիմացի կողմը նոյնպէս կը շարունակէ՝ արևելեան գետափին վրայ. իսկ միւս ծայրն կ'երթայ կամ կուգայ բազմաշէն տեղէ մը, որոյ գլխաւոր շէնքն է Ս. Գրիգորի վանք և եկեղեցի մը, իր նկարէն պատկերաց համար Նագըշը-գիլիսե կոչուած, (Ի, ԻԱ), և ջուխտակ մատրունք, գերեզմանք միանձանց և խաչարձանք, ամենքն ալ քարաշէն և քանդակազարդ։ — Այս Ս. Գրիգորի պարիսպներէն իրրև հարիւր չափ (մեդր) միայն հեռու յարևմտակողմն,

և նոյնչափ հեռու բարձր մնիրայէն, առանձնակ շինուածոց ամենէն մեծն կ'երևի և ամենէն ալ սրբազանն, իբրև մեծազանգուած արտաքրութիւն մը ճարտարապետական արուեստի, միանգամայն և ահաւոր ու սրտառուչ աւերակ մը, հիացուցիչ նգաբուղիկեն Ս.նոյ։ — Ս.սկէ նորէն դէպ ի գետեզրն ելնելով յարևելեան հիւսիս, մօտ յանկիւնն զոր կը ձևացընէ մեր Գլի-ձոր կարծած փոքրիկ վտակն՝ խառնուելով յՍ.խուրեան, կան բաղմաւեր շինից մնացուածք. ինչպէս են եկեղեցի մը Տիրամօր կարծուած, Մուտք ստորերկրեայ քաղաքին՝ մօտ ի գետափն, և Բաղանիք որ քառակուսի չէնք մ'է, մէջը խաչաձև բաժնած, և որոյ անկիւններն մէկմէկ բոլորակ սենեակ կայ, իսկ կեդրոնն ալ աւելի մեծ բոլորակ մը։ — Դառնալով դէպ յարևմուտք՝ մօտ յարևելեան հիւսիսային դուռն ներքնապարըսպին, կը հանդիպինք Ս. փրկիչ եկեղեցւոյ (ԺԹ)։ — Ս. Փրկչի մօտ հիւսիսակողմն է Ս.նոյ հիւսիսային արևելեան գլխաւոր դուռն՝ զոր և կարծեմ Գլիձորոյ դուռն ըսուածը։ — Քիչ մ'աւելի հեռու՝ արևմտակողմը կայ Ս. Աստուածածնի նուիրած փոքրիկ բոլորակ աւեր եկեղեցեակ մը։ Ասկէ վեր՝ ինչուան պարիսպները՝ քաղքիս հիւսիսային արևելեան մասին մէջ յատուկ և որոշ չէնք մը չերևիր։ Իսկ Ս. Փրկչի և մայր եկեղեցւոյ միջոց եղած աւերակաց մէջ մէկն ալ՝ հիմայ երկբրցիք կ'անուանեն Ս.Գրքուռնի քաղնիք։

— Ահա ասոնք են մեր աղնիւ և անգին Ս.նոյ այժմու աչքի տակ ընկած գլխաւոր չէնքն։ Երբ անոնց թէ ճարտարպետական զանազան ձևերն և ճոխութիւնը դիտենք, թէ դիրքով իրարու մերձաւորութիւնը, և թէ անոնց միջոց հարկաւ եղած և հիմայ ծածկուած հարիւր եկեղեցւոյ և հազարաւոր տանց և կրպակաց չէնքերը, (զոր նոյնպէս հարկ է տեսածներնուս արժանաւոր ոճով և զարդով համարիլ), պէտք կ'ըլլայ խոստովանիլ՝ որ Ս.նի յիրաւի եթէ ոչ մեծ քաղաք մը՝ այլ մեծագործ չէնքերու թանգարան մը, կամ բովանդակ մէկ մեծ քարակերտ և նրբաքանդակ չէնք մ'եղած ըլլայ, սկսեալ ի պարըսպացն և ի բերդանց՝ մինչև ի գետնափոր քաղաքն. արժանի՝ թողած համբաւոյն, ազդած զարմանաց և սրդոյ, և ռամկին աւանդածին. Ս.նին չէն՝ աշխարհս աւեր. Ս.նին աւեր՝ աշխարհս չէն։

Գրիգորիանոս Պողոսեան
ՄԵՐԵՔԱԳԵՂԱՆՑ
Գ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

ՀՍՍՀ ԱԳԻ ԳՐ
ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

15. ԿԱԹՈՒՂԻԿԷՆ.

ԿԱԹՈՒՂԻԿԷՆ ԱՆՈՅ·

Ամենասիրելի Հրաշափառ Կաթուղիկէ Անոյ, ինչպէս կ'անուանեն պատմիչք. մեծապատիւն և մեծակառոյց քան զամենայն չինուածս Անոյ. «ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք զըմբեթաւորեալ՝ խորան երկնանման. (զոր չինողն) «զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ ոսկէթել անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց, և «բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, «որովք ջահանայր ըստ երկնային կամարին, Կաթուղիկէն սուրբ»[1]. և բարձրացեալ բազմէր որպէս թագուհի Հաղար-եւ-մէկ եկեղեցեացն Անոյ։ Իր սրբազան գրկաց մէջ կը մանկանային Բագրատունի Շահանշահք մեր. թագաւորք և հայրապետք կ'օծուէին. թագ կը դնէին ի պատիւ իրենց, և թագերնին կը վերցընէին ի պատիւ անոր. ուր արքայակերպն և պերճագոյնն կաթուղիկոսաց մերոց՝ Պետրոս Գետադարձ՝ աստուածափառ կը հանդիսանար և ճոռոմաբան լեզուաւն կը շարժէր զիշխողս և զիշխեալս.— ուր Սմբատք և Գագիկք իրենց ամենայն արքունի փառաց վրայ՝ վարդապետական բանասիրութեամբ ալ կը փայլէին. — ուր Հայոց բնիկ աշխարհին մէջ յետին մեծագոյն հանդէսներն կատարուեցան. սբխրալի՛ և մեծամեծ հանդէսներ, որոց յիշատակը և հանդիսացելոց կեցած տեղուանքը՝ դեռ երկու երեք դար ետք ալ՝ հարք որդւոց և որդիք թոռանց ցուցընէին և աւանդէին. և որոց համբաւն Ասիոյ ամեն

[1] Ասողիկ. Գ. Ը։

ազգ ամեն թագաւոր լսէր, և Պաղտատէն ինչուան ի Ստամպօլ զարմանք և նախանձ շարժէր։ Ա.հաւասիկ Հայոց եկեղեցեաց և մայրաքաղաքին անգամ մայրն և թագուհին, որ «այնպէս զարդարուն էր և «վայելուչ, բազմածնունդ, գերերջանիկ, որ և ըզ«մարգարէն ի հիացումն շարժեաց։ — Իսկ այս օր։ «— Նստի անչուք, անզարդ, մերկացեալ յամե«նայն գեղեցկութեանց. իբրև զկին մի այրի անոր«դի, մերկացեալ ի զարդուց, անկեալ ի պատուոյ, «պատառատուն հանդերձիւ նստեալ առանց մխի«թարի. նոյնպէս և աստ տեսանի։ Ջահք չիջեալք, «ճրագունք անցեալք, խնկոց բուրմունք և անու«շահոտութիւնք սպառեալք. պսակ տէրունական «սեղանոյն՝ փոշւով եւ մոխրով մածեալ»[1]։ Բըռնութիւն և բնութիւն փրցուցեր բարձեր են այս գազմապայծառ, երկնանման դշխոյին թագը. և ժամանակն՝ դեռ ոչ շատ տարի առաջ՝ անոր անթագ գլուխն ալ խոնարհեցուցեր է իր ծոցը։ Սակայն թէ և այրի և աւեր՝ դեռ իբրև լանջաբերձ մեծոգի տիկին մը, տաճարն այն իր անտխեղծ կուրծքը յարևելս պարզած՝ կարծես կը կանչէ, թէ ես անմահութեան համար կանգնած եմ, և հիմունքս անխախտ պիտի մնան մինչև որ մնայ երկիր, և քանի որ Հայ մը գտուի՝ իմ մէկ հետքս ալ պիտի գտուի։

Եւ յիրաւի, ինչ որ է Ա.նին մեր գաղափարաց կամ զգացման մէջ, այնպէս է Կաթուղիկէն ալ ի մէջ Ա.նոյ. Ա.նին մեր ազգային ճոխութեան և ճարտարպետութեան յետին և յայտնի թագաւորն է. Կաթուղիկէն ալ Ա.նոյ դշխոյն է, Հազարումէկ եկեղեցեաց թագուհին։ Քաղաքը աւրըշտըկող կամաւոր բռնութիւնն՝ ի հարկէ ամենէն աւելի այս մեծ շէնքիս հետ պիտի կռուէր, վասն զի սա էր Հայազգոյ ամենէն փառահեղ, սրբազան և սիրելի տեղն. և անշուշտ այսպէս ալ ուզած են ոմանք ընել. սակայն շէնքին մեծութիւնն, ամրութիւնն և բազմազարեան պատիւն՝ իբրև ահարկու ըլլալով բռնաբարողաց ձեռքերն անգամ թուլացուցեր, մուրճերն անգամ փշրեր են. և ոչ իսկ երկիր իր ահեղ ժաժերովն՝ կըրցեր է տապալել զայն, ինչպէս երբեմն զԱ.մենափրկիչն Ա.նոյ, և յետոյ ուրիշ եկեղեցիներ, այնքան

1 Արիստ. Լատիվ։



16. ՄԷՋ ԿԱԹՈՒՂԻԷԻՆ·

հաստատ հիմն և ամուր պատեր դրած էր անոր կանգնողն, Բագրատունի թագաւորաց ամենէն գո-ռողն և մեծագործ, Սմբատ Տիեզերակալ. և հինգ կարգ մեծամեծ քարերով ալ աստիճանաձև կամ սանդղաձև եկեղեցւոյն չորս կողմը պատեր, որպէս թէ չփորձէ տեղէն հեռանալու, կամ ոչ ոք յանդգնօրէն անոր մօտենայ։ Դիրքն ալ կ'երևի թէ արդէն քաղքին բարձրագոյն յատակին վրայ էր. անոր համար մինչև այսօր ալ այնպէս մեծ վսեմ և ահաւորահայեաց կ'երևայ։

Անոյ Կաթուղիկէն՝ խորհրդաւոր ժամանակաւ մ'ալ՝ Քրիստոսի երկրորդ հազարամեայ դարուն սկիզբն հարսնացեալ է նմա. հազար թուականէն անմիջապէս ետքը բացեր է ծոցը ի հոգևոր ծնունդ և սնունդ հաւատացելոց. իսկ իր յղութիւնն, եթէ կըրնայ այսպէս ըսուիլ, քսան տարւոյ չափ քշած է. վասն զի հիմնարկողն է Սմբատ Բ, որ թագաւորեց 978–990 տարիներու միջոց, իսկ նաւակատիքն եղաւ հազար թուականն լրանալէն ետև. մեզի այսպէս մնայուն շէնք մը թողլու համար՝ հարկաւոր էր այնքան ժամանակ։ Սմբատայ հարսն՝ այսինքն իր որդւոյն Գագկայ կինն՝ Կատրանիդէ [1] թագուհին աւարտեց շէնքը, ինչպէս կ'ըսէ իր պանծալի արձանագրութեամբն, որ ի վերայ հարաւային կողման կաթուղիկէին. « Ես Կատրանիդէ Հայոց թագուհի « դուստր Վասակայ Սիւնեաց թագաւորի, յողոր-« մութիւնն Աստուծոյ ապաւինեցայ եւ հրամանաւ « առն իմոյ Գագկայ շահանշահի՝ շինեցի զսուրբ Կա-« թողիկէս, զոր էր հիմնադրեալ մեծին Սմպատայ. « եւ կանգնեցաք տուն Աստուծոյ, նորոգ եւ կեն-« դանի ծնունդ հոգեւոր եւ արձան մշտնջենաւոր։ « Զարդարեցի եւ զարդուք պատուականօք, նուէրք « ինձ ի Քրիստոս եւ զարմից իմոց եւ որդւոց ». և այլն։ Սարգիս կաթուղիկոս ալ օծող Կաթուղիկէին՝ կ'աւելցընէ. « Հրամայեալ եմ ես Տէր Սարգիս՝ սպա-« սաւորաց եկեղեցոյս, յետ ելից (մահուան) բարե-« պաշտ թագուհոյս՝ զվարդաւարին յիսանեական՝ « միով քառասնիւ կատարել անխափան մինչեւ « ի գալուստն Քրիստոսի ». այսինքն վարդավա-

1 Այսպէս գրուած է անունն արձանագրին մէջ, իսկ պատմիչք Կատրամիդէ կոչեն։

ռէն սկսեալ 50 օրուան միջոց՝ 40 օր պատարագել վասն հոգւոյ Կատրանիդեայ թագուհւոյ։

Զզարմանայ ընթերցողս՝ թէ ինչու Սմբատայ պայազատն Գագիկ՝ իր կենակցին թողեր է իր հօրը հիմնադրածը և ոչ ինքն է շիներ իր սեփական ծախուք։ Պատճառն այս կը համարիմ՝ որ ինքն ալ մի և նոյն ժամանակ ուրիշ հոյակապ և հիանալի յիշատակարան եկեղեցի մը կը կանգնէր, և Քրիստոսի նոյն Ս. հազարամեայ դարուն հետ աւարտելով՝ ինն հետ ալ սկզբնաւորեց, և էր Սուրբ Գրիգորն գերահրաչակ, ինչպէս կ'ըսէ Սամուէլ պատմիչ՝ ընիկ Անոյ քաղաքացին. և իրմէ առաջ ծերունի ժամանակակիցն Ասողիկ կ' իմացընէ, որ Գագիկ ուղելով կենդանացընել մեծ յիշատակ մը, — այսինքն Գ. և Շինող մականուանեալ Ներսէս կաթուղիկոսին ի կէս Է դարու՝ Վաղարշապատու մէջ շինած հրաշալի Լուսազարդ և մեծ եկեղեցին Ս. Գրիգորի, որ այն ատեն փլած և կործանած էր, բայց աւերակներն կը քարոզէին իր մեծութիւնը և ճոխութիւնը, — ազնուախոհ թագաւորն անոր չափը և ձևը առնուլ տուաւ, և « նոյնաձև չափով և յօրինուածով յարդարել ի « քաղաքն Անոյ. հիմն արկեալ ի կուսէ Ծաղկոցա- « ձորոյն՝ ի բարձրաւանդակ տեղւոջն, տարփատենչ « տեսողացն. մեծատաշ վիմարդեան կոփածու վի- « մօք, մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուսան- « ցոյց պատուհանօք, երրակի դրամբք, սրանչատես « տեսմամբ գմբեթաւորեալ. գունակ գերամբարձ և « երկնանման գնդին »։ Այս խօսքերէս կ'երևի թէ թագաւորին շինածն աւելի բազմազարդ մանր աշխատութեամբ շինուած էր քան թէ կաթուղիկէն. սակայն կամ ոչ հաւասար հաստատուն, և կամ աւելի նախանձու նպատակ եղած, և այսօր իր ամեն զարմանալեօքն աւելի զարմանօք մ'ալ՝ աներևոյթ եղած է. մինչ անոր դրից մօտ ուրիշ Ս. Գրիգոր եկեղեցի մը՝ և նաև դեռ անկէ ալ հին շինութեամբ՝ բաւական նոր մնացած է (ԺԸ)։

Մեր կաթողիկէին շէնքին երկայնքն է բուն դըրսի պատերէն սկսեալ և ոչ աստիճաններէն, 34 չափ (մեդր), լայնքն ալ 22 [1]. ինչպէս ձևն պարզ երկայն

[1] Ներսին երկայնքն՝ դրռնէն ինչուան խորանին խորը՝ 27 չիշդ 100 Բարիզեան ոտք կ'ըլլայ։



17. ԿՈՂՄՆ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՆ.

Մատենադարան Պողոսեան
Սերեբրոպեանց
Ալեքսանդրապոլ

քառակուսի է, այսպէս հանդերձ իր ամենայն ամ-
բութեամբն և մեծութեամբն՝ սքանչելի վսեմական
պարզութիւն մ՚ալ ունի ճարտարպետական ոճոյ,
թէ ներսն թէ դուրսն. բովանդակ քարաշէն, մեծա-
մեծ կոփածու դեղին և սև կտորներով. քարէ զատ
նիւթ չերևիր, և ոչ իսկ քարը քարին կպցընող
նիւթ մը, գուցէ միայն կապարի թիթեղներ դրած
ըլլան անոնց միջոց։ Դրանց, պատուհանից, սեանց,
ձեղուան կամ ծածքին, և քանդակաց վրայօք չեմ
խօսիր. վասն զի ինքնին կըրնան նշմարիլ (Ի թիւ
Ժ.Զ), որ է եկեղեցւոյն կողմնական երեսն։ Ի հարկէ
կ՚իմանայ տեսնողն՝ որ այս նշմարիս մէջ աւելցուած
է կործանեալ գմբէթն, որչափ որ իր կտորներէն և
ուրիշ եկեղեցեաց ձևերէն կըրնար գուշակուիլ որ-
պիսութիւնն։ Կը պակսի գմբէթին գերունակ պսակն,
և պարծանքն քրիստոնէից, խաչն. որ Անոյ կաթո-
ղիկէին գագաթը կը փայլէր ոչ միայն սուրբ՝ այլ և
ճոխ. վասն զի համակ արծաթէ էր, մարդաչափ մե-
ծութեամբ. զոր ի զկծանս հաւատացելոց՝ Էջմ-Արս-
լանին բարբարոս զինուորաց մէկն վար ձգեց՝ որ
ստնակոխ ընեն, յետ 60 տարի Անոյ և Անեցոց
գլուխ ըլլալուն. բայց 60 տարի ալ վերջը՝ Վիրք և
Հայք, օրհնեալ ըլլան, զԱնի ազատելով ի Պարսից՝
մեծաւ փառօք նորէն կանգնեցին Քրիստոսի պսակը՝
իր հարսին գլուխը։

Կաթուղիկէն իր կողմանցը վրայ հինգ հինգ պա-
տուհան ունի երկայնաձև, մեծ և փոքր, արևելեան
կողմը մէկ պատուհան խորանին վրայ, երեք ալ
դասին կամ բեմին, նոյնպէս երեք ալ արևմտեան
ճակատը։ Իսկ դուռներն են երեք, մէկ մէկ երկու
կողմերէն դիմացէ դիմաց, մէկ մ՚ալ արևմտեան
ճակատէն, որ է աւագ դուռն. որոյ վերև պատուհա-
նաց միջոց, ինչպէս ուրիշ կողմեր ալ՝ արձանագրու-
թիւններն փորուած են և անմաշ անեղծ մնացած։
Մէկ կողմն ալ արևու ժամացոյց կայ, ժամերն հայե-
րէն այբուբենով նշանած. որոց վրայէն անդադար
կը սահի արեգակն, առանց բան մը չափելու. որ-
պէս թէ այն ընդհանուր դադարմանց մէջ ինքն ալ
իր նշանը դադրեցուցած ըլլայ, որոշ հրաման մը
չընդունելով որպէս ի Յեսուայ։

Դրռնէն ներս մտնելն՝ մեծ գործ մեծ կիրք մ՚է,
մանաւանդ ազգայնոյ մը։ Լոյս և խաւար, ուրախու-

թիւն և տխրութիւն, մեծութիւն և խեղճութիւն մարդոյ՝ մէկէն կը տեսնուին։ Խաւար, տխրութիւն և խեղճութիւն՝ հիմակուան վիճակին համար, որ ոչ միայն աւերը, մանաւանդ թէ աւերակօր լցեալ է, այլ և կը պժգամ ըսելու, փարախն Քրիստոսի բանաւոր հօտին և անոր Աստուածածին մօր նուիրեալ տաճարն՝ անբան ոչխարաց և անասնոց գոմ եղեր աղտեղեր է։ Գմբէթին փլածն ալ՝ մէջ տեղը բլրաձև կուտեր է։... Սակայն լոյս, ուրախութիւն և մեծութիւն՝ իր առաջին վիճակին համար. զոր դեռ բաւական կը յիշեցընեն այդ ահեղ և վսեմ շրջափակ ընդարձակութիւնն (ԺԷ), սեանց ստուարութիւնն և կամարաց թեւաձգութիւնք, պատերուն պարզութիւնն և լայնաբոլոր խորանն տասն հաւասարաչափ խորշերով շրջապատեալ, որոց երկու վերջի ծայրերն մէկ մէկ դուռ են, և քարէ շրջապտոյտ սանդուղներով պատին միջէն կը հանեն մատրանաձև վերնատանց, որոց տակ են նոյնպէս քարաշէն և կամարակապ աւանդատունք. իսկ ինքն խորանն իր լայն խորշը կը բարձրացընէ մինչև ի ձեղունն և կը խառնի վերին կամարաց։ Այս ամեն կամարները, բոլոր ձեղունը և հանդուցեալ գմբեթը բռնողքն՝ են չորս մեծ և ստուար սիւնք, որոց սիւնէն աւելի անուն մը կը պատշաճէր. վասն զի երեք չափ (մեդր) ստուարութիւն ունին ամեն կողմէ, թէ և բոլորովին քառակուսի չեն, հապա խաչաձև իմն 16անկիւն, և խարսխէն ինչուան վեր ալ այնպէս բարձրացած են շերտ շերտ ձևով, այլև այլ մեծամեծ կտորներով և նաև զանազան գունով, սև ու դեղին. շերտերն ալ միաձև չեն, այլ ոմանք անկիւնաւոր ոմանք կիսաբոլոր. նոյնպիսիք են նաև վեց թերասիւնք կամ որմասիւնք՝ որք կամարները պատերուն կը հաղորդեն ի հիւսիս, ի հարաւ և յարևելս։ Այս կամարաց վրայէն ուրիշ թեւեր ալ ձգուած վեր կը բռնէին իրենց արժանաւոր, երկնաձևան գմբեթը, իսկ յետ 800 և աւելի տարիներու՝ մեր օրերս՝ թուլցած ինկեր էր, իրենց կրածովը մէկտեղ։

Թողլով ճարտարապետական ուրիշ գիտելեաց և գեղեցիկ չափակցութեանց վրայ խօսիլը, յիշենք որ այս եկեղեցին մէջն ուրիշ բաժանմունք չունի, բաց ի խորանին երկու քովի նոյնաչափ և նոյնաձև ա-

ւանդատուններէն, որոց երկայնքն է 6 չափ, լայնքն 4։ Ժամատուն կամ գաւիթ չունի, և կ՚երևի թէ չէ ալ ունեցեր, բայց չորս դին ուրիշ մատրանց կամ չէնքերու հետք կան. որոց մէկն ալ պիտի ըլլար Սարգիս կաթուղիկոսի շինել տուած «Վկայարանն սրբոց Հռիփսիմեանց», ուր և փոխադրեր էր մեծ հանդիսիւ անոնց նշխարքը. բայց ամենքն ալ գրեթէ ինչուան հիմն կործաններ են, կարծես թէ իրենց վեհափառ դշխոյն ապրեցընելու համար իրենք զիրենք զոհելով. և ինքն որդեկոտոր մօր պէս կ՚ողբայ անոնց վրայ։ Եւ ոչ իսկ նորոգութեանց յիշատակն կայ այս կաթուղիկէիս, ինչպէս ուրիշ եկեղեցեաց. միայն դրսի չորս կողմի աստիճանները նորոգեր է յամին 1213 Տիգրան իշխանն, Ս. Գրիգոր Լուսաւորչի վանքի շինողն (Ի)։

Արդ իրաւունքն և երախտագիտութիւն, միանգամայն և պարծանքն մեր կը պահանջեն որ ընդ Սմբատայ թագաւորի և Կատրանիդեայ թագուհւոյ՝ օրհնենք գովենք մեր Հայ Վիտրուվիոս և Պալլադիոսը, անմահանալին Տրդատ ճարտարապետը, որ այս կաթուղիկէին շինութեան վերակացուն և ապրուեստաւորն էր. որ և անկէ առաջ Արգինայի կաթուղիկոսարանին մեծ եկեղեցին շիներ էր[1], որոց քանի մը պատերն միայն մնան հիմայ. և որոյ մէկ ճարտարութեան արուեստն ալ ինչուան Կ. Պոլսի գերահռչակ Ս. Սոփիայ պատերուն մէջ պահուըտած է. վասն զի յամին 989 մեծ գետնաժաժէ մը այն բիւզանդական ճարտարութեան և մեծութեան դշխոյն ալ վտանգեցաւ, և մեր յիշեալ ժամանակակից պատմչին խօսքով ըսելով, «Հերձանիւր «պատառմամբ վերուստ ի վայր. վասն որոյ բաղում «ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց՝ առ «ի վերստին նորոգել։ Այլ անդ գիպեալ ճարտարապետ «պետին Հայոց՝ Տրդատայ քարագործի, տայ զօրինակ «շինուածոյն իմաստուն հանճարով, պատրաստեալ «զկաղապարս կազմածոյն, և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան «զառաջինն»։

Եթէ Անոյ հաստակառոյց կաթուղիկէն կանգուն մնալովն և գեղեցիկ չափակցութեամբն՝ վկայ արուեստաւորն էր. որ և անկէ առաջ Արգինայի կաթուղիկոսարանին մեծ եկեղեցին շիներ էր[1], որոց քանի մը պատերն միայն մնան հիմայ. և որոյ մէկ ճարտարութեան արուեստն ալ ինչուան Կ. Պոլսի գերահռչակ Ս. Սոփիայ պատերուն մէջ պահուըտած է. վասն զի յամին 989 մեծ գետնաժաժէ մը այն բիւզանդական ճարտարութեան և մեծութեան դշխոյն ալ վտանգեցաւ, և մեր յիշեալ ժամանակակից պատմչին խօսքով ըսելով, «Հերձանիւր «պատառմամբ վերուստ ի վայր. վասն որոյ բաղում «ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց՝ առ «ի վերստին նորոգել։ Այլ անդ գիպեալ ճարտարապետ «պետին Հայոց՝ Տրդատայ քարագործի, տայ զօրինակ «շինուածոյն իմաստուն հանճարով, պատրաստեալ «զկաղապարս կազմածոյն, և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան «զառաջինն»։

Եթէ Անոյ հաստակառոյց կաթուղիկէն կանգուն մնալովն և գեղեցիկ չափակցութեամբն՝ վկայ արուեստաւորն էր. որ և անկէ առաջ Արգինայի կաթուղիկոսարանին մեծ եկեղեցին շիներ էր[1], որոց քանի մը պատերն միայն մնան հիմայ. և որոյ մէկ ճարտարութեան արուեստն ալ ինչուան Կ. Պոլսի գերահռչակ Ս. Սոփիայ պատերուն մէջ պահուըտած է. վասն զի յամին 989 մեծ գետնաժաժէ մը այն բիւզանդական ճարտարութեան և մեծութեան դշխոյն ալ վտանգեցաւ, և մեր յիշեալ ժամանակակից պատմչին խօսքով ըսելով, «Հերձանիւր «պատառմամբ վերուստ ի վայր. վասն որոյ բաղում «ջան եղև արհեստաւոր ճարտարացն Յունաց՝ առ «ի վերստին նորոգել։ Այլ անդ գիպեալ ճարտարապետ «պետին Հայոց՝ Տրդատայ քարագործի, տայ զօրինակ «շինուածոյն իմաստուն հանճարով, պատրաստեալ «զկաղապարս կազմածոյն, և սկզբնաւորեալ զշինելն. որ և գեղեցկապէս շինեցաւ պայծառ քան «զառաջինն»։

1 Ի միջոցի 973–985 տարիներու։

ձանացեր է իր ճարտարապետին քաջութեանը, չենք կրնար ըսել թէ սա ըլլայ անոր գերագոյն գործն. Սրգինայի կաթուղիկէին (որ աւելի փոքրագիր է) նշխարաց վրայ՝ աւելի բարակ գրուագներ և հարըստութիւն կը նշմարուի. սոնք գիտցածնիս, արդեօք ո՞րքան ուրիշ և աւելի հրաշալի ձևեր և շէնքեր ելած էին այն վարպետ Տրդատայ մատներէն և ճակատէն, որոց գուցէ անունն ատենօք գտնուի, թերևս և քանի մը հետք ալ, եթէ իրեն արժանաւոր քաջ հետախոյզ համազգի մ'ալ ելնէ։

Վերջին խօսք մ'ալ ըսենք մեր Անոյ սրբազան շինուածոց դշխոյին վայելչութեանը վրայ. որ որքան չքնաղ է իր քիչ զարդերու պարզութեամբը, որպէս անսեթևեթ բնագեղ կոյս մը, այնքան արժանն կը ստիպէր ներսէն ուրիշ զարդերով հարսնազգեստել զնա. և ահա զայս կ'իմացընեն թէ Անողնըկայ նախագրեալ խօսքն, և թէ Կատրանիդէի. որ բաց յոսկեղէն և արծաթեղէն անօթոց՝ ոսկէթել դիպակներով և բանուածներով ալ զարդարեր էր, վարագուրօք և նմաններօք։ Իսկ չահանալ կաթուղիկէին ըստ երկնային կամարին, որպէս կ'ըսէ պատմիչն, կը նըշանակէ նաև անոր գմբեթէն կախուած մեծ բիւրեղեայ ջահը, որ 12 լիտր կը կշռէր, և նոյնքան ալ ձէթ կը տանէր. և էր սա հիմնադրողին Սմբատայ առատաձեռնութեանց մէկ յիշատակն. վասն զի Հնդկաստանէ բերել տուեր էր բիւր գանձ ծախս ընելով. այս գումարին չափն որոշ չեմք գիտեր, բայց յայտ է որ շատ մեծ էր. և եթէ միայն ոսկի մ'ալ սեպէինք զգանձը դարձեալ 120–150000 Ֆրանգ կ'ընէր։ Զայս ջահս ալ Անոյ առման ատեն՝ գմբեթին խաչը կործանողն կտրեց վար ձգեց ջախջախեց։ — Սկիւթացի՛ բարբարոս. ոտքերդ մամուկի պէս ճարպիկ են եղեր գմբէթի վրայ և մէջը քալելու, բայց մատներդ՝ կարիճէն չարաճըճիկ։ Ժամանակն զքեզ և քու նմաններդ ալ այնպէս կը ջախջախէ կը փշրէ որ ոչ հետք և ոչ անուններդ կը մնայ, բայց եթէ սոսկման և զզուանաց համար. իսկ եթէ նոյնն՝ Անոյ շէնքերուն նմաններն ալ տապալէ, սակայն միշտ կանգուն միշտ յիշելի և պանծալի մնան Սմբատն, Կատրանիդէք, Ասպղարիպք, Տիգրանք և հսկայազօր Տրդատայ հաւասար մեր Վարպետ Տրդատն ալ։



18. Ս. ԳՐԻԳՈՐ ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ.

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՊՈՒՂԱՄՐԵՆՑ

Անոյ բազմաթիւ եկեղեցեաց մէջ՝ զայս ոչ միայն բաղդաւորաց մէկն կըրնանք համարիլ, այլ կերպով մը մեծաբաղդ քան զամենքն. վասն զի իր մէկ անուանակից եկեղեցիէն զատ՝ զոր յետոյ պիտի նըշմարեմք (ի) ամենէն աւելի ամբողջ և անարատ մնացեր է, ամենէն աւելի ալ նշանակուած տարիք ցուցընելով. ամենէն հին և ամենէն նոր կըրնայ ըսուիլ Անոյ Ս. Գրիգորն Ապուղամրենց։ Երկու ուրիշ առաւելութիւններ ալ ունի. մէկ մը ճարտարապետական արուեստի կատարելութիւնն, մէկ մ'ալ դրից վայելչութիւնն. և կըրնայ երկուքովն ալ՝ թէ դրիւք և թէ շինուածով Գեղեցկահայեաց ըսուիլ. և ինչ որ ծերունին Ասողիկ ըսաւ (երես 50) Գագկայ շինած Ս. Գրիգորի մեծ եկեղեցւոյն համար՝ ասոր ալ կը պատշաճի՝ ըստ դրից տեղւոյն և ըստ տեսքին. «Ի «կուսէ Ծաղկոցաձորոյն, ի բարձրաւանդակ տեղ- «ւոջ. տարփատենչ տեսողացն»։ Ի հարկէ Թագաւորին շինածն շատ աւելի մեծ և բազմազարդ էր, և անեմանեն Ս. Գրիգոր կը վկայուի. բայց սա երիցագոյն է, և գուցէ Թագաւորին փափագն ալ շարժած

ըլլայ այնպիսի բարձրադիր տեղ մը՝ աւելի հոյակապ տաճար մը նուիրելու Հայոց ամենէն նուիրական անձին, Ս. Գրիգորի, որ մէկ կողմէն քաղքին վրայ նայի, միւս կողմէն դուրս՝ Ծաղկոցաձորի վրայ և այլ անդին։

Այս պահլաւեան եկեղեցին, (ինչպէս կըրնամք անուանել՝ թէ նուիրելոյն ցեղին անուամբ թէ նուիրողացն կամ՝ շինողաց, որ են Լուսաւորչի ցեղէն ի-ջած կամ՝ խնամի Պահլաւունիք), 900 տարուան չափ հնութիւն ունի, և Քրիստոսի հազար թուականէն անդին կ'անցնի. գուցէ ճարտարին Տրդատայ մատներն ասոր ալ դպած են՝ որ այպէս հաստատուն մնացեր է. բուն շինութեան թուականն չկայ, սակայն հնագոյնն է 995 տարւոյն, Շուշանայ տիկնաց տիկնոջ՝ ամուսնոյ Գրիգորի իշխանաց իշխանի՝ որ վախճանած է յամի 982. ասոր ալ կարճ արձանագրութիւն մը կայ անթուական, որ գոնէ մահուանէն քանի մը տարի առաջ գրուած կըրնայ ըլլալ. և գուցէ ինքն ըլլայ եկեղեցւոյն շէնքը լմընցնողն. բայց հիմնարկողն անտարակոյս իր հայրն է, Ապուղամր. վասն զի արձանագրի մը մէջ ասոր անուամբ Ապուղամրևնց Ս. Գրիգոր կոչուի եկեղեցիս. և եթէ միայն 10 տարի առաջ քան իր որդին մեռած սեպենք զսա՝ ահա իր հիմնած տաճարն նախաջրհեղեղեան նահապետաց իննդարեան տարիքն կ'ունենայ անպակասորով թէ մեր հայրենեաց և թէ ուրիշ աշխարհաց հնագոյն կանգուն եկեղեցեաց մէկն ալ կ'ըլլայ. և որ զարմանալին ալ է՝ նորոգութեան ոչ նշան կայ և ոչ յիշատակ։ Քանի մը արձանագրութիւն միայն ունի, Գրիգորի և Շուշանայ որդւոց, մէկն Վահրամայ՝ իշխանաց իշխանի, մէկն Ապղաբիպայ Հայոց մարզպանի, յամի 1040. որ և կ'իմացընէ՝ թէ իր հօր վախճանած ատեն (58 տարի առաջ) ինքն շատ տղայ ըլլալով չէ վայլած հօրը տեսքը, բայց սէրը զգացեր է. անոր համար շիներ է իր հօրը Հանգստարան, նաև իր վաղամեռ Համզէ եղբօր և Սեղա քրոջ, երկու մատուռն կամ՝ ինչպէս ինքն կ'ըսէ սենեակ շիներով, Ս. Ստեփանոս և Ս. Քրիստափոր. որք հաւանօրէն են եկեղեցւոյն հիւսիսակողմը գտուած աւերակ գեղեցիկ մատրունքն։

Եկեղեցւոյս այսպէս անխախտ հաստատուն մնալուն պատճառն իր ճարտարպետական շէնքն, չափն

և ձևն ալ է. վասն զի տարածութեամբ փոքրիկ է, և պատերուն թանձրութեամբ մեծ. դրսուանց 12 կողմ բաժնուած է. բայց անանկ լայն են անկիւններն՝ որ գրեթէ բոլորակ կ'երևի, և տրամագիծն է դրսանց իբր 12 չափ (մեդր). մէջն՝ որ վեց հաւասար կիսաբոլոր բաժնուած է եղերքէն՝ և ոչ 10 չափ երկայնք ունի. ասկէց գուշակուի որմոց թանձրութիւնն, որոց համեմատութեամբ կաթուղիկէին պատերն շատ բարակ են։ Դրսանց պատին խարըսխէն քիչ վեր ամեն երկու կողման մէկուն մէջ սրանկիւնաձև > այսպէս խոր խորշ բացած է. որով շրջապատն վեց քառակուսի աղեղնաձև կամ պայտաձև պատ կ'ելլայ՝ ներսի կէս բոլորներուն հետ. բայց ասոնք կիսաբոլորէ աւելի են, գրեթէ և կլոր։ Ասոնց իրարմէ զատող պատերուն աղեղնաձև երկայնեալ վեց ծայրերէն կ'ամբառնան մէկ մէկ սիւն, կեդրոնը մեծ բոլորակ մը ձևացընելով, վրան ալ վերը ցընելով վայելուչ գմբէթը՝ 12 պատուհանօք և համավայել կոնաձև գտակովը. որուն մաշեալ գագաթն՝ թուի թէ կը բնտռէ իր թագը, զսուրբ խաչը, որ գուցէ և ոսկէզօծ ցոլար փայլէր շատ հեռու, ա-

ռեւն ճառագայթիւք, Ասոյ արևմտակողմը Շիրակայ դաշտին մէջ. և շատ հողագործք անոր ցոլն ու ցայտը տեսնելով, պահ մը աչուընին և ձեռուընին վերցընելով յօգնութիւն կանչէին զԱ. Գրիգոր՝ իրենց վաստակոցը, և օրհնէին անոր պայազատ Պահլաւունիները, իրենց բարերար և բարեպաշտ տէրերը։

Եկեղեցւոյս դուրսը թէ և կ'երևին քանդակք՝ այլ ոչ խուռն և շատ. ներսն ալ աւելի պարզ է, բնական և անկարօտ գեղեցկութեամբ լցեալ. այնպէս որ հայկական ճաշակի և ճարտարապետութեան ընտիր օրինակաց մէկը կրնայ ընծայել այս Ասպուզամբրենց Ս. Գրիգորս. և անշուշտ Ասոյ այն շէնքերէն մէկն է՝ որոց վրայ հիանալով անգղիացի և փռանկ ճանապարհորդք՝ վկայեցին որ յունական ճաշակ և փափկութիւն ունին։ Ահա այս եկեղեցւոյս համանման է Նախարարծի եկեղեցին Անիէն դուրս ժամանակ մը հեռու, որոյ համար կ'աւանդի՝ թէ հաքառորդ մը հեռու, որոյ համար կ'աւանդի՝ թէ հարուստ հովիւ մը շինած ըլլայ, վասն այնորիկ և այսպէս կոչի, և Թարգմանի յայլազգեաց Զօպան-գիլիսէսի։

և ամեն ալ է. վասն զի տարածութեամբ փոքրիկ է, և պատերուն թանձրութեամբ մեծ. դրսուանց 12 կողմ բաժնուած է. բայց անանկ լայն են անկիւններն՝ որ գրեթէ բոլորակ կ'երևի, և տրամագիծն է դրսանց իբր 12 չափ (մեդր). մէջն՝ որ վեց հաւասար կիսաբոլոր բաժնուած է եղերքէն՝ և ոչ 10 չափ երկայնք ունի. ասկէց գուշակուի որմոց թանձրութիւնն, որոց համեմատութեամբ կաթուղիկէին պատերն շատ բարակ են։ Դրսանց պատին խարըսխէն քիչ վեր ամեն երկու կողման մէկուն մէջ սրանկիւնաձև > այսպէս խոր խորշ բացած է. որով շրջապատն վեց քառակուսի աղեղնաձև կամ պայտաձև պատ կ'ելլայ՝ ներսի կէս բոլորներուն հետ. բայց ասոնք կիսաբոլորէ աւելի են, գրեթէ և կլոր։ Ասոնց իրարմէ զատող պատերուն աղեղնաձև երկայնեալ վեց ծայրերէն կ'ամբառնան մէկ մէկ սիւն, կեդրոնը մեծ բոլորակ մը ձևացընելով, վրան ալ վերը ցընելով վայելուչ գմբէթը՝ 12 պատուհանօք և համավայել կոնաձև գտակովը. որուն մաշեալ գագաթն՝ թուի թէ կը բնտռէ իր թագը, զսուրբ խաչը, որ գուցէ և ոսկէզօծ ցոլար փայլէր շատ հեռու, ա-

ռեւն ճառագայթիւք, Ասոյ արևմտակողմը Շիրակայ դաշտին մէջ. և շատ հողագործք անոր ցոլն ու ցայտը տեսնելով, պահ մը աչուընին և ձեռուընին վերցընելով յօգնութիւն կանչէին զԱ. Գրիգոր՝ իրենց վաստակոցը, և օրհնէին անոր պայազատ Պահլաւունիները, իրենց բարերար և բարեպաշտ տէրերը։

Եկեղեցւոյս դուրսը թէ և կ'երևին քանդակք՝ այլ ոչ խուռն և շատ. ներսն ալ աւելի պարզ է, բնական և անկարօտ գեղեցկութեամբ լցեալ. այնպէս որ հայկական ճաշակի և ճարտարապետութեան ընտիր օրինակաց մէկը կրնայ ընծայել այս Ասպուզամբրենց Ս. Գրիգորս. և անշուշտ Ասոյ այն շէնքերէն մէկն է՝ որոց վրայ հիանալով անգղիացի և փռանկ ճանապարհորդք՝ վկայեցին որ յունական ճաշակ և փափկութիւն ունին։ Ահա այս եկեղեցւոյս համանման է Նախարարծի եկեղեցին Անիէն դուրս ժամանակ մը հեռու, որոյ համար կ'աւանդի՝ թէ հաքառորդ մը հեռու, որոյ համար կ'աւանդի՝ թէ հարուստ հովիւ մը շինած ըլլայ, վասն այնորիկ և այսպէս կոչի, և Թարգմանի յայլազգեաց Զօպան-գիլիսէսի։

Ապլղարիպայ արձանագիրն ցուցընէ՝ որ այս տեղս էր իր հօր և հարազատաց յետին հանգստարանն, գերեզմանատունն, բայց ոչ բոլոր ցեղին. վասն զի իբրև 50 տարի մ՝առաջ իր մեծ եղբայրն Վահրամ՝ միւս եղբարցն ալ օգնութեամբ՝ հիմներ և շիներ էր մեծահռչակ Մարմաշէն վանքը՝ Շիրակ գաւառէն դուրս, և հոն թաղուած է իր Սոփիա տիկնաւ և ուրիշ պայազատօք։ Իսկ մեր Ապլղարիպայ մահուան հանգստարանն՝ յայտնի չէ մեզ հոն կամ հոս ըլլալն. բայց այս յայտնի է որ այս եկեղեցւոյս շէնքին հետ ալ մնալի և անմահանալի է ինքն, որպէս նաև Ս. Փրկչի հետ, ուր հրաւիրէ զմեզ հետևեալ Նշմարս։


ՀԱՅԿԱՆ ՍՍՀ



19. Ս. ՓՐԿԻՉ ԱՆԻՈՑ.

Ս. ՓՐԿԻՉ.

Մեծահաւատ և մեծահարուստ Պահլաւունի մարզպանին Ապլղարիպայ՝ մնացեալ ձեռակերտաց վեհագոյնն, Անոյ հաղար և մէկ եկեղեցեաց շինագոյն մնացեալներէն, միանգամայն և ազգային ճարտարութեան գեղեցկագոյն յիշատակարաններէն մէկն ալ՝ այս Ս. Փրկիչ եկեղեցիս է. որ և ասկէ յառաջ նշմարեալ Ս. Գրիգորին պէս իր նախանձորդն և հաւանօրէն իրմէ մեծն ունեցեր է, Ամենափրկիչ անուամբ. որոյ շինողն և շինութեան տարին չեմք գիտեր, իսկ փլչելուն թուականն և օրն անգամ նշանակուած է, (1131, նոյեմբ. 27), նշանակ իր մեծութեանը և համբաւոյն [1]:

Ս. Փրկիչ՝ Անոյ արևելեան հիւսիսային կողմն է, Ամուրեանի քարափան քով, և անոր ընդունած փոքր առուակէն ոչ հեռու և երկուքին անկեան մօտ: Զևոմն և ոճով ճարտարպետութեան ալ նման

1 Ոմանք կարծեն թէ այս Ամենափրկիչս ոչ էր Անոյ՝ այլ Շիրակաւանի Ամենափրկիչն, զոր Ա. Սմբատ թագաւորն կանգնել տուեր էր յամին 897. և որ նորոգուելով ի կէս ԺԲ դարու՝ հիմոյ դարձեալ փլած և աւերակ է:

է Ս. Գրիգորի, բայց անկէ մեծ և անկէ զարդարուն, անկէ աւելի ալ թանձր պատերով։ Դրրսանց նմանապէս շուրջն բոլորշի կ՝երևի, այլ և նոյնպէս գետնէն կանգուն մը վեր 12 կողմ ունի, նոյնպէս ալ 6 սրանկիւն > միջամուխ խորշեր. բայց նոյն իսկ կողմերէն ալ քիչ մը վեր՝ թեթև կերպով կամ ամենաբուռ անկիւններ կը ձեւացընէ պատն. որով բոլոր մէկէն 20անկիւնի մը կ՝ըլլայ, որ քիչ հեռուէն ամենեւին բոլորակ կ՝երևի։ Կողմէ կողմ դրսանց երկայնքն և լայնքն հաւասար 16 չափ է, քիչ աւելի. իսկ միջի տրամագիծն է 13 չափ ու կէս. եղերքն մէկալ եկեղեցւոյն պէս թերաբոլորք են. բայց կը զանազանին անկէ, մէկ մը անոնցմէ պակաս կլորածև ըլլալով, մէկ մ՝ալ որ ասոր բաժանմունքն ութ են, վեցն հաւասար, եօթներորդն՝ որ է խորանին տեղն՝ աւելի մեծ. ութերորդն՝ որ է անոր դիմաց արևմտեան մեծ դուռն՝ մէկալոնց նման բոլորակ չէ, այլ աւելի չիտակ. հարաւակողմն ալ դուռ ունի, առանց բոլորակն աւրելու. իսկ անոր դիմացի թերաբոլորակին մէջ պատ քաշած՝ ամպիոն մը շինուած է բարձրկեկ, ուր կ՝ելլըցուի քարաշէն սանդուղներով պատին միջէն, և անկէց ալ վեր ինչուան եկեղեցւոյն տանիքը։ Ութ բոլորակաց կամ բաժանմանց միջոցն մէկ մէկ միակտուր սիւն կայ. որոց վերնախարըսխաց վրայ կը հանդչի եկեղեցւոյն շրջաբոլոր պատն կամ պատերուն շրջանակն, և կը վերցընէ բոլորշի փողը, 12 բարձր և նեղ կամար բաժնուած՝ բարակ և զուգակ սիւներով, մէջերնին պատուհաններ. անոր վրան ալ գմբեթին սրածայր կոնն, որ Նշմարիս մէջ դրսանց թափած կ՝երևի, ինչպէս որ ալ եղեր է քիչ տարի առաջ, բայց դեռ գմբէթն գոց կեցած է։ Այս գմբեթին բոլորշի գլանն կամ փողն բաւական լայն և մեծ ըլլալով, մանաւանդ թէ եկեղեցին ալ շատ մեծ և քառակուսի չըլլալով դրրսանց բոլոր եկեղեցին երկու յարկ կ՝երևի, վարն բազմանկիւն, վրան բոլորակ, ա՛լ վեր գագաթն ալ սուր կոնաձև։ — Եկեղեցւոյս մէջ նորութիւն կամ առաւելութիւն մ՝ալ կայ, որ մեր առջի յիշած եկեղեցեաց մէջ չկար, և է նկարէն պատկերներն պատերուն վրայ, թէ և աւրըշտրկած. ասոր համար ալ տեսողք որոշ բան մ՝ըսած չեն, որով մենք ալ չենք կրնար։

Ս. Փրկչի ճարտարապետն կըրնայ Տրդատայ ա-
չակերտ մ'ըլլալ. վասն զի շինութիւնն աւարտեր է
յամի 1036, «շատ ջանիւ եւ մեծածախ գանձիւ»
Ա.պլղարիպայ, ինչպէս կ'ըսէ արձանագրին մէջ. և
դարձեալ ուրիշ արձանագրութեամբ մ'ալ կ'իմացը-
նէ՝ որ նախընթաց տարին Սմբատ-Յովհաննէս թա-
գաւորէն հրովարտակ առած՝ գնաց ի Կ. Պոլիս առ
Միքայէլ կայսր, և նոյնպէս «շատ ջանիւ և մեծա-
«ծախս գանձիւ» բերաւ մասն ի սրբոյ խաչէն. և
տաճարին շինութիւնը կատարելով կանգնեց «զնը-
ջանն յուսոյ ի պսակ հարսին Քրիստոսի.» զոր և
զարդարեց, հարըստացուց և տիրացուց շատ հողե-
րով և կուղպակներով, «ոսկւով և արծաթով և ա-
«կամբք պատուականօք... հին եւ նոր կտակարա-
«նօք»: Եկեղեցւոյն քով ապարանք մ'ալ շինեց և
անոր ընծայեց. նոյնպէս քովը այգի մը կար Մշրնկի
ըսուած, զայն ալ առաւ ի տիրոջմէն, որ էր Պետրոս
Գետադարձ, և նուիրեց եկեղեցւոյն: Ասոր հոգա-
բարձու կարգեց Գրիգոր անուամբ երէց մը, պա-
տուիրելով որ անոր ցեղին մէջ մնայ այդ հոգաբար-
ձութիւնն. և անոնցմէ մեռնող քահանայից ամեն
մէկուն հոգւոյն համար քառասունք մ'ըլլալի. իսկ
իր հոգւոյն համար՝ ի վարձ այսքան աշխատութեանց
և նուիրաց՝ ամեն կիրակի գիշերապաշտօն ընել
մինչև «ի գալուստն Քրիստոսի»: Պետրոս կաթու-
ղիկոսն ալ նոյն թուականով արձանագրած է՝ որ
Ա.պլղարիպայ նուէրքն և պատուէրք հաստատուն
պահուին, և խափանողքն նզովեալ ըլլան:

Խորանին երկու դին պատերուն գրեթէ երեք մե-
դրաչափ թանձրութեան մէջ մէկ մէկ փոքր աւան-
դատուն շինած է. և գուցէ ասոնք ալ առանձին ե-
կեղեցի կամ խորան սեպուած ըլլան. վասն զի շի-
նութենէն քանի մը տարի վերջ (1041) Քրիստափոր
անուամբ հարուստ մէկն իր հայրենի եօթն տուները
պարգևելով Ս. Փրկչի կալուած, կը պարտաւորէ
զքահանայս Ս. Փրկչի, որ իր հոգւոյն համար «յա-
«մեն ամի ի չորս եկեղեցիքս՝ յեկեղեցին վեց օր
«ժամ առնել անխափան՝ մինչև ի գալուստն Քրիս-
«տոսի»: Կամ նոյն թուականին կամ ինն տարի
վերջ Շահիկ անուամբ մէկն ալ՝ ուրիշ նուէրք տա-
լով Ս. Փրկչի հետ կը յիշէ և զՍ. Յոհաննէս, որ
այն չորս եկեղեցեաց մէկն պիտի ըլլայ, եթէ Ս.

Փրկչի մէջ համարինք և եթէ դուրս, ինչպէս կարծել տայ եկեղեցոյ անունն, թէ և հիմայ ուրիշ եկեղեցի կամ մատուռ չեն յիշած ուղևորք անոր մօտ։ Իսկ իբր 130 տարի վերջը (1173) եկեղեցին նորոգողք կը յիշեն անոր (չորս) քառևսին խորանևսն, որ և Քրիստափորի յիշեալ եկեղեցեաց հետ նոյնք թուին։

Իսկ այս նորոգողք եկեղեցւոյս են՝ Տրդատ քահանայ մը՝ ի քահանայական ցեղէ. և իր խուշուշ երիցակինն. և կ'ըսէ. « Շինեցաք վերատին զմեր գանձագին հայրենիքս զՍ. Փրկիչս՝ շատ աշխատութեամբ, և նորոգեցաք յառաջին պայծառութիւնն... « Շինեցաք սմա ժամատուռնս ամարանոյ և ձմերանոյ ». որով երկու եկեղեցանման տեղիք ալ կը յայտնուին։ Այս բարի տէրտէրս տէրտիրաց որդի և թոռն՝ բնիկ Արուճեցի է եղեր, ուր ունեցած չորս այգիները նուիրեր է Ս. Փրկչի, երկու ալ տուն ասոր դիմաց, և ուրիշ բարիք. և ասոնց փոխարէն կը պայմանէ ամեն տարի քառասունք մը, կէսն իրեն կէսն ալ տէրտիկնոջը. ասկէ զատ երկու ալ (օր թէ քառասունք?) Սողոմոնի որդի Սարգսկան մը համար, որ հաւանօրէն ուրիշ նուիրատու մ'է։ Անկէ 120 տարի ետև (1291) Շիրասցի Մխիթար մը հօս շիներ է Զանկակատուն և կախեր է զանկակներ. և երբ կ'ըսէ « զվարճանէք ի ձայնից սորա՝ ասացէք, Տէր Աստուած, ողորմեա Մխիթարայ և ծնողաց իւրոց », և այլն։ 50 տարի ալ վերջը, մօտ ի կէս ԺԴ դարու (1342) և Անոյ յետին ամայութենէն քիչ առաջ, Երկայնաբազուկ մեծին Զաքարիայ սպասալարի ցեղէն ուրիշ Զաքարիայի մը թոռն՝ Աթաբէկ Վահրամ՝ Վասիլ անուամբ մէկու մը ձեռօք նորէն նորոգեր է Ս. Փրկչի գմբէթը, իրեն կենաց և նախնեաց յիշատակին համար։

Այսպէս յիշատակաց արժանի Ս. Փրկիչս երկու երեք անգամ նորոգուեր է, առանց մեծ փոփոխութեան. վասն զի թէ ձևն և թէ մեծամեծ կոփածոյ քարերն, և թէ արձանագրութիւնքն՝ վկայ են առաջին և հին շինութեանն, և կու մնան մեծագոյն նորոգութեան, որով նորոգուի Աղղարիպայ անունն ալ։



20. Ս. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ.

Անոյ հազար և մէկ եկեղեցեաց հազիւ տասն կամ քսանի անունն մեզի հասած է, և անոնց մէջ նոյն իսկ քաղքին ներքին պարսպաց մէջ ահա այս երրորդ Ս. Գրիգոր եկեղեցին է՝ զոր կու նշմարեմք (Ի). և որ մէկալներէն որոշուելու համար՝ մականուամբ մէկտեղ Ս. Գրիգ. Լուսաւորիչ կ'ըսուի, և նաև վանք Ս. Գրիգորի։ Եթէ պէտք ըլլար՝ զայս ալ նոր վկայութիւն մը կըրնայինք գրել Հայոց Ջերմեռանդութեանն՝ առ առաքելաշաւիղ նախահայրապետն իւրեանց. բայց երբեք այն մեծ նահատակն Քրիստոսի չէ պակսեր պաշտօն ընդունիլ իր զաւակներէն, և ոչ սոքա յընծայելէն։ Բայց այս երեք յիշեալ եկեղեցիքս կըրնան գրաւական ըլլալ քանի մը երեքնեւրու ալ Անոյ մէջ. որոց մէկն ալ շատ հաւանօրէն պիտի ըլլար Ախուրեանի արմըկան մէջի քարաբլրի վրայ, Գըզ-գիլիսէի վանաց մէջ։

Արդ այս նշմարած Ս. Գրիգորնիս գրեթէ Ապուզամրենց Ս. Գրիգորի հորիզոնական գծին վրայ կ'ինկնայ, քաղքին արևելեան կողմը, և քան զայն աւելի մօտ է իր ճորին, այսինքն Ախուրեան գետոյ. քարափան դժար ու խոժոռ տեղ մը, գոնէ հիմա. կուան տեսքով, որ ունի նաև վսեմական գեղեցկութիւն մը։ — Գրեթէ նոյն խոժոռութեան մէջ ալ դտաւ զտեղս ասկէ 660 տարի առաջ Տիգրան Իշ-

խանն յաղագէ Հոնենց, երբ մեծն Զաքարիա կը նորոգէր զԱնի. անոր հաւանութեամբ ինքն ալ զանազան նորոգութիւն և շինութիւն ընելով, եկաւ այս գետեղրս ալ, ուր հնուց ուխտատեղւոյ պէս եկեղեցեակ մը կայ եղեր Մատռան Աստուածածին կոչուած, և վանք մ'ալ յանուն Ս. Լուսաւորչին. բայց զանազան քաղաքական փոփոխութեանց պատճառաւ՝ թողուած աւրուած, «քաղաքին և մացառ տեղի» դարձած։ Տիգրան կը գնէ դայն, ինչպէս կ'ըսէ, իր «հալալ գանձով ի հերէնէտիրաց[1]. եւ բազում աշ«խատութեամբ և գանձով պարսպեցի շուրջանակի. «շինեցի զեկեղեցիս յանուն սրբոյ Լուսաւորչին «Գրիգորի, և զարդարեցի բազում զարդիւք», և այլն. և իր երկար արձանագրութեան նայելով յիրաւի շատ և շատ տեսակ նուէրքներ տուեր է եկեղեցւոյն և վանաց, զոր նոյնպէս ինքն նոր շիներ է, նաև բնակարաններ իշխանաց. որոց ամենուն հարուստ կալուածներ կապեր է, գեղ, տուն, այգի, կրպակ, պարտէզ, պահէզ, վինդուկ, ջաղաց, միլ, և այլն, թէ մօտ թէ հեռի տեղուանք. ուրիշ վանք մ'ալ շիներ է Բեխենց մականուանեալ, և դայն ալ Ս. Գրիգորի առաջնորդին հոգաբարձութեան յանձներ է։ Այսչափ բարեաց ապերախտ եղողին և խափանողին, իրաւունք տալու է որ ըսէ՝ թէ ոչ միայն յերից ժողովոց հայրապետաց՝ այլ «եւ ինն «դասուց հրեշտակաց նզովել եղիցի»։ Իսկ իրեն և իր տիրոջ Շահնշահի (որդւոյ մեծին Զաքարիայ) և անոր զաւակացն համար՝ անխափան պատարագ մատուցանել կ'ապրսպարէ, առանց օր եւ քառասունք սահմանելու։ Այս արձանագիրս գրած է յամի 1215, յետ կատարելու շինութիւնը, զոր սկսած է Զաքարիայի օրով և անոր որդւոյն Իշխանութեան ատեն աւարտած։

Այս թուականս յայտնեց որ եկեղեցիս մեր ինչուան հիմայ տեսածներէն ամենէն ետքը շինուածն է. ասոր կը վկայէ ինքնին շէնքն, որ քան զամենայն շինուածս Անոյ շէն է, ուղղորաց և տեսողաց երեքկին վկայութեամբ ալ, թէ ներսն թէ դուրսն, այնպէս որպէս թէ ճարտարապետն դեռ նոր ձեռքը վերուցած ըլլար վրայէն։ Զևոմ մեղի ծանօթ-

[1] Հայրենի ժառանգութեամբ տէր եղող։

21. ԳԱՒԻԹ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ.



ներուն մէջ կաթուղիկէին կը նմանի. երկայնաձև քառակուսի է, դրսանց 14 չափ երկայն, լայնքն՝ իբրև 10. մէկ դուռ միայն ունի՝ յարևմտից, որուն քով եղածը յետոյ կը տեսնենք։ Իսկ կողմն՝ որոյ պատկերն է մեր նշմարածն՝ (Ի) 10 բարձր և նեղ կամարաձև բաժնած է, 11 զոյգ բարակուկ սիւներով. նոյնպէս ալ արևելեան ճակատն համեմատութեամբ բաժնուած՝ 7 զոյգ սիւնակներ ունի. իւրաքանչիւր զոյգ մէկ խարբսխի տակ մէկ խարբսխի վրայ. նոյնպէս են նաև գմբէթին բոլորն եղած սիւնակքն, որ զայն սովորական ոճով 12 կամարաձև կը բաժնեն։ Ասոնց շէնքն ու զարդերն՝ հանդերձ միջին գեղեցկագրուագ նեղ պատուհանաւ և սեանց կամարներուն անկեանց միջոց քանդակեալ թըռչնօք՝ յայտնի կ'երևին մեր նշմարողին։ Իսկ եկեղեցւոյս մէջն շատ չի նմանիր կաթուղիկէին. վասն զի ազատ սիւն չունի. այլ դռնէն՝ իբրև միջին երկայնութեան երրորդ մասամբ հեռի՝ պատերն խարբսխաձև ներս մղուած են, և անոնց կոթընցուցած մէկ մէկ սիւն, որոց վրայէն կամարներ ձգուած. նոյնպէս ալ խորանին երկու կողմէն առաջ եկած պատերէն. և այս կամարներն են որ կ'ամբառնան գմբէթը։ Խորանին երկու կողմն ալ հաւասարաչափ նեղ աւանդատունք կան։

Այս եկեղեցւոյս սեփական առաւելութիւնն է՝ միջի, որպէս և դուրսի ուրիշ կողմ մը՝ նկարէն պատկերներն, որ դեռ բաւական անեղծ մնացեր են, և չափաւոր շնորհք ալ ունին. ասոնց համար է որ եկեղեցիս ի ռամկաց Նազարեանց-գիլիսէ կոչուի։ Այս պատկերացս հեղինակքն Յոյն կը համարուին, և անհաւան չէ. մանաւանդ որ քանի մը յոյն և վրացի արձանագիրք ալ կ'իմացընեն որ ժամանակաւ այդ երկու լեզուաց կամ՝ ազգաց ձեռքն անցեր է տեղս, և պատկերաց վերևն ալ յունարէն գրուած են անունք սրբոց։ Բայց խնդրելին այս է՝ թէ յետոյ ուրեմն նկարած են պատկերներն՝ եթէ նոյն իսկ շինողն Տիգրան նկարել տուեր է, ինչպէս կըրնայ մեկնուիլ իւր իսկ արձանագրութեամբ ըսածն, թէ « և զարդարեցի... և պատկերագործ խատերով ». եթէ այս եռքին բառս ուրիշ բան չի ցուցընէ։ Տիգրանայ արձանագիրն այս մեր տեսած կողման վրայ է, որ է հարաւայինն, իսկ յոյն և վրացի կարճ արձա-

նագրութիւնքն՝ դրան աղեղնաձև կամարին վրայ։ Կը սկսի Յոյնն սաղմոսին տունը. «Տէր, սիրեցի զվա-
«յելչութիւն տան քո, և զտեղի յարկի փառաց
«քոց». — զոր Տիգրան չինեաց, կըրնանք աւելցը-
նել. — Վրացին ալ փոխ կ՚ասէ. «Այս դուռն
Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա»։ Գուցէ ա-
ւելի ստոյգ ըլլայ ըսելն, թէ գրողն՝ արեամբ և խել-
քով խառնուրդ մ՚ըլլայ Հայոյ, Վրացւոյ և Յունի։
ԺԲ դարուն մէջ Վրաց թագաւորութեան ծաղկած
ատեն՝ անոնց իշխանութեան մէջ եղող Հայք ոմանք՝
անոնց և Յունաց դաւանութիւնն և ծէսն ալ ընդու-
նեցան. անկէ ելաւ այդ խառնուրդ ըսածս. նոյն
ինքն մեծին Զաքարիայի եղբայրն՝ Ամբասէկն Իւանէ
ալ յունածէս եղաւ. այսպէս մնացին իրենց ցեղէն
շատերն, որոցմէ Թուի և Տիգրանէն իբրև 100 տա-
րի վերջը՝ Ամիր սպասալար Շահանշահն, որ իբրև
տէր այս Ս. Գրիգորի վանաց՝ տուեր է զայն Մաթէ
կամ Մատթէոս անուամբ մէկուն, և սա իր Թենի
կնաւն՝ յամին 1320 արձանագրութիւն մ՚աւելցու-
ցած է եկեղեցւոյս արևելեան կողմը. որոյ մէջ ու-
րիշ նորոգութիւն չի յիշեր, բաց ի ջրին ճամբէն,
զոր Տիգրան շիներ էր, և յետոյ «խաղտել էր ու
«կտրել». և սա նորէն բերեր է ղջուրն ի վանքս։

Եկեղեցւոյս դրան կից և առջևը փոքրիկ և գեղ-
ցիկ կամարակապ գաւիթ մը կայ (ԻԱ.), բայց կամար-
ներն փլած, միայն սիւներն՝ չորս հատ՝ կանգուն և
արձակ մնացեր են. երեքն արևմտեան կողմէն,
ի հարաւոյ, որոնք կը խառնուէին դրան երկու կող-
մի թերասեանց վրայէն ձգուած կամարներուն։ Հիւ-
սիսային կողմն ալ հաւասար գաւթին լայնքին՝ մա-
տուռ մը կայ, նոյնպէս կործանած. բայց կամար-
ներն կանգուն մնացեր են։ Ատոնց մէջն ալ կ՚երևին
դեռ նկարէն պատկերք. բայց պատկերքն թէ ներսը
թէ դուրսը՝ միայն սրբոց չեն, այլ և զարդի տեղ
կենդանեաց և բուսեղինաց։ Իսկ սեանց և կամա-
րաց վայելուչ ձևն և քանդակք կըրնան գուշակուիլ
այս ԻԱ. նշմարէս ալ։

Ցիշեալ պատկերաց և օտարլեզու արձանագրաց
համար՝ Եւրոպացի տեսնողք ոմանք՝ Յոյն եկեղեցի
անուաններ են զսա. բայց ոչ միայն եկեղեցւոյն ար-
տաքին ձևն՝ այլ և ներքին դիրքն խորանին, և շինո-
ղին արձանն՝ կը վկայեն որ Հայոց համար շինուած

է, և չինողն ալ ամենէն աւելի Հայանուն մէկ մ'է։

Որչափ որ ասոր (Տիգրանայ) գլխաւոր շէնքն՝ Եկեղեցին՝ անարատ մնացեր է, այնքան քովի ուրիշ շէնքերն, որք էին վանականաց և իշխանաց բնակարան, բոլորովին կործաներ աւրուեր, և եկեղեցւոյն քով ըլրի պէս դիզուեր են, մանաւանդ հիւսիսային կողմը. արևելեան կողմն ալ կ'երևան քաղքին գետնայարկը կամ ստորերկրեայն տանող կամարակալին մնացորդքն. և երկու կողմը՝ մեր ի սկզբան յիշած (երես 43) քարակտուր սանդուղքն կամարակապ գոցուած, որ կ'երթան մինչև ի կոտրած կամուրջն Ախուրեանի։ Այս է կարծեմ Տիգրանայ արձանագրին մէջ կոչած Բեշքենակապն, զոր և Գլիձորի ու կամրջին միջոց ըլալ կ'երևեցընէ։ Եթէ ինչ բանի համար ըլլալն ալ յայտնի չըլլայ, այս կը յայտնուի՝ որ Տիգրանէն առաջ չինուած է եղեր. և շատ տեսակ շէնք կան եղեր Ս. Գրիգորի վանքին քովերը։

22. ՍՐԱՀ ԱՊԱՐԱՆԻՑ.

ՍՐԱՀ ԱՊԱՐԱՆԻՑ·

Ինչպէս որ ի սկզբան Ա.նոյ մէջ շրջագայելով նկատեցինք՝ եկեղեցիներէն զատ քիչ և ամենաքիչ չէնքի մնացորդ կայ. և այն առասպելանման յիշեալ 100,000 ոսկեզօծ պալատներէն, կամ յետին պատմչի մը նմանցուցած օրիորդաձև և հարանապաձոյձ տուներէն և ոչ մէկ մը կանգուն մնացեր է։ Ա.յլ կայ մնայ միայն մէկ բնակարանի մը մասն, թէ և փոքր մասն ամբողջին համեմատութեամբ, սակայն ըստ բաղդի՝ Ա.նոյ ամենէն գլխաւոր բնակութեան մասն, որպէս և սովորաբար կարծուի։ Ա.րքունի ապարանից կամ պալատան մնացորդն ըսել կ'ուզեմ, առանց բոլորովին հաստատելու այսպէս ըլլալն. որովհետև անժխտելի փաստ կամ նշան և վկայութիւնք կը պակսին։ Պատմիչք չեն յիշեր թէ արքունի ապարանքն Ա.նոյ որ կողմն էին։ Եթէ ապահովութեան տեղ փնտռենք՝ աւելի արևելեան և հարաւային կողմեր դառնալու է. իսկ եթէ զուրիչներն ապահովցընելու կողմ փնտրուի՝ հիւսիսային արևմտեան կողմը դառնալու է, Ծաղկոցաձորի գլուխը։ Եւ ահա այս կողմս, ձորին և քաղքին ներքին պարբսպաց

անկիւնն է՝ արքունի պալատ կարծուածն. զոր ոմանք ալ պարբսպաց շատ մօտ, որով և թշնամեաց յարձակման ենթակայ սեպելով, անյարմար կը տեսնեն թագաւորի բնակութեան. և ոմանք յԵւրոպացի բանասիրաց՝ աւելի յարմար սեպած են որ այս տեղս Պահլաւունեաց պալատ եղած ըլլայ, թագաւորէն ետև այս ցեղս ամենէն անուանի և մեծիշխան ըլլալով. որուն հաւաստիք մը չկայ. և առաջին կարծիքն աւելի հաւանական և աւելի հասարակ ընդունուած է։ Ռամիկն ալ Նուշիրէվանայ պալատ կոչէ զայս։

Իսկ շէնքին դիրքն՝ ձորին բարձրագոյն եզերքը, պարսպաց ամրագոյն կողմը, քաղքին վրայ և դուրս նայուածքն, մօտի հոյակապ Առաքելոց եկեղեցւոյ մնացորդքն, և անոր վրայ արձանագրեալ քաղաքական հրամանք, երկգլուխ արծուեայ քանդակ մը ի միջի խաչիոյ՝ այս պալատանս մէջ, և դուրսը շինող թագաւորին բարձրաքանդակ պատկերն, — այս ամեն բան ինքնին թագաւորաց արժանի տեղ ըլլալ վկայեն. — զնոյն կրկնեն և մնացեալ պատերուն թանձրութիւնն և քանդակքն, արևելեան զարմանալի բազմադրուագ դուռնն, բազմաթիւ սենեկաց բաժանմունքն. — որոց ամենուն ներքևէն կամարակապ ընդարձակ և բազմամասն գետնայարկն ալ՝ խորին արձագանգօք՝ տեղւոյն վեհութեան վերջին վկայութիւնը կը կնքէ։

Մեզ ցաւալի է որ աւերմանց պատճառաւ՝ չենք կարող շատ բան տեսնել և գտնել այս մեծ և ամուր ապարանից մէջ, որուն արդէն մեծ մաս մ՚ալ փլած է. և որ կ՚երևի թէ Ծաղկոցաձորի այն կողմի դրից համեմատ զետեղուած էր, մաս մը յարևմուտք դարձած, մաս մ՚ալ ի հիւսիս. այս եռքի կողմիս միայն պատերն կու մնան, ներսն և ներքևն բոլոր փլած է։ Իսկ արևմտեան թևին ներքին պատերն ալ կան՝ որք սենեակները կը բաժնէին. թէ և ասոնք ալ սակաւաթիւ են հիմայ, և ոչ մեծամեծք. ամենն ալ պարբսպաց նման քառակուսի կոփած դեղին քարերով. որոց վրայ զարդ ալ չերևիր, և ոչ իսկ պատուհան, բայց միայն մէկուն մէջ՝ որ Ծաղկոցաձորին վրայ կը նայի. գուցէ շատերն ձեղունէն լոյս կ՚առնուին։

Հիմայ երեւցող կամ մեզի ծանօթ շէնքի մասանց ամենէն գլխաւորն կը ընայ ըստիլ պալատան արև-

մըտեան մասին վրայ եղած դուռն՝ որ կը նայի յա-
րևելս. և մեծութեամբն ու մանրամասն քանդակօք
և խաչաձևօք արդարև մեծագործ հոյակապ և զար-
մանալի է։ Երկու կարգ է դուռնն, կամ երկու դուռ
վրայէ վրայ. երկուքն ալ հաւասար քառակուսի
ընդարձակ շրջապատ մ՝ունելով, որք դեղին և սեւ
քարերով շարուած են. վերինն՝ բոլոր քառակուսի
քարերով, և անոնց անկեանց մէջ բարակ խաչեր.
դրան բարաւորին վրայի կամարն ալ սրաձև դէպ ի
վեր դարձած է։ Իսկ ստորին դրան շորս դին աւելի
գեղեցիկ նաղշած է խաչերով. դրան կամարն ալ
բոլորակ է։ Այս դրանց քանդակաց վրայ շատ հիա-
ցեր են եւրոպացի ուղևորք, մանաւանդ ասկէ կէս
դար մ՝ալ առաջ տեսնողք, երբ աւելի շէն էր պա-
լատն, և ըստ վկայութեան սոցա՝ բազմաթիւ էին
սենեակք, բազմախիտ խաչք և քանդակք, միով բա-
նիւ՝ անբաւ հարստութիւն զարդուց և դրուագաց։
Այս երկկարգ դռներն կ՝իմացընեն որ պալատն ալ
երկյարկ էր, և ինչուան երեք յարկի ալ նշանք
կ՝երևին, զատ ի ստորերկրեայ ներքնատունէն։

Երկրորդ նշանաւոր մնացորդն է այս մեր նշմա-
րած (ԻԲ) սրահն. որոյ նորատարազ երևոյթն,
սեանց ձևերուն զանազանութիւնն և աննմանու-
թիւնն, մանաւանդ այն արջագլուխ կամ ճիւաղա-
գլուխ խոյակքն՝ մէկէն նշմարողին աչքը կը քաշեն,
և իրեն թողում մնացածը քննել ու դատել։

Երրորդ յիշուած մնացորդն է դէպ յարևելք դար-
ձած սենեկաց մէկուն մէջ՝ պատին կից քարեայ ջրի
աւազան մը՝ գմբեթաձև խորշով, կարմիր ու սեւ քա-
րերով և ծաղկաձև քանդակներով փորուած։ Այս
սենեկիս միջէն կը բացուի պալատին գետնայարկն,
որոյ շէնքն որչափ որ կարելի եղած է մտնել և տես-
նել՝ արժանի է վերի շէնքին, գուցէ և աւելի զարմա-
նալի։

Մէկ յիշատակաց արժանի բան մ՝ալ կար պալա-
տիս հիւսիսակողմը, դրսի պատին գլուխը, ձորէն
և պարըսպէն դուրս նայող. բնական մեծութեամբ
և պարըսպէն դուրս նայող. բնական մեծութեամբ
մարդու բարձրաքանդակ մը, զինուորակերպ հա-
գած. ձեռաց մէջ շէնքին պատկերը բռնած, ինչ-
պէս որ եկեղեցեաց ոմանց վրայ ալ այսպէս շինո-
ղաց պատկերքն կան, սակայն պժգալի թշնամու-
թիւնն այս պատկերիս գլուխը թռուցեր էր, անոր

համար չէր որոշուեր թագաւոր ըլլալն. բայց հասարակաց աւանդութիւն է՝ թէ պարբսպաց շինող Սըմբատ Տիեզերակալին պատկերն էր. զոր ռամիկք ոմանք կարծէին թէ Անոյ մատնըչին պատկերն ըլլայ, և թէ անոր համար գլուխն կտրած և ձեռքը դրուած է։ Այս բանս ստուգելու համար՝ հիմայ պէտք է Պետրպուրկ երթալ. վասն զի կ'ըսուի թէ Ռուսք ճարտարութեամբ վերուցած են զայն իր տեղէն, ասկէ 20 կամ աւելի տարի առաջ, և տարեր են իրենց կայսերական թանգարանը դնելու, ուրիշ քանդակաց հետ. ոմանց ալ միայն ձեռերը գաղափարեր առեր են։

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

23. ՄԶԿԻԹ.

ՄԶԿԻԹ ԱՆՈՅ·

Ահա նորատարաղ չէնք մ'ալ, և ոչ հարազատ մեր քրիստոնեայ մայրաքաղաքին, եթէ արդարև մզկիթ ծնած համարինք այս չէնքս, ինչպէս որ եղած է յետոյ։ Ասոր դիրքն նշանակեցինք առաջ՝ որ միջնաբերդին հիւսիսակողմն է, և երկուց ճորոց իրարու մօտ միջոց մը։ Թիչ մ'երկայնաձև քառակուսի է չէնքն, արևելքէն յարևմուտք ձգուած, այս կողմէս է դուռն ալ. մէջն երկու կարգ երեք երեք կարճ ու հաստ սիւներով երեք թև բաժնուած է, որոցմէ կամարներ ձգուած են իրարու և չորս կողմի 12 որմասեանց վրայ. որով կամարայարկ տեղ մ'է, ոչ մզկիթի նման և ոչ եկեղեցւոյ, և ոչ ալ ժամատան՝ ինչպէս կարծուած ալ է, համարելով թէ արևմտեան կողմն եղած ըլլայ եկեղեցին, որուն հետքն չկայ։ Ձեղունն և յատակն ալ նորատեսիլ կերպարանք մ'ունին. գետինն 12 քառակուսի բաժնուած է քարերու շարուածքով և սիւներուն դրուածքով. բայց ոչ մեծութեամբ իրարու հաւասար են, և ոչ շարքով քարերու, որոց պէսպէս դիրքն, մեծութիւնն և գոյնն այլևայլ ձևով միւսիոններ կամ հաղաչներ կ'ընծայեն, և ճարտար ձևեր կամ շարքեր ալ ունին։ Իսկ ձեղունն տեղ տեղ կմբաձև կամ կլորակ է, տեղ տեղ ալ տափակ, մեծամեծ քարէ տախտակներով կցուած։ Արևելեան հիւսիսային անկեան քառա-

կուսի միջոցը կանգնած է մինարէն՝ ութանկիւնի ձևով, 85 աստիճանով, սև ու կարմիր քարերով շինած։ Արևելեան պատին վրայ երեք պատուհան կայ, որ Ախուրեանի վրայ կը նային. արևմտեան պատին կէսն փլած է, մաս մ՚ալ հիւսիսայնոյն. մնացածն բաւական շէն է։ Յատակն ալ ներքնատուն կայ կամարակապ, և մէջէ մէջ դռներով. որ նոր զարմանք և տարակոյս մ՚ալ կ՚աւելցընէ այս այլատարաղ շէնքիս շինութեան կամ՝ անոր պատճառին. թէ արդեօք պահապանաց տո՞ւն էր, թէ վանդուկ մը, թէ բուն իսկ մզկիթի համար շինուած՝ առաջին անգամ քաղաքն այլազգեաց ձեռք անցած ատեն. և այս ալ կըրնայ կարծուիլ, թէ և մէջը միհրապի տեղ չկայ. բայց վրայի արձանագրաց մէկն քուֆի գրով գրուած է յամի 1072 Մանուչէի ատեն. և միայն կէս տող մնացած ըլլալով՝ շատ բան չիմացըներ։ Ասկէ վեր՝ հիւսիսային կողմը՝ երկայն պարսկերէն արձանագիր մը կայ՝ իբր Լ՝պուսայիտ թաթարաց զանին անուամբ և հրամանաւ գրուած, ԺԴ դարու առաջին քառորդին. որով կը պատուիրէ քաղքին վերակացուայ՝ չնեղել գժողովուրդը հարկապահանջութեամբ, և բաց ի բաճէ և կնքէ (դամղայ) ուրիշ բան չառնուլ, ինչպէս որ առաջ կ՚առնուին. և անոր համար, կ՚ըսէ, քաղաքացի և գաւառցի տանուտեարք (քէթխիւտէ) սկսեր էին թողուլ զԱնի և զՇիրակ՝ և երթալ յօտար աշխարհս։ Ասկէ վար ներք լեզուով մէկ մէկ տող արձանագիր կայ. առջի երկուքն՝ պարսկերէն և վրացերէն՝ կ՚ըսեն. Ես Զաքարիա Աթաբէկ որդի հանգուցեալ... հաստատեցի ի թուին 1237 կամ 1258. իսկ երրորդն հայերէն և անթուական կ՚ըսէ միայն. «Հաստատուն պա-«հողքն աւրհնին Աստուծոյ»։ — Այն հայերէն տողս գրուած է նաև քաղքին միւս բարձրագոյն մնիրային վրայ։



24. ՄԱՏՈՒՌՆ ՇԻՐՄԱՑ.

Ս. ԳԻՈՐԳ, ՀԱՆԳՍՏԱՐԱՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ.

Թողլով այն դժնդակ գուռը՝ որ մտուց զմեզ ի Ֆաղաքն տրտմաթախիծ, և տարաւ յաւերակս բնակութեան ժողովրդեան կորուսելոյ, ուրիշ ելք մը փնտռենք. առանց զլանալու Հոգւոց մը՝ այնպիսի հանգուցեալ մայրաքաղաքի մը և անոր բնիկ հանգուցելոց վրայ, որոց գլուխ և առաջնորդ կը համարիմ զ'Գ. Աշոտ Ողորմած թագաւորն, որ նախ պարըսպեց զքաղաքն և թագաւորանիստ ըրաւ. և արժանի էր մեծ յիշատակարանի մը. զոր թէ չեմք գտներ Անոյ պարըսպաց մէջ գուցէ գուրսը գտնեմք, և թէ ոչ ճարտարպետական՝ այլ վեհագոյն ևս մեծութեամբ՝ պարզութեան։ — Ամեն ատեն և ամեն Հարստութեանց մէջ մեր թագաւորք իրենց գերեզմանաց սեփական քաղաքատեղին ալ ունեցեր են, և շատ հեղ հեռու իրենց կենդանութեան բնակարանէն։ Ամենէն ծանօթ և անուանի գերեզմանաց տեղն մեր Արշակունի թագաւորաց՝ էր ուրիշ Անի քաղքի կամ բերդի մը մէջ, Եփրատայ եզերաց և երկու Հայոց (Մեծ և Փոքր) սահմանակցութեան վրայ, մեծ հեռաւորութեամբ իրենց Այրարատեան

մայրաքաղաքներէն. ուր և Հեթանոս և քրիստոնեայ թագաւորք մեր՝ իբրև թագաւորաց մարմինք կը տարուէին, թէ և երկու կրօնքն զանոնք արտաքին անջրպետով և նշաններով ալ գիտէր զատել. միայն չարանախանձ Սասանեանց ոխն էր՝ որ զսուրբ և զանսուրբ յիրար խառնելով պղծեց խռովեց ամենուն ալ հանգիստը. և այն խառնակոյտ ոսկրոտին՝ քանի մը տիրասէր և աղգոդի անձինք աղատելով ի յետին գերութենէն՝ առին բերին, և Ամսուրեան գետէն անցընելով ոչ շատ հեռի այս մեր Անիէն, այլ և գրեթէ տեսանելի, Շիրակայ սահմանակից գաւառին մէջ անոր անկործանելի կոթողին՝ բարձրաբերձ Արագած լեռան կողը՝ Աղցից գիւղին մէջ հանգուցին. երկրորդ հանգիստ։ — Զարմանալի իմն հանդիպութեամբ մեր Բագրատունի թագաւորաց շատին հանգստարանքն ալ՝ անոնց դիմացն եղան, քանի մը ժամ հեռաւորութեամբ։...

Արդ լռելեայն մը ելնելով Անոյ արևելեան դռնէն, հին ատեն Դիզնայ դուռն կոչուած և հիմայ Երևանայ դուռ, մեր խորակարկաջ Ամսուրեանի ափերն 'ի վեր կ'երթանք ընդ հիւսիս և արևելս, իբրև ժամ մը, մինչև դարձեալ Անոյ դրից նման տեղ մը կը հասնինք. այսինքն, գետն այս տեղս ալ արևելքէն դէպ հարաւ և յարևմուտս շրջելով՝ նորէն կը դառնայ ի հարաւ կ'ինջնէ յԱնի. և այս նոր թեւին կամ թերակղզւոյն մէջ կան յիշատակաց արժանի շէնք Հոռոմոսի վանաց, որ հիմայ կ'ըսուի Խոշավանք, ի Խոշուն անուանէ՝ որ նշանակէ ջուխտակ. վասն զի քիչ մը հեռուն (հիւս. արևմտ.) զոյգ մը նորաձև հին աշտարակաց կան քիչ շատ աւեր։ Ի դարէն մնացեալ և ալ հին և ալ նոր եկեղեցիք, վանք, շէնք, գերեզմանք, և բազմաթիւ արձանագիրք կան այս տեղս, որ հիմայ ալ բնակուած է ի վանականաց ոմանց, Կարսայ թեմ ըլլալով, և ատեն մը Անոյ վիճակին առաջնորդին նիստ։ Թագաւորք Անոյ և իշխանք, նաև հեռաւորք, մեծամեծ նուէրքներով ճոխացուցեր էին այս վանքը, և շատերն կ'ուզէին հոն դտնել երկրիս յետին հանգիստը։

Մեր նպատակէն դուրս է երկար ուշանալ այս արժանաւոր տեղս, զի մեր Նշմարն (ԻԴ) քիչ մ'ալ կը հեռացընէ զմեզ անոր պարիսպներէն. հաղիւ քառորդ մը ժամու, դէպ ի հիւսիս և արևմուտք, ուր

ձորագաշտակ մը՝ Հռոմոսի բարձր թերակղզոյն կը-
պած՝ կ'իջնէ կը տարածի՝ ինչուան Ամխուրեանի ջրոյ.
որք երբեմն առատացած՝ ձեան հալուածքով կ'ողո-
ղեն ալ զինքը, և քանի մը շէնքերու պատերը կը
փայփայեն։ Այն ծածան ծփան ալեաց եզերքը, կէս
շէն կէս անշէն, կէս ընտանի և կէս վայրենի ձորա-
փը՝ ոչ սակաւ աւեր և անաւեր մատրունք և եկե-
ղեցեակք և նման շէնքեր կ'երևին. որոց գլխաւորք
երկուք են, մէկն Ս. Մինաս անուամբ, միւսն աւե-
լի մեծ անոր արևելակողմը՝ իբրև 10 քայլ հեռու,
Ս. Գէորգ անուամբ, ահաւասիկ մեր նշմարածն է
(ԻԴ)։ Անշուշտ իր սրագմբէթ սուլուլիկ ձևն, և
բարակամէջ հասակն՝ տեսողին աննշանակ բան մը
պիտի չերևին, թէ և փոքրիկ շինուած մ'է վեցակողմն
խարըսխաւ. որոյ դրսի տրամագիծն իսկ չորս մեդր
է քիչ աւելի. մէջն վեց հաւասար թերաբոլորակ
բաժնած. բաժանիչ պատերն ալ առանց սեան կ'ամ-
բառնան գմբէթը. թերաբոլորից մէկն բացուած է
ի դուռ, որոյ առջև փոքրիկ անդաստակ մ'ալ կայ՝
չորս որմասեանց և մէկ ազատ սեան մը վրայ՝ կա-
մարակապ բաց։ Բայց աւելի և շատ աւելի նշանա-
կան է յիշատակն շէնքիս՝ և նաև իր շուքին, որ կը
տարածանի ի Հանգստարանս Թագաւորաց։ Քանի
մ'արձանագիրք կան մէջն և դուրսը, ԺԱ. դարուն
սկիզբը գրուած. արևմտեան ճակտին վրայ Սմբատ
— Յովհաննէս Թագաւորին յիշատակարանն է յա-
մին Քրիստոսի 1036 գրուած. որով կտակէ կը թո-
ղու իր Սահառունիք գեղը՝ այս տեղւոյս, «ի մեր
«Հանգստարանս Թագաւորաց, ի տիեզերահռչակ
«վանս Հռոմոսի». և կը պատուիրէ որ ամեն տա-
րի չորս քառասունք պաշտօն կատարեն իր հօր Գագ-
կայ հոգւոյն. իսկ երբ ինքն ալ մեռնի՝ երկու քա-
ռասունքն իրեն համար ըլլայ, երկուքն ալ իր հօր։
Նոյն ինքն Գագիկ Թագաւորս ալ իր յիշատակարա-
նը գրած է այս իւրաշէն մատռան արևելեան կողմը,
մամաղթելով առ Ս. Գէորգ, սրտառուչ վսեմ և մա-
մաղթելով առ Ս. Գէորգ, սրտառուչ վսեմ և մա-
քուր ոճով. «Ո՜վ հռչակաւոր դու և մեծանունդ ի-
«վկայս, Սուրբ Գէորգիոս, աւգնեա բարեխաւսու-
«թեամբ Գագկա Շահայնշահի՝ շինողի զվկայարանս
«զայս քոյով անուանակոչութեամբ, ի քոյդ յու-
«սակնեալ բարեխաւսութիւն, զի ընկալցի զողոր-
«մութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ՝ ընդ ամենայն ար-

« դարացեալսն ապաշաւանօք, հասանել լուսոյ փա-
« ռաց Որդւոյն Աստուծոյ, ի վերջնում գիշերին ի
« ծագել մեծի և աներեկ առաւօտին՝ այցելութիւն
« գտանել առաջի ահաւոր բեմին և անաչառ դա-
« տաւորին. Աղաչեմք »։

Ձերկրայիր ընթերցողն որ այս Ս. Գէորգայ նուի-
րեալ մատեան մէջ կամ մէկ կողմը, վերջապէս իր
ձգած շուքին սահմանին մէջ ընտրեր և հանդչեր է
բարի թագաւորն Գագիկ Բագրատունի. և հաւան-
օրէն նոյն սահմանին մէջ կամ քիչ հեռու՝ իր նուի-
րատու որդին Սմբատ-Յովհաննէս ալ, որպէս և ա-
սոր եղբայրն Աշոտ, և հօրեղբայրն Սմբատ Բ. ա-
մենքն ալ այս մօտերս թաղուած են, և թերևս ա-
մեն մէկն ալ իր առանձին հանգստանոցի մատուռն
ունէր. և մէկուն էր յիշեալ Ս. Մինասն. միւսոյն՝
փոքրիկ մատուռ մը՝ Ս. Գէորգայ արևելակողմը.
ուրիշներու ալ՝ ասոնց հիւսիսակողմն եղած աւերակ
մատրունք, որոց մէկուն ձևն ալ այս Ս. Գէորգի
նման է հինգ բոլորակով։

Նոյն շուքին և նոյն պատին ներքև կը հանդչի
նաև այս թագաւորաց հայրն և նախահայրն և ցե-
ղին ամենէն բարեպաշտ թագաւորն, Աշոտ Ողոր-
մած, հիմնարկողն ներքին պարըսպաց Անոյ. և ա-
սոր Հանգստարանն միայն յայտնի մնայ. թեր-
և ս վարձք իր բարեպաշտութեանը. և միայն յայտ-
նի գերեզման թագաւորի, մեծավայելուչ վսեմու-
թեամբ, և ամենամեծ զարդով. որ է անարուեստ
պարզութիւնն։ Երկու քայլ հեռի եկեղեցւոյս ա-
րևելեան հարաւային անկիւնէն, գետնին վրայ ե-
րեք կարգ կամ աստիճան քարեր քառակուսի ձևով
վրանին կը կրեն տապանը՝ սնտուկի ձևով, որոյ ա-
մեն զարդարանքն՝ պարզութենէն զատ՝ հնութիւնն
է, և ժամանակի մատամբ փորուածքն. իսկ արձա-
նագիրը՝ միայն ԱՇՈՏ ԹԱԳԱՒՈՐ։ . . .

Թէ աւանդութիւն և թէ հիմայ աւրուած թուա-
կան մը ՆԻԶ (977 թիւ Փրկչին) կը վկայեն՝ որ հոս
Ողորմած Աշոտ թագաւորն է, և անոր քովի փոքր
տապանին մէջ ալ իր արժանաւոր և միասիրտ կինն՝
Խոսրովանոյշ Դշխոյն է. որք դադրած են ինն անգամ
դարական անխառով քնով, երկնից գիշեր ցորեկ ան-
վարագոյր կամարին տակ. անարգել ընդունելով
արեգական և լուսնի ջերմիկ և ցրտիկ ճառագայթ-

ները, տարերաց տարափները, ձիւնն և անձրևը, ցօղն ու ծաղիկը. և իրենց որդւոյն՝ Գագկայ պէս՝ մաղթեն, «ի վերջնում գիշերին ի ծագել մեծի և «աներեկ առաւօտին՝ այցելութիւն գտանել», մարմնով ալ հաղորդելու իրենց պայծառացեալ հոգւոյն լուսոյ փառաց։ Մենք ալ մաղթեմք որ այս յուսով և այս դիրքով մնան այս հանգստեան տապանքս իրենց մերձաւորօք, մինչև ի ծագել այն աներեկ առաւօտին. որ վերջին գիշերին քօղը՝ ճգելով մեր Անոյ և ամեն քաղաքանոյ վրայ ալ՝ պիտի բանայ յաւիտենական մայրաքաղաքը. ուր յուսանք գտնել ընդ Աշոտոյ և Խոսրովանուշայ՝ իրենց արքայագահ ըրած և յետոյ տրտմաբախիծ եղած քաղաքին կորուսեալ ժողովուրդն ալ։

ՆՇՄԱՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

Հ. ՂԵՒՈՆԴԻ Վ. Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

Գ. ՊՐԱԿ.

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

25. ԷՕՇԿ.

ՆՇՄԱՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

Գ. ՊՐԱԿ.

Կարնոյ բարձրաւանդակին հիւսիսակողմը պարբսպող լերինք՝ միջի կողմէն մեծին Եփրատայ հիւսիսագոյն աղբիւրները կը բղխեն, իսկ դրսի կողմէն՝ անոր եղեմական ընկերակից (ձորոխ) Գեհոն գետոյն օժանդակները. որոց գլխաւորն է անմիջապէս Եփրատայ ականց կռնակէն բղխածն, Թորթումայ գետն, յանուն գեօղաւանի մը, որով կոչուի բոլոր վիճակ կամ գաւառակ մը. որ մեր նախնեաց ատենմասն էր Տայոց աշխարհին և կ'ըսուէր Ռքաղ։ Թորթում՝ անունն յիշուած չէ 'ի նախնեաց, այլ հարկ է որ 'ի հնուց ալ գաւառին գլխաւոր տեղն կամ տեղերէն մէկն եղած ըլլայ, որպէս զի կարենար հիմայ իր անուամբ նշանակել վիճակ մը, և գեղեցիկ վիճակ մը։ Վասն զի թէպէտ այս վիճակիս հարաւային կողմն Կարնոյ բարձրաւանդակին կցուած բաւական բարձր և ցուրտ է, այլ շուտ շուտ կը ցածնայ 10 ժամու ընթացքով, մինչև գետոյն խառնուրդն 'ի ձորոխ, ուր որ գրեթէ կը լմընայ վիճակին հիւսիսային սահմանն. և կը ձևանայ խորանիստ հովիտ մը, շատ վտակներով ոռոգուած, և գեղեցիկ լճով մը զուարճացած, որուն միջէն կ'անցնի գետն՝ 'ի ձորոխ թափուելու համար. և ոչ միայն ջուրն ջրին մէջ ճամփուելու համար. և ոչ միայն ջուրն ջրին մէջ ճամբայ կ'ընէ, այլ և յանկարծ թողլով զջուր և զցամաք՝ ձորոխայ գիրկը չընկած, պահ մ'ալ օդուն մէջ կը ցատքէ բոլոր ուժով, և ձիւնափայլ փրփրախառն զանգուածովը. այսինքն մեծ և հիանալի ջրվէժ մը

կը գործէ, զոր ոմանք յԵւրոպացի աշխարհատես անձանց՝ երկրիս ամենէն գեղեցիկ ջրվէժից առաջին դասը կը դնեն։ Թորթումայ լեռներն լերկ են, այլ ջուրերն ժիր և պայծառ. անոնց պէս պատուական և աւելի յարգի երկիրն, որ իր ցածութեամբ բաւական ալ տաք ըլլալով՝ կը հասցընէ լաւ պտուղներ, մինչև խաղող ալ, և իր մեծ դրացւոյն Կարնոյ անուշակ պաշար կը պատրաստէ։

Այսպիսի բարեդիր վիճակ մը՝ հարկաւ անտես չէր ըլլար երկրին հին բնակչաց և բնիկ տերանց. որք ստուգիւ ըսելով չէին Հայք, այլ Տայք, առանձին ժողովուրդ մը, հին ծագմամբ, որք և Քրիստոսէ 4–500 տարի առաջ ալ յիշուին իբրև ազգ առանձին. սակայն քանի մը հարիւր տարի վերջը՝ Հայոց Արշակունեաց իշխանութեան տակ ընկան. ասոնցմէ ալ վերջը՝ Վրաց իշխանութեան. մնացեալ հին շինուածոց, որք են բերդք և եկեղեցիք, արձանագրութիւնքն՝ մեծագոյն մասամբ վրացերէն են, գտնուին նաև յունարէն, քիչ մ՝ալ հայերէն, ըստ մեր ծանօթութեան։ Երկրին բնական վայելուչ դրից և հանգամանաց համեմատ արժան էր որ վայելուչ շէնքեր ալ ըլլային հոն. և յիրաւի որչափ անկատար ալ քննուած ըլլայ այս վիճակս, յայտնուած են գեղեցիկ և մեծագործ շինուածքներ։

Այս շինուածներէս երեք հատն մեծապէս հռչակուած են Թորթումայ երկրին և սահմանաց մէջ, և գրեթէ աշխարհաբարող առակի կարգ անցած. երկուքն Թորթումայ գետոյն ձախ (արևմտեան) կողմը, որ են Էօշքայ վանքն՝ մօտ ի լիճն, Խախուռայ վանքն կամ եկեղեցին՝ Էօշքայ հարաւակողմը. երրորդն՝ Իշխան, քիչ մ՝աւելի հեռու, և Թորթումայ գետահովտէն դուրս, բայց գրեթէ սահմանակից, արևելեան կողմը, ուրիշ գետակի մը եզերք, և մօտ ի խառնուրդ Նորա ի Ճորոխ։ Երեքն ալ մէկմէկ մեծ և հին քարաշէն քանդակազարդ եկեղեցիներ ունին, գրեթէ մէկ ժամանակ շինուած (իբրև ի Ժ. դարու) և իրարու ալ բաւական նման. մինչև այլազգեաց կարծիքն եղած է, թէ Պարսից Խոսրով Նուշրէվան թագաւորին երեք դստերքն շինած ըլլան, իւրաքանչիւր մէկ մը. այս արտաքոց կարծեաց պատճառն այս կրնայ ըլլալ, որ Խոսրով իսլամէն առաջ էր, կըրնար քրիստոնեայ ըլլալ, ինչպէս էր իր կինն Շի-

ին, և քրիստոնէից մէջ ալ այս կարծիքս եղած է իրվրայ, ըստ որում՝ և պատմիչք մեր յիշեն, սկսեալ ի Սեբէոսէ, որ իբրև դար մը վերջը կը գրէր իր պատմութիւնը։ Եւ դարձեալ Խոսրով մեծագործ, շինարար և խաղաղասէր թագաւոր մ'էր, յետագայք իր շինածներէն աւելին ալ իրեն կ'ընծայեն։ Իսկ այս իրեն երեք դստերաց դաստակերտ կարծեցեալ եկեղեցեաց գեղեցկութիւնն ալ իրարու բաղդատելով՝ մէկ մէկ մասամբ իրարմէ առաւելեալ կը գտնեն, գուցէ թէ անոնց քօղաւոր հեղանիկներն ալ նշմարելով շէնքերուն վրայ. և մէկուն նայուածքը մէկալին նստուածքը, միւսոյն նաչխուածքը եւել եւելօք զարմանալի կ'ըսեն. «Էօշքիւն պաքչը, խախուանին նարքչը, Իշխանին նագրչը»։ — Ահա այս երեք քոյր շինուածոց երկերկու նշմարներ կ'ընծայեն յետագայ թիւերս 25=30, ճշգրիտ լուսագրութեամբ։



26. ԷՕՇՔ. ՊԱՏՈՒՀ. ԱՐԵԻՄՏ.

ԷՕՇՔ.

Թորթումայ լճին գլխոյն մօտ, որ է հարաւային կողմն, դէպ ի յարևմուտս փոքրիկ վտակի մը եզերք կայ Էօշք անուամբ գեղ մը, և կէս ժամ հեռուն ալ ամայացեալ վանք մը նոյն անուամբ, բարձր լերանց ստորոտը, սարատափ բլրի մը վրայ, զուարճալի բուսաբերութեան և դրից մէջ, որ աներկբայ կը ճըշմարտեն առակեալ Նայուռածքն Էօշքայ. որ երբեմն իր բարձրադիր բլրէն չորս կողմի ցած և պզտի շինուածքներուն կը նայէր, բայց հիմա ինքն իր վրայ կրնայ նայիլ. որովհետև իրեն յարակից շինուածքներն կործանած են, վանքն աւրուեր է. և միայն հոյակապ եկեղեցին մնացեր է մենացեալ. և ահագին մեծութեամբն աւելի խոր տպաւորութիւն մը կ'ընէ աչաց, մանաւանդ քրիստոնէից։ Բոլոր դեղնագոյն փայլուն քարերով շինուած է այս եկեղեցիս, խաչաձև, 34 չափ (մեդր) երկայն, 22 չափ լայն թեւէ թև, տաճարն 15 չափ, վարի կողմն 11. չորս մեծամեծ բոլորաձև սիւնք յատակէն բարձրացեալ կը վերցընեն շրջաբոլոր գմբէթը, որ Հայոց և Վրաց եկեղեցեաց ոճով վարի դին լայն կլոր է, վերը երթալով կը սրանայ և կոնաձև կը լմընայ. բայց ոչ այնպէս տգեղ արտաքին տեսլեամբ՝ ինչպէս կ'ե-

ռեւի հիմա. վասն զի հնութեամբ փլեր է, և այլազգիք իրենց մզկիթ դարձընելով շէնքը՝ այսպէս անշնորհք ծածկոյթ մը տուեր են այն շնորհալի գլխոյն։ Գմբէթին շուրջը ներսէն նեղ սրահակի պէս պտըտելու տեղ կայ։ Սեանց հաւասար բարձր կամարներ կը բռնեն եկեղեցւոյն բոլոր ձեղունը։ Կիսաբոլորակ խորանն սովորական դիրքով կայ արեւելակողմը, երկու կողմէն ալ նեղ և կրկնայարկ աւանդատունք, ինչպէս Անոյ և ուրիշ Հայոց եկեղեցեաց մէջ գըտուին. թեւերուն քովերն ալ երկ երկու աւելի պըզտիկ սենեակներ կան. դարձեալ եկեղեցւոյն վարի կողմն ալ երկու դին աւելի մեծ սենեակներ։ Երեք կողմէն ալ դռներ ունի, մեծ դուռն է հարկաւ արեւմտեանն, որոյ առջեւ գաւիթ մ՝ալ կայ քառակուսի նեղ, հանդերձ դրամբ, բուն եկեղեցւոյն մեծ դրան դիմաց. բայց գաւթիս կամարներն հիմայ ընկած են։ Դրսէն հարաւային կողմին վրայ կիսաքանդակ քարէ պատկերներ կան լայնաղդեստ մարդկանց, որ եկեղեցւոյն շինողքն են, վասն զի անոր դաղափարն ալ ձեռուընին է. ուրիշ կողմի քանդակներէն և զարդերէն զատ՝ խորանին եղերքը նըկարէն պատկերք ալ կան։ Իսկ արձանագրութիւնքն մեծաւ մասամբ վրացերէն են, և եկեղեցւոյն դրսի դին կարմիր ներկով գրուած և ոչ փորուած. այլ դեռ շատն անեղծ մնացեր են. ասոնցմէ կ՝իմացուի որ շինողքն են եղեր Ատրներսեհ կիւրապաղատ, Բագարատ իշխանաց իշխան և Դաւիթ Մագիստրոս, ամենքն ալ Ժ. դարուն առաջին կիսուն. յայտնի է ուրեմն որ Լօշքայ գեղեցկահայեաց եկեղեցին մօտ հազար տարուան հնութիւն ունի։

Եկեղեցիէն իբրև քարընկէց մը հեռու քարաշէն սենեակ կամ սրահ մը կայ ութ սեանց վրայ բարձրացեալ, թէ և ձեղունն ընկած է. 20 չափ երկայն, 16 լայն. որու համար կ՝ըսեն թէ վանքին խոհանոցն եղած ըլլայ. քովն ալ ուրիշ փոքր սենեակ մը կայ, զայս ալ մառան կարծեն, վասն զի մանր փոսեր ալ կան մէջը, իբրև կարասներուն տեղուանք։

Նշմարացս 25 թիւն է Լօշքայ եկեղեցւոյն հիւսիսային կողմն. իսկ 26դ նշմարն է պատուհան մը արեւմտակողմը, նորաձև դրուագօք զուգակ սեանց. որոց վրան պատուհանին ճակատն իբրև պատուանդանի վրայ կանգնած բարձրաքանդակ պատկեր մը

ԽԱԽՈՒ.

Ինչպէս առաջ յիշեցինք Խախու Էօշքի հարաւային արևմտեան կողմն է, պզտի առուակի մը եզերք, գեղեցիկ տեղ մը և գեղեցիկ դիրքով, որով կը ճըշմարտէ այլազգեաց իրեն տուած կոչումը, գեղեցկաղիր։ Գեղն, զոր Վրացիք Խախուշ կոչեն իրենց գըրուածոց մէջ, ատենօք գլխաւոր շէնք մ'է եղեր և եպիսկոպոս ալ ունեցեր է, որ մեր ազգային յիշատակաց մէջ ալ տեղ մը կը յիշուին։ Էօշքայ շատ նման այլ անկէ պզտիկ հին եկեղեցի մ'ունի, զոր Վրաց Դաւիթ Թագաւոր մը շինած է Թ. դարուն մէջ. իր հաղարամեայ հնութեանն վկայ է և կարճ հայերէն արձանագիր կամ թուական մը եկեղեցւոյն մէկ սեանը վրայ. «Ս. Գ(ըիգոր). ՅԺԷ», որ է թիւն Քրիստոսի 868։ Յած պարըսպով պատած է եկեղեցին և քովի կիսաւեր վանքն, որք հին ատեն կոչէին յանուն Ս. Աստուածածնի, իր մէկ հրաշագործ պատկերին պատճառաւ, որ շատ ատեն հոս պատուելով ի Թագաւորաց Վրաց, (և մանաւանդ իրենց գերազանցեալ Թամար Թագուհիէն, որ և տաղաչափութեամբ գովեստ գրած է այս պատկերիս վրայօք), յետոյ Վրաց հռչակաւոր Գելաթի վանքը փոխադրուած է և հոն պահուի։ Եկեղեցին՝ Էօշքայ նման է ձևով, չորս բոլորակ սիւներովն, գմբեթեաւն և կամարօք. բայց ալորակ սիւներովն, գմբեթեաւն և կամարօք. բայց անոր չափ պահարաններ և դուռներ չունի. այլ հանոր չափ պահարաններ և դուռներ չունի. այլ հա-

բաւային կողմը գաւիթ մ՚ունի սիւնազարդ. մեծ դրան վրայ ալ քանդակներ մարդկան և զարդուց, և վրացի գունաւոր արձանագիրներ, որք շատ մաշած և աւրուած են։

Եկեղեցւոյն մօտ տասնի չափ մանր մատուռներ կամ սենեակներ կան տափակ ծածքով. քիչ հեռու քանի մ՚ուրիշ մանր եկեղեցիներ, զոր հիմայ այլազգիք անասնոց գոմ ըրած են, մեծ եկեղեցին ալ՝ մզկիթ։

Մեր 27դ նշմարն կու ցուցընէ գեղեցկագիր խաչուայ եկեղեցւոյն ճակատը և մէկ կողմը. դմբէթին վրայ նայողն կը նշմարէ նաև այլազգեաց ըրած նորոգութիւնները։ Իսկ 28դը կը ներկայացընէ պատուհան մը՝ հիւսիսային կողմը, որ և նման էօշքային (նշմ. 26) երկու բաժնուած է կամարակապ, եղերքն երկերկու, մէջ տեղն մէկ սիւն. որոց քանդակներն տարբեր ձևով և աւելի խոշոր են. իսկ պատուհանին ճակատը՝ երկուց կամարաց միջոց, փոխանակ բաղմախաչեան վեղարաւորին՝ կը տեսնենք վիթխարի արծուի մը լայնամագիլ ճիրանաբաց, այծեամ մը ճանկած։ Այս ձևս նշանական և խորհրդաւոր բան մը պէտք է ըլլայ, և ոչ ըստ քմաց կամ պատահական զարդ մը. վասն զի էօշքայ եկեղեցւոյն վրայ ալ և նոյնպէս հիւսիսակողման պատուհանի մը վրայ նոյն քանդակը կայ, նոյն թևաւոր արծուին, բայց երկու ուրիշ թևաւորաց տակ, որք են հրեշտակք զգեստաւորք. իսկ արծուոյն ճանկած կենդանին՝ հոն աւելի զուարակ մը կ՚երևի քան այծ կամ ոչխար։ Այս ձևով քանդակք Հայոց քանի մը եկեղեցեաց մէջ ալ կ՚երևին. ինչպէս Գեղարդայ կամ Այրի վանից քարափոր եկեղեցեաց մէկուն մէջ, համանման արծուի մը ոչխար մը ճանկած, երկու քովն ալ մէկ մէկ առիւծ վզերնէն կապած, վրան ալ եղջերուի գլուխ մը, որուն բերանէն կախուին վարի կենդանեաց կապերն։ Երևի ուրեմն որ Հայոց և Վրաց մէջ հասարակ էր այս ձևս, և նշան զօրութեան և քաջութեան, կամ նուաճելոյ զթշնամիս՝ այնպիսի յաջողութեամբ և ուժով, ինչպէս արծուի մը, կամ անկէ մեծ անգեղ տեսակ մը, (լաշհաւ ըսուած ի Հայս) կը յափշտակէ ուլ մը կամ գառնուկ մը։

կայ եկեղեցականի վեղարով և փիլոնով, բաղկատարած կեցած, երկայն մօրուօք. որուն ներքև կուրծքին վրայ տակէ տակ երկու կամ երեք քառակուսի խաչեր կախուած են, գուցէ նափորտն կամ եմիփորոնն նշանակելով. իսկ վեղարին վրայ ալ երեք խաչ, երկուքն քովէ քով, մէկ մ'ալ անոնց վերայ. այս խաչերուն բաղմութենէն կերևայ գուշակուիլ թէ ներկայացող անձն արքեպիսկոպոս կամ կաթուղիկոս ըլլայ։

Նախնիք մեր յիշեն ի Տայս Աշուռք անուամբ աւան մը, ուր եպիսկոպոս ալ նստէր, և տեղւոյն դրից վրայ ուրիշ յիշատակ մը չունիմք. կերևամք կարծել թէ սոյն այս հիմակուան Էջքն ըլլայ։

27. ԽԱԽՈՒ.

28. ԽԱԽՈՒ. ՊԱՏՈՒՀ. ՀԻԻՍԻՍ.

ՀԱՅԿ. ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

29. ԻՇԽԱՆ.

ԻՇԽԱՆԱՑ ԳԻՒՂ.

Թորթումայ արևելակողմը Թավուսկեար վիճակն է, որ ըստ Վրաց լեզուի թարգմանի հայերէն Տայոց-Դուռն. կը յիշուի և ի նախնեաց մերոց այս անունս, բայց ոչ իբրև գաւառի անուն. կըրնայինք ըսել թէ Տայոց աշխարհին կեդրոնն ըլլայ, և բուն Տայք կոչուելու արժանի. թէ և այսպէս յատկաբար կոչուած գաւառ չկայ ի Տայս, այլ թուի թէ Աջորդափոր գաւառին մասն ըլլայ Թավուսկեար։ Հիմակուան վիճակիս արևմտեան կողմը և մօտ ի խառնուրդ իր գետակին ընդ Ճորոխայ՝ կայ Իշխան գիւղն, քանի մը մահմետական տուներով. բայց հին ատեն մեծ շէնք էր, Իշխանաց գիւղ անուանեալ, չեմ գիտեր որ Իշխանաց բնակութեամբ կամ ծագմամբ. յայտ է որ շատ հնուց այս ազնուական բնակիչներն ունեցեր է՝ որ այս անունս ալ առնու. իսկ իր ազնուականութեանն վկայ կեցած է մեծագործ նկարազարդ եկեղեցին, գուցէ հոյակապ քան զայլս և երից հաւրազատ քերց մէջ պճնագոյնն։ Ընդհանուր ձևովն նման է Էօշքայն, նոյնպէս գեղին տաշած քարերով շինուած, նման չորս բարձր սիւներով և կամարներ

բով. իսկ խորանն աւելի գեղեցիկ ձևով շինուած է սեանց կիսաբոլոր շարուածքի վրայ կանգնած, որուն վերև ալ պատին վրայ նկարեալ պատկերներ կան, և ասոնց համար հռչակուած է տեղին, Իշխանայ նաշխուռածք. սակայն կէս մի հնութիւնն և կէս իսլամական գայթակղութիւնն՝ աւրըշտրկեր են նկարները, և ծխով սևացուցեր, որպէս զի իրենց պաշտամունքը անչփոթ կատարեն. այլ դեռ մէկ մասն ալ անեղծ մնալով՝ կըրնայ հետաքնին արուեստագիտի մը դիտելի և բաղդատելի ըլլալ։ Այսպէս կէս աւրուած են վրացի նկարէն արձանագրութիւնք ալ, որոցմէ մէկն եկեղեցւոյն հիւսիսային կողմը ներսէն գրուած է, բոլոր պատին երկայնութեամբ եօթն տող, և ասկէ և ուրիշներէն գուշակուի որ այս եկեղեցիս ալ առջիններուն պէս հին է։ Վրացի թուական մը կայ 1006 տարւոյ, և այն ալ բուն առջի շինութեանը չէ. Հայ թուական մ՚ալ կայ Ն (951). բայց տողին վերջն ըլլալով՝ կըրնայ կարծուիլ որ տասնորդական թիւն ընկած ըլլայ, որ և վրացերէն թուականին համեմատութեամբ պիտի ըլլար ՆԾԵ (1006)։ Այս եկեղեցիս ալ Ս. Աստուածածնայ նուիրած էր։

Զորս կողմի շէնքերն, որ պիտի ըլլան վանքն, կործանած են, միայն պատերն կան. հարաւային դրան դիմացն ալ կայ մատուռ մը, զոր հիմայ դարբնի խանութ ըրեր են, ասոր դրան վրայ է վերոյիշեալ հայերէն թուականն։ Մեծ եկեղեցւոյն մէջ ալ կայ ուրիշ հայերէն թուական մը ի ՈՂ (1241)։

Մեր 29դ նշմարն կը ներկայացընէ Իշխանայ նաշխուն եկեղեցին, իբրև ընկղմած կամ պաշարուած անխնամ բնութեան բուսաբերութեան մէջ. իսկ 30դ նշմարն է եկեղեցւոյն հիւսիսային կողմն և գմբէթին մէկ մասն[1]։

(1) Այս երեք զուգակից շինուածոց, Էօշքայ, Խախուայ և Իշխանայ առաջին քննող և ստորագրող եղաւ Սարգիսեան Հ. Ներսէս Վարդապետն Մխիթարեան, իբր 28 տարի առաջ. որ և բոլոր վրացերէն արձանագրութիւնները գաղափարեց, և հրատարակեցաւ իր Տեղագրութեան մէջ (տպագրեալ յամի 1864, ի Ս. Ղազար), ուր կըրնան գտնել փափագողք՝ հանդերձ հայերէն թարգմանութեամբ։ Նոյն տարին Պետրպուրկի Ճեմարանի ընկեր Պ. Պրոսէ, զասոնք փառանկերէն թարգմանելով առանձին տպագրեց հանդերձ տեղեկութեամբ, և Հ. Ներսէսի օրինակած ձևով արձանա-

30. ԻՇԽԱՆ. ՊԱՏՈՒՀ. ՀԻԻՍԻՍ.

Այս Իշխանաց գեղն հայրենիք է Հայոց Գ. Ներսէս կաթուղիկոսի ի կէս Ի դարու, որ Շինող կոչեցաւ, մեծ և հոյակապ եկեղեցիներ շինելուն պատճառաւ. գուցէ իր մանկութեան ատեն իր Իշխանաց գեղին մէջ ալ հիմակուան եկեղեցւոյն տեղ կամ անոր քով հոյակապ տաճարներ տեսած էր։

դրութիւններն ալ վիմագրելով, այսու վերնագրով. Inscriptions Géorgiennes et autres, recueillies par le P. Nersès Sargisian, et expliquées par M. Brosset, Membre de l'Académie de St. Pétersbourg. 1864.

31. ԿԱՐՍ. ԱՐԵՒՄՏԱԿՈՂՄՆ.

ԿԱՐՍ·

Որոնք որ Ռուսաց և Օսմանեանց վերջի պատերազմները կը յիշեն (1854–55), չեն կրնար մոռնալ երկու քաղաք, որք երկար պաշարմամբ, պատերազմներով և կոտորածներով՝ այն երկամեայ դժընդակ դիպուածոց գլխաւոր թատերքն եղան։ Սեւաստոբոլ և Կարս. մէկն ծովու կողմանէ, միւսն ցամաքի. եթէ Սեւաստոբոլ այն պարագային մէջ առաջին տեղը բռնեց, Կարս ալ մնացեալ տեղեաց մէջ առաջինն եղաւ. շնորհօք իր դրից և ամրութեանն, և Ուիլիէմս անգղիացի զօրավարին (և յետոյ փաշային) ճարտար պաշտպանութեանը։ Կարսայ ամրութիւնն հռչակեալ է յարևելս, և Օսմանեանց ամրագոյն բերդն է Հայաստանի մէջ։ Հին հինութեան ժամանակն և հեղինակն յայտնի չէ, թուի թէ Կարք անուն ցեղի մը գլխաւորէ հինուած է, թէ և Վիրք Կարխա-քաղաքի անուանելով՝ Դրան-քաղաք կը թարգմանեն։ Ով ալ ըլլայ հինողն՝ շատ փորձ և բաղդաւոր աչք ունի եղեր. վասն զի աղէկ կշռած և ընտրած է տեղը, ի բնէ իսկ ամուր, Մեծագետոյն արմրկան մէջ՝ երեք կողմէն պատուած, իբր 5600 բարձր ծովու երեսէն. գետոյն եզերքն ալ յատակէն շատ բարձր և զառ ի վայր ըլլալով՝ չեն թողուր մօտենալ քաղքին. իսկ չորրորդ (արևելեան) կողմէն պարիսպներով և մարտկոցներով ամրացած է, նոյնպէս մօտի բլուրներն ալ բերդիկներով ամրացեալ են։ Երկայնաձև քառակուսի է բերդաքաղաքն, իբրև հարիւր չափ երկայն, կիսով չափ լայն. երկու պարիսպ ունի 5–6 ոտք թանձրութեամբ, հրաբղխեայ

քարերով չինուած, քառակուսի աշտարակներով պատսպարած, որոց 17 հատն են հարաւակողմէն, 9 հատ արևմուտքէն, իւրաքանչիւրն ալ տասն չափ յայնութեամբ. անկիւններուն և դրանց քով կանգնած են մեծագոյն աշտարակներ, որոց վրայ կ'երևին մեր նախնի իշխողաց արձանագրութիւնքն և խաչարձանք. բայց ԺԲ դարէ հին արձանագիր չերևիր։ Քաղքին արևմտեան հիւսիսային անկիւնը բռնած է միջնաբերդն, բարձր և անկոխելի քարաժայռի վրայ, որ առանց հրանօթի ռմբաձգութեան անառիկ է. մանաւանդ որ չորս կողմն ալ ուրիշ անկոխելի ժայռեր և գետոյն անդունդներն կան. որոց վրայ երեք ամուր քարաշէն կամուրջք ձգուած են, և մէկն հին է. քաղքէն հեռուն ալ ուրիշ կամուրջներ կան, մէկն ալ չինեց վերջի (1854-5) պատերազմին ատեն անգղիացի զօրավար մը (Lake)։ Բերդին հարաւային և արևելեան կողմը լայն խրամ մը կը պատի. մէկ կողմն ալ բոլորակ աշտարակի նման չինուած մը կայ, որ գերեզմանի տեղ կարծուի։ Երեք կողմէ քաղաքն արուարձաններ ունի. Օրրա-գափու՝ ի հարաւոյ, Պէյրաև-ֆաշա՝ արևելքէն, Սու-գափու՝ արևմուտքէն, գետոյն անդիի կողմը. այս ետքինս է Հայոց թաղ։

Վերջի պատերազմէն շատ վնասուեցան Կարսայ շէնքերն, որոց գլխաւորք սեպուէին՝ միջնաբերդին մէջ մզկիթն, զինուորանոցն, վառօդարանն, ծածկուած ճլամպուլայն (ջրամբար) 300 քարակտուր սանդղոց աստիճաններով մինչև ի գետն, և բերդապահին բնակարանն։ Ռուսաց առաջին անգամ առնելէն առաջ 17 թաղ կը բաժնուէր Կարս, ամենն ալ մէկմէկ մզկիթ ունէին, 850 տուն կար, 126 խանութ, 2 բաղնիք, 1 եկեղեցի Հայոց, 1 կարաւանատուն. հարաւային և արևելեան արուարձանաց մէջ ալ 11 թաղ կար Թուրքաց և Թաթարաց, իրենց մզկիթներով, 1 եկեղեցի, 4 կարաւանատուն, 430 խանութ, 800 տուն. իսկ Հայոց թաղն ունէր 600 տուն, 2 բաղնիք, շատ գործարաններ, ներկարաններ, աղօրիք, ջուլհակնոց, և այլն։ Տուներն ընդհանրապէս հողաշէն են, քառակուսի, և կրկնայարկ։

Ամենէն նշանաւոր շէնքն է գլխաւոր մզկիթն, որ էր Հայոց մայր եկեղեցին, հիմնած յամին 930, Ս. Աբաս թագաւորէն, և աւարտած 942ին. որուն ձևն

32. ԿԱՐՍ. ՀԱՐԱՒԱԿՈՂՄՆ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ ԱԱԿ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ալ նիւթն ալ արդէն շինութեան ժամանակակիցք շատ գոված են, ինչպէս կ'ըսէ մէկն[1]. «Վիմարդեան արձանօք, որձաքար պողովատաշ վիմօք, բոլորապէս գմբեթաւորեալ, պայծառ զարդուք, երկնանման խորան»։ Ցիրաւի վայելուչ և անսովոր ձև մ'ունի, դըրսէն ութանկիւնի բոլորակ, ներսէն քառաթև. գմբէթն բարձր և սրածայր՝ ութ կողմերէն կը վերանայ առանց սեան, 12 երես բաժնուած, որոց վրայ ներսէն 12 առաքելոց պատկերքն նկարած են, անոր համար Առաքելոց եկեղեցի ալ կոչուած է։ Այս եկեղեցւոյս համար է որ Ամիսիոնացի թագաւորն Բեր կամ Թեւդոս (Թէոդոս) նախատանօք. դեսպան խաւրեց առ Աբաս՝ որ նաւակատիքը չընէ, ինչուան որ ինքն գայ իրեն ծիսովը օրհնել տայ. սա ալ յարձըկելով Բերայ զօրաց վրայ՝ որ Կուր գետոյն եղերքը բանակեր էին, վանեց վռընտեց, և թագաւորը բռնելով բերաւ՝ ցուցընել տուաւ իր շինած եկեղեցւոյն վայելչութիւնը, Լաւ տես, ըսելով, վասն զի մէկ մ'ալ պիտի չտեսնես. և աչքերը խաւարցընելով՝ գլխուն գինը առաւ ու արձըկեց։ Այս եկեղեցիս զատ երկու երեք հատ ալ յայտնի հին եկեղեցիներ կան 'ի մզկիթ փոխուած. քանի մ'ալ ուրիշ հին շէնքեր բոլորովին աւրըւելու մօտ. մզկիթի մը մէջ ալ նահատակի գերեզման մը կը ցուցընեն։ Իսկ հիմակուան Հայոց եկեղեցին արուարձանին մէջ է բարձր տեղ մը։

Դար մը Բագրատունի թագաւորաց աթոռ եղող քաղաքն՝ պէտք էր որ Անոյ պէս շատ ձեռակերտ յիշատակարաններ ունենար. բայց իր վիճակն աւելի պատերազմական եղաւ. կըրնայ ըսուիլ թէ իբրև սպառազինեալ ծնաւ Կարս, և այնպէս մնաց հազար տարի ու կը մնայ մինչև այսօր, շատ պատերազմներէ անցնելով։ Նախ Ա. Աշոտոյ եղբայրն Աբաս՝ թագաւորուն վերջերը՝ ամրացուց զԿարս և ինքնագլուխ թագաւոր նստաւ. իր եղբօրորդին նահատակն Սմբատ Ա., հոս ապահովեց իր արքունիքը և տիկնայքը, Ամիշնի արշաւանաց ատեն. բայց երբ սա պաշարմամբ նեղեց բերդը, բերդապահն անձնատուր եղաւ, Ամիշին յափշտակեց գանձերը, տիկնայքը վաճառեց Սմբատայ. ասոր որդին Աբաս Ա. նորէն ամ-

[1] Ասողիկ։

բացուց և թագաւորեց ի Կարս, նոյնպէս իր որդին
ալ Մուշեղ հոս թագաւորեց, մինչ անոր երէց եղ-
բայրն Աշոտ Ողորմած՝ Բագրատունեաց բուն աթոռը
դրաւ յԱնի. յետ (24 տարւոյ) Մուշեղայ՝ թագաւո-
րեց իր որդին Աբաս Բ 45 տարի. ասոր ալ յաջոր-
դեց որդին Գագիկ՝ 35 տարի. որ Անի քաղքին Յու-
նաց ձեռքը մատնուելէն վերջը 20 տարի ալ նստաւ
հոս. սակայն նոր և աւելի զօրաւոր թշնամեաց ձեռ-
քէն ազատ չմնաց. Սէլճիւկ Թուրքաց ասպատակքն՝
յամին 1053 յանկարծօրէն յարձակեցան Կարսայ
վրայ, իրենց չար սովորութեամբ՝ Աստուածայայտ-
նութեան տօնից օրերը, և անպատրաստ գտնելով՝
կողոպտեցին քաղաքը՝ որ հարբստութեամբ լցուած
էր, «ի ծովէ և 'ի ցամաքէ ամբարեալ». շէնքերը
այրեցին, մնացեալ բնակիչքը ջարդեցին. վասն զի
մէկ մասը միջնաբերդը փախաւ և ազատեցաւ։ Տուղ-
րիլ Սուլտան աւարին համն առած՝ նորէն ասպա-
տակ խաւրեց Կարսայ վրայ՝ Արսուրան զօրավարին
առաջնորդութեամբ. այս անգամ Գագիկ անպատ-
րաստ չէր. դէմ խաւրեց իր զօրքերը, որ մեծ ջարդ
ըրին թշնամեաց մէջ. բայց յանդգնօրէն առաջ նե-
տուելով՝ 30 հոգի իրենց ազնուականներէն սպա-
նուեցան, մէկն ալ Թաթուլ անուն՝ «այր հզօր և
պատերազմասէր» բռնուեցաւ. բերին Սուլտանին
առջև. զարմացաւ սա կտրճին կերպարանաց և ան-
վախութեանը վրայ, և խոստացաւ անվնաս արձը-
կելու՝ եթէ իր զօրավարին խոցուած որդին բժշկուե-
լու ըլլար. — «Թէ իմ է զարկածն, ըսաւ Թաթուլ,
չէ կենաց. թէ այլում է՝ զայն ոչ գիտեմ». (եթէ
իմ ձեռքէս զարնուած է Արսուրայ որդին՝ անկարե-
լի է որ ապրի, իսկ եթէ ուրիշ մ'է զարկողն՝ այն
չեմ գիտեր)։ Ըսածն ստուգուեցաւ. երիտասարդն
մեռաւ. Թաթուլ 'ի մահ մատնեցաւ. բայց Տուղրիլ
անոր աջ բազուկը կտրելով՝ խաւրեց մխիթարանք
Արսուրանայ, «Թէ ի վատ բազկէ չէ՛ մեռեալ քո որ-
դին»։ Արժանի՛ գովեստ արժանաւոր քաջին։ —

Տուղրիլայ յաջորդն Էլփ-Արսլան առաւ զԱնի.
կարգն եկաւ Կարսայ. դեսպան խաւրեց Գագկայ
որ անձնատուր ըլլայ. գիտէր սա որ կարելի չէ եր-
կար ատեն այն ահեղ աղեղնաւորաց դէմ կենալ, և
Թաթլոյ անվրէպ բազուկներն միշտ չեն բուսնիր. ճար-
տարութեամբ բռնաւորին սիրտը որսաց. պալատան

ներքնատունը նստաւ սգազգեստ՝ դեսպանին եկած ատեն, կարծեցընելով որ Տուղրիլի մահուան վրայ է սուգն. հաւատաց գթացաւ Ասլան, և խաղաղութեամբ եկաւ ի Կարս. Գագիկ մեծ հանդիսիւ ընդունեցաւ զնա և կերակրեց բոլոր բանակովը, մէկ անգամուն ինչուան 100,000 դահեկան (ոսկի) ծախս ընելով, և յետ դարձուց աշխարհաւերը։ Բայց չուզելով որ անգամ մ՚ալ փորձանքի ընկնի, Ցունաց վաճառեց իր քաղաքն ալ գաւառն ալ, և փոխարէն առաւ Կապադովկիոյ մէջ երկիր մը։ — 20 տարի վերջը (1084) Ցոյնք ալ Վրաց ծախեցին զԿարս. առնցմէ առին Թուրքք և պահեցին մինչև ԺԳ դարուն սկիզբը, յորում (1208ին) Զաքարէ և Իւանէ առին զԿարս Վրաց և Հայոց զօրօք. բայց 30 տարի վերջը (1239) Թաթարք Անին առնելէն ետև եկան ի Կարս, և թէպէտ դաշնադրութեամբ առին, բայց կողոպտեցին հանդերձ արիւնհեղութեամբ։ — 15 տարի վերջը հոս կը նստէր իրենց մեծ զօրավարն Բաչի-Նուին, երբ Ա. Հեթում թագաւորն Կիլիկիոյ եկաւ իրեն այցելութեան՝ ի Թաթարստան երթալու ատեն։ Թաթարաց և Թուրքաց ձեռքը մնաց Կարս անաւեր՝ իր ամրութեամբը, նաև Լէնկթիմուրի ատեն (1394), որ պաշարմամբ չկրցաւ առնուլ, այլ պայմանաւ անձնատուր ըրաւ անոր բերդապահը (Ֆիրուզպախթ)։ Անկէ ետև ԺԵ դարուն մէջ Թուրքաց և Վրաց կռուոյ կէտ մ՚եղաւ Կարս, ինչպէս ետևի դարերուն մէջ ալ՝ Օսմանեանց և Պարսից. ասոնք շատ անգամ պաշարեցին, նաև իրենց մեծ և յաղթող թագաւորաց ատեն, ինչպէս Շահաբաս (1603), Թահմազ Ղուլի (1735) բայց չկրցան առնուլ. և ոչ ալ Ռուսք 1807ին. բայց 1828 պատերազմին ատեն Բասքևիչ երեք օր պաշարելով, և արևելեան հարաւային կողմը տկար գտնելով ու անկէ յարձակելով՝ ստիպեց զՕսմանեանս անձնատուր ըլլալու (23 յունիսի). և երբ քանի մ՚ամիս ետքը Ադրիանուպոլսոյ դաշնադրութեամբ նորէն Օսմանեանց թողուցին զԿարս, կ՚ըսեն թէ Բասքևիչ լացած ըլլայ։ Բայց Ռուսք ելլելու ատեննին՝ ոչ միայն շատ բան վերուցին քաղքէն, այլ և ամրութեանց մէկ մասը քակեցին. անոր համար վերջի նոր պատերազմին ատեն (1854–5) Անգլիացի փաշայն Ուիլիէմս նորէն ամրացուց, չորս կողմն ալ մարակոց-

ներ կանգնեց, որով վեց ամիս դիմացաւ Ռուսաց շատ անգամ յարձակմանցը, որք և անգամ մը 7000 մարդ կորուսին անոր պարսպաց տակ. և վերջապէս սովով նեղելով առին (28 նոյեմբ.) և երբ նորէն Թողուցին Օսմանեանց (7 օգոստոսի, 1856) ամրոցները աւերշտրկեցին, Թուրքաց արձանագիր քարերը քակեցին՝ Կարսայ հակառակորդ Կիւմրի բերդին հագուցին։ Գետինը փորելու ատենն ալ հողէ ման մը գտան՝ Վրաց Ռուսուդան Թագուհւոյ պղնձի դրամներով. այս Թագուհւոյս ատեն (ԺԳ դար) պարսպաց նորոգուելուն վկայ է ինչուան հիմայ աշտարակի մը վրայ մնացած հայերէն արձանագիրն. «Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ Թագաւորին մերոյ Ռուսուդանայ՝ մեք Կարուց քրիստոնեայքս մեծ և փոքր՝ շինեցաք զբրջներս, 'ի յիշատակ մեզ և պատրոնին մերոյ»։

Կարս՝ Կարնոյ՝ և անով բոլոր Փոքր Ասիոյ՝ պատուար և դուռ կըրնայ ըսուիլ Օսմանեանց արևելեան հիւսիսային սահմաններուն. ամրութեամբ հիմայ առաջին քաղաք է իրենց վիճակած Հայաստանին. և մեր հին աշխարհին մէջ ամենէն առողջ և ուժով մնացեալ տեղն կըրնայ ըսուիլ. միանգամայն և մէկ հատիկ ողջ մնացած Հայոց Թագաւորանիստ քաղաքաց մէջ, որոց շատն բոլորովին աւերակ են, ոմանք կիսաւերակ, կամ անշուք գիւղ մը դարձած։ Քաղաքական վարչութեամբ և առևտրի կողմանէ ալ մեր աշխարհին գոնէ երկրորդ կարգի քաղաքաց մէջ նախադասներէն է. Վրաստանի և Ռուսաց բաժնին մօտ ըլլալով՝ աւելի շատ զանազան ազգաց կերպարանք կ'երևան 'ի Կարս քան 'ի Կարին. Կովկասային ժողովրդոց դրացի և իջևան եղած է շատ դարերէ վեր, Պարսկաստանի վաճառականաց ալ գործակից։ Միով բանիւ՝ շատ տեսութեամբք, թէ բնական, թէ քաղաքական, թէ պատերազմական, թէ հայրենական, մեր աշխարհին ամենէն նշանաւոր շինից մէկն է Կարս, արքայաշուք քաղաքն Վանանդայ։

Մեր նշմարաց 31դ թիւն կը ներկայացընէ Կարսայ արևմտակողմեան տեսքը, հանդերձ բերդովը. իսկ 32ն Կարսայ հարաւային կողմը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ ԱԱ ԳԻՏ

33. ՏԵԿՈՐ.

Ս. Էջմիածնայ Մայր Աթոռ
Սիրեցեալ Մատեան

ՏԵԿՈՐ.

Ներակայ դաշտին հարաւակողմերը և Երասխ գետէն քանի մը ժամ հեռու՝ հին մեծամեծ գեղեր կան Հայոց, որք թէ և հիմայ անշուք և ամայի եղած են, ժողով մը հիւղերու կամ կէս գետնաթաղ տանց, այլ իրենց հին և հոյակապ սրբազան շէնքերով՝ շատ լաւ կ՚իմացընեն որ ներկայիս աննման դարեր տեսեր են. ազատութեան, հարստութեան և բարեպաշտութեան ատեն ծներ զարգացեր են. թէպէտ և պատմութիւնն շատին անունը կը լռէ, կամ հազիւ կը յիշէ։ Ասոնցմէ մէկն է Տեկոր, Անիէն չորս ժամ հեռու դէպ ի հարաւ արևմըտից, Երասխէն ալ աւելի հեռու, պզտիկ գետակի մը եզերք, որ յԱխուրեան խառնուի. այս (արևելեան) կողմէն՝ Տեկորոյ սահմանը բաց է, մէկայլ երեք կողմերէն լեռնաբլրովք պատած է. չորս դին հիմայ գետինն կէս մշակած կէս անբնակ, միայնացեալ լռին տեղ մը կ՚երևայ. անոր համար ալ աւելի մեծ և փառահեղ կ՚երևի ի բնէ իսկ մեծ և ամրաշէն եկեղեցին, զոր ցուցընեն մեզի 33դ և 34դ Նշմարքս. և որ մեր նախնեացմէ բաւական անարատ հասած և հնագոյն յիշատակարանաց մէկն է. և ոչ մեր միայն, այլ և առհասարակ քրիստոնէութեան տաճարաց. որով և սրբազան ճարտարապետութեան հնագոյն և ընտիր ձեռագործաց մէկն. որուն շինուածքն զարմանալի, շէն մնալն գումէկն.

ցէ աւելի զարմանալի, այնպիսի բազմակոխ, բազմակոխ բազմաւեր դաշտի մը մէջ։ Անոյ ծերագոյն եկեղեցիներն ասոր քով երիտասարդք են։ Քանի՞ հազար անգամ արևն իր ցորեկուան և գիշերուան կշիռքն հաւասարեցուցեր է այն լայնաձև գմբէթին վրայ. հազարամեայ դարու վրայ քանի՞ հարիւրամեայ դարեր ալ անցեր են, իրենց ձիւներն անոր գլխուն և ծաղկներն ոտքին սփռելով, և նա կանգուն կեցած խորհրդաղգած լռութեամբ դիտեր է մեր յետին նախարարաց, Սասանեանց, Արաբացւոց, Բագրատունեաց, Թուրքաց և Թաթարաց գործելն և անցնիլը, մինչև Պարսից և Օսմանեանց և Ռուսաց յետին հանդէսները։ Ինքն շատերուն վրայ զարմացած է բարոյապէս կամ դիմառնութեամբ, այլ իր վրայ բաւական զարմացողք չեն եղած, ինչպէս որ կ'արժէր, և ինչպէս որ փափագիմ այսուհետև։ Թէպէտ սրատես ճարտարապետք ոմանք տեսնելով Տեկորոյ եկեղեցւոյն պատկերը՝ ճանչցեր են անոր ճարտարուեստ կազմուածքը և յարգը, այլ կարծեմ ոչ ըստ բաւականին՝ հնութիւնը, որ աւելի ալ կ'աւելցընէ զյարգն առաջի հնախոյզ արուեստաւորաց. զարմանք կը բերէ ինձի ճարտար Փռանկ արուեստաւորն Դեսիէ, որ Տեկորոյ պատկերներն ալ մեղի կ'ընծայէ, երբ կ'ըսէ թէ տեղացի քահանայ մը եկեղեցւոյն մէկ դրան վերայ կարդալով արձանագիր մը՝ միայն այսչափ իմացեր է որ շինուած ըլլայ յամին 1242!. եթէ հեղինակին գրոց թիւն ալ սխալ չէ տպագրուած։

Արդ մեր ազգայնոց մէջ ամենէն հմուտ և հաւատարիմ քննող և գաղափարողն (Հ. Ներսէս Արդիսեան) այդպիսի նոր թուական գտած չէ. եօթն արձանագիր օրինակեր է, որոց վեցն թուական ունին, և սկսեալ յ' 971 տարւոյ (ՆԻ) հասնին ի 1036 (ՆԶԵ). այս է յետին թուականն իբրև 840 տարուան, իսկ առաջինն ամբողջ 900 տարուան (971=1871)։ Սակայն արձանագրողք, — որոց առաջինն է Խոսրովանոյշ թագուհի՝ կին Աշոտոյ Ողորմածի, երրորդն Կատրանիդէ թագուհի (1008) կին Գագկայ թագաւորի, — եկեղեցւոյ շինութիւն կամ նորոգութիւն չեն յիշեր, այլ միայն իրենց նուէրքէ և հարկերէ ազատ թողուն զՏեկոր։ Եկեղեցւոյն շինութեան յիշատակարանն թէ 4 քիչ մը խախտած՝ անոր մեծ ա-



34. ՏԵԿՈՐ. ՃԱԿԱՏ ԵԿԵՂ.

Ազգային գրադարան

ելեմտեան դրան վրայ փորագրած է, և այն միայն է առանց թուականի. վասն զի և Հայոց թուականէն առաջ գրուած է. այսինքն Քրիստոսի 551 թիւէն առաջ։ Վասն զի միայն այն ժամանակին զուգահանդիպին արձանագրութեան մէջ յիշեալ Յովհաննէս կաթուղիկոս մը, Յովհաննէս Արշարունեաց եպիսկոպոս մը, և «Սահակ Կամսարական (որ) շինեաց զայս Վկայարան». ապա Տեկորոյ տաճարն 1350 անգամէն աւելի գարուն ողջուներ է. և շնորհօք իր քաջ ճարտարապետին դեռ կանգուն է, և մեծ ու մխիթարական բաղդով դեռ նուիրեալ իր Փեսային՝ Քրիստոսի։

Ներքին ձևով թէ և քիչ շատ նման է Անոյ կաթուղիկէին և այլոց, բայց գմբէթն կ'իմացընէ իր մեծ հնութիւնն. վասն զի Անոյ եկեղեցեաց և ուրիշներու պէս՝ շատ սրաձև չէ, այլ աւելի տափակ ու լայն, որով հնագոյն բիւզանդական գմբեթաց ձևին կը մօտենայ, միշտ հայկական ոճն ալ պահելով։ Նշանաւոր են ըստ ճարտարապետական դիտողութեան ներքին կամարաց բոլորաձևութիւնն, և արտաքնոցն (որ դրանց վրայ կ'երևին) կիսաբոլորէ աւելի կլորութիւնն. կողմնական սիւներն ալ իրենց սեփական ձև և վայելչութիւնն ունին։ Ինչպէս կ'երևի նշմարացս վրայ՝ եկեղեցւոյն չորս կողմը ծայրէ ծայր կը պատեն հինգ քարեղէն աստիճանք, ոմանք աւրուած, ոմանք գետին թաղուած, մաս մ'ալ ամբողջ մնացած։

Մեծ դուռն արևմուտքէն է, որ հիմայ խցուած է. երկու դուռ ալ կողմերէն ունի, որք բաց են. մէջն երկայնաձև քառակուսի է առանց թևի. երկայնքն է իբրև 26 չափ, լայնքն 16, պատերուն թանձրութիւնն ալ չափ մը. գմբէթն չորս քառակուսի ստուար սեանց վրայ բարձրացած է, որոց խարիսխն է 2½ չափ հաւասար։ Բեմին կամ խորանին պատերն աւելի թանձր են. խորանն կիսաբոլորաձև դուրս ելած է քառակուսիէն. այսպէս ալ երկու քովէն պահարանքն դէպ ի հիւսիս և հարաւ երկայնած, և ոչ յարևելք, ինչպէս են Անոյ եկեղեցեաց. այս պահարանք կամ նշխարատունք նեղկուկ են, 2 չափ ընդ լայնն և վեց ընդ երկայն. վրանին ալ մէկ մէկ ուրիշ սենեակք կան նոյն չափով։ Եկեղեցւոյն ներսն ալ դուրսն ալ ամենէն մեծ զարդն՝ է պարզութիւնն. կը թնայ ըսուիլ թէ ուրիշ քանդակ ալ չկայ, բաց ի

դրանց շրջանակէն և սիւներէն. սիւներն ալ ազատ չեն, այլ պատին կիպ, եօթն եօթն հատ երկու կողմերը, իսկ ճակատը փոխան կլոր սեանց՝ վեց հատ քառակուսի որմնասիւն կայ. միջին և կողմնական դրանց բարաւորքն ալ զուգակ սիւնակներ ունին, բոլորն մէկէն տասն զոյգ։ Գմբէթն ճիշդ ժամատան մէջ տեղն է, այսինքն մեծ դրան և բեմին աստիճանին միջոցը, որ է ըսել եկեղեցւոյն բուն քառակուսոյն միջոցը, ի բաց առնելով բեմին և իր քովի պահարաննաց մասը։

Մեր 33դ նշմարն կը ցուցընէ Ցեկորոյ հնապանծ եկեղեցւոյն երևոյթը. 34դն ալ անոր պայծառ և վայելուչ ճակատը, որ 13 և կէս դարէ վեր դիտելով զարևելս՝ անոր անմաշ. ճառագայթից շնորհքն առած կ'երևի։



35. ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ.

Մատենադարան Մաշտոցեան

ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ·

Ախուրեան գետն որ զԱնի կը պատէ յարևելից՝ գրեթէ հաւասարապէս հեռու թէ անկէ և թէ Տեկորէն՝ ի հարաւ ինքնալով կը խառնուի յԵրասխ· այս խառնըրդոց երկու անկիւնները մէկմէկ մեծ և բազմաշէն բնակութեան տեղիք կանգնեցան՝ 18 դար առաջ, մէկ ժամանակ և մէկ անձի հրամանաւ, որոյ անուամբ և կոչուեցան Երուանդաշատ և Երուանդակերտ։ Երուանդ մեր պատմութեան մէջ խառն յիշատակ մը թողած է, ի ծնէ մինչև ի մահն· ծնունդն, կ՚ըսէ պատմիչն, թէ և Արշակունի մօրէ, այլ Հայրն անծանօթ ըլլալով՝ խառնակ համարեցաւ։ Բայց ինքն յաջող և կտրիճ անձ մ՚ըլլալով, միանգամայն և առատաձեռն սիրելի եղաւ Թագաւորին (Սանատրկոյ), և իշխանաց· որք դէմ չկեցան իրեն՝ երբ յետ Սանատրկոյ Թագը յափշտակեց· բայց նախ ինքն ճանչցաւ իր բռնաւոր և յափշտակող ըլլալը· և յափշտակել չտալու համար՝ սկսաւ իր կեանքը և բնակութիւնը ապահովելու և ամրացընելու ջանալ։ Հայոց հին մայրաքաղաքն Արմաւիր՝ Երասխ գետին հեռանալովն՝ անջուր և անյարմար թուեցաւ իրեն· թողուց զայն, և առաջ անցնելով յարևմուտս՝ Շիրակայ դաշտին վարի ծայրը, յիշեալ գետախառնըրդոց անկիւնները իրեն դաստակերտները կանգնեց։ Արևելեան անկիւնը դրաւ իր զբօսանաց աւանը՝ Երուանդակերտ, իսկ արևմտեան անկիւնը՝ բուն Թագաւորական քաղաքը, Երուանդաշատ։ Հոս գետան-

կեանց միջոց քարաբլուր մը կար, զոր շատ յարմար գտաւ ամրութեան. երկու գետոց ջրեղէն պատերէն զատ՝ քարէ պարսպօք ալ պատեց. և պարսպէն ներս քարաբլրին ստորոտքը զանազան տեղ փորելով՝ գետէն ջուր բերաւ ծածուկ ճամբաներով. վրան բերդ մը շինեց բարձր պարիսպներով, պղնձէ դռներով և երկաթէ սանդղոք. ուսկից անփորձ և թշնամի մարդ չէր կրնար ելնել. վասն զի սանդղոց աստիճանաց միջոց որոգայթներ կար՝ որք կը բռնէին անզգոյշ կոխողը. իսկ թագաւորին և ծառայից համար՝ որոշուած էր սանդուղն կամ կոխելու տեղն։ Բերդին մէջ դրաւ Երուանդ իր արքունիքը, վարն ալ հաւատարմաց և ուրիշ մարդկան բնակութիւն թողուց. միայն չուզեց որ շատ մարդ գայ հոն պատճառաւ հանդիսից, անոր համար մեծամեծ կուռքերն ալ՝ որ մայրաքաղաքին մէջ կը պատուէին, հոն չմըտուց, այլ քանի մը ժամ հեռու՝ անոնց ալ զատ աւան մը շինեց, որ Բագարան ըսուեցաւ, և պաշտօնեաներները հոն կը խաւրէր։ Այս ամենայն զգուշութիւնք բաւական չեղան զինքը իր փափագին հասցընելու. ոչ ամրութիւնքն և ոչ որոգայթքն ապրեցուցին զինքը։ Թագաւորութեան արդար ժառանգն Արտաշէս՝ իր Այրաքաջ Սմբատ սպարապետին ձեռօք յաղթեց հալածեց զնա մինչև յամուր բերդն և դղեակն. բայց բերդապահք անձնատուր եղան, դռները բացին, անշուշտ ճամբան ալ ցուցին անվտանգ վեր ելնելու. իր լարած որոգայթից մէջ բռնուեցաւ բռնաւորն և սպանուեցաւ. իրեն հետ իր քաղաքին, Երուանդաշատայ փառքն ալ մարեցաւ. վասն զի թագաւորական աթոռն հաստատեցաւ յԱրտաշատ։ Իսկ Երուանդայ շէնքերն՝ արքունի կալուածք եղան. զորս յետ 250 տարւոյ՝ մեծն Տրդատ պարգևեց Կամսարականաց ցեղին. որք իրենց իշխանական աթոռը հաստատեցին յԵրուանդաշատ. և թէ ոչ յետ շատ ժամանակի՝ Արշակ թոռնորդին Տրդատայ յափշտակեց զայն անոնցմէ, բայց իրմէ զօրաւորն ալ և իր անհաշտ թշնամին՝ Շապուհ Պարսից թագաւորն իրմէ խլեց, և բոլոր շէնքերը կործանել տուաւ, գերի տանելով բնակիչքը, որք շատ բազմաթիւ էին, և մեծ մասն Հրեայ։ Այնուհետև չիյիշուիր Երուանդաշատ իբրև շէն տեղ մը, այլ գուցէ 1500 տարիէ վեր աւերակ մնացեր է, հազիւ 300 տարի պայծառանա-

լով. և ժամանակն գետինը բարձրացընելով՝ զինքը ծածկեր է հողով և քարամբք. որոց տակ շատ հաւանական է թէ իր փառաց փչրանքն ցրուած պահուած են. և մեծ աշխատութեամբ փորուելով՝ կարելի է տեսութեան և յիշատակաց արժանի բաներ գտնել։ Իսկ պարզ աչօք դրսանց երևցածն է ահաւասիկ Նշմարս ՅԾդ. յորում դեռ կ'երևի պարիսպներուն մասն սև և կարմիր լաւայի մեծամեծ քարերով, քարաբերլրին մէջ փորուած ջրամբարի տեղուանք, կարմիր քարէ կամուրջի մը կտոր Երասխայ վրայ, քանի մը բնակարանաց և բերդին և աշտարակաց մնացորդք։ Բերդին քարաբերլրին քով ուրիշ բլուր մ'ալ կայ, վրան սեաւ լաւայի քարերով գերեզմաններ, ինչուան ԺԵ դարու արձանագրութեամբ. թերևս կռապաշտից գերեզմանք ալ ըլլան հոն։ — Հիմայ Երուանդաշատայ ամենէն մօտ գեղն կոչուի Հաճի-Պայրամ։

36. ԿՈՂԲ.

— ՆԵՄԱՐ 36. —

ԿՈՂԲ.

Հայաստանի երկրաբանական հանգամանաց ամենէն նշանաւորներէն մէկն է աղաշատ ըլլալն. ամեն գիրքով և ձևով աղեր ունի, թէ լիճ, թէ գետ, թէ աղբիւր, և թէ քարաղ։ Այս ետքի տեսակէս, այսինքն բուն աղի հանք, կամ՝ աղի լեռներ շատ կան ի Հայս. գլխաւորներն են Նախիջևանայ և Կողբայ։ Երուանդայ շէնքերէն քիչ հեռու է Կողբ, Երասխայ հարաւակողմը, հին ճակատք գաւառին մէջ. որ իբրև մարդաշէն տեղի ունեցեր է մեծութիւն և պայծառութիւն, հիմայ անցած և ծածկուած. վասն զի հին Կողբն ալ ամայութեանց և աւերակաց կարգանցեր է, թողլով շէնքերու մնացորդներ, որոց մէջ կ'երևին երեք եկեղեցիք. մէկն մեծ և կարմիր քարերով շինուած, գուցէ Է դարէն մնացած, յորում Հերակլ կայսր պարգևեց Եղրի կաթուղիկոսի այս գեղս և իր Աղահանքը։ Այս աւերակաց վրայ կը թափառի՝ մեր ամենէն յատակախօս և հայկաբան իմաստասիրին համբաւն, որ է եղծիչն աղանդոց՝ Եղնիկն աշակերտ Ս. Սահակայ և Մեսրովպայ։ Հիմակուան Կողբն Բարդող լերան ստորոտը բոլորած

է, կաւէ տուներով և աշտարակներով։ Աղահանք լեռն կամ բլուրն գեղին արևելակողմն է իբր կէս մղոն հեռու, և կանաչ ու կապուտագոյն հողերով զատուած երեք կարգ քարաղի կը ցուցընէ, որք Նախիջևանայ աղահանից պէս՝ Նահապետաց ժամանակէն ի վեր կը փորուին, կը կտրուին և կը տարուին, և առ նուազն տարին 50,000 ֆրանգի եկամուտ կու տան։ — 36դ Նշմարս կը ցուցընէ զԿողբ հանդերձ աղահանք լերամբ, միանգամայն և իր գերեզմանօքը։ Կը պակսի միայն Եղնակայ Կողբացւոյ մահարձանն, կամ մանաւանդ անմահարար յիշատակաց արձանն։

ՀԱՅԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՍՍՀ ԳԱ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ Գիտ.ԳԱ
ԱՅՍՊԵՍ ԱՆՎԱՆՎԱԾ ԳՐԱԴԱՐԱՆ